



Ա. Գ. Ի. Ն.

Թ. ՏԱՐԻ 1970 ՕԳՈՍՏՈՍ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 8

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزاجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԴՐԱՆԱԿՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒՅՍՏԻ

ՎԱՐՔԷ ԽՄԲԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԲԱԳԻՐ
 Գ. ՍՆԱԳԵՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԳԱՄՆԵՐ
 Յ. ԿԵՂԱՐԿ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ
 Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ
 † ԵՒ ՊՅՆՁԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ա. ՀԱՅԿԱԶ
ԱՐՄԱՆՑ
Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ
Ռ. ԳԱՌՕՆԷ
Ա. ՏՕՆՈՑԵԱՆ
Մ. ԷՍԼԻ
Ա. ԳԱՌՕՆԷ
Է. ԻՈՆԵՍՔՕ

Խմբագրութեան հասցէ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban
 Հեռաձայնի թիւ 296898

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ք. ՅԱՐԻ. ՔԻՒ Ե

ՕԿՈՍՅՈՍ 1970

ԳԷՑՐՈՒԹ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

Մ Ա Տ Ա Մ Փ Ո Մ Փ Ա Տ Ո Ւ Ր

ՖՈՆԹԱՆԱՆԵՐՈՒ ՀԱՐՍԸ

(ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ)

«Աստուած մեզի տուած է մեր ազգականները, բայց փառք Իրեն, կըրնանք ընտրել մեր բարեկամները», կ'ըսէ իմաստուն առակ մը. լաւ է, բայց կարծեմ լման չէ, պէտք է տնոր վրայ բան մը աւելցնել նաև դրացիներու մասին: Այս վերջինները, տարին տասներկու ամիս, մեղի հետ են, կամ մեր մօտ: Ազգական կամ բարեկամ, որքան ալ սիրելի ու նուիրուած ըլլան, երբեմն հեռու, մղոններով հեռու տեղեր կ'ապրին: Դրացին է, որ մօտէ է, ու, ի պահանջեալ հարկին, տանգ մէջ, պատրաստ՝ զեզի օգնելու:

Հաւատարիմ բարեկամն ու լաւ դրացին անգնահատելի են, կասկած չկայ այդ մասին: Ես գրած եմ անոնցմէ շատերուն մասին, եւ, ձեռով մը, անմահացուցած զանոնք:

Մեր լաւ բախտէն, վերջին 20-30 տարին էլ՝ ըստ Մթրիթի մեր դրացիները, մեծ մասով, լաւ մարդեր են եղած: Մեր յարաբերութիւնները անոնց հետ եղած են բարւոյս, հարկը ներկայացած պահուն՝ օգնած ենք իրարու, եւ, բաժնած մեր վիշտերն ու ուրախութիւնները:

Քանի մը տարի առաջ, երբ ես մեր տան մուտքի մեծ դրան վերեւի մասը ներկելու համար սանդուխին վրայ էի ելած, ու, անխոհմարար, մէկ կողմիս վրայ շատ ծոկեցայ հեռաւոր անկիւն մը հասնելու համար, սանդուխը սահեցաւ ու ես ինկայ վար: Ինկայ վար ճիշդ այն տեղիս վրայ, որ, պօշուենայու պարագայիս, պոչս բուռած ըլլալու էր: Հրաշք էր, որ ցաւէն չուշաթափուեցայ: Այդ ահաւոր պահուն, առաջին անգամ ինձի օգնութեան հասնողը մեր աննման դրացի Լա Ֆոնթաններու աւազ որդին՝ Փրէնքը եղաւ:

Բախտէս արդէն բժիշկ կը համարուէր: Իրաւ է, թէ դեռ վերջնական վկայական ու բժշկութիւն կիրարկելու արտօնագիր չունէր, բայց իր ըրածն ու ընկերքը արդէն գիտէր, աւարտած էր համայնարանը ու հիւանդանոցի մը մէջ փորձարկութեան շրջան մը կ'անցընէր իրմէ աւելի բան գիտցողներու վերին հակողութեան տակ: Յետոյ, առ ալ կար, որ սանդուխէ մը վար ինկողի մը արուելիք նախնական դարձանումը ի՞նչ բան էր, որ չգիտնար... Կնոջս աւագանգը լսելով, անմիջապէս վրայ հասաւ՝ ու ըրաւ պէտք եղածը. իմ գլխաւոր բախտաւորութիւնս՝ անոր այդ պահուն տունը ըլլալն ու իմ կորուած սովոր չունենալն էր: Երբ իրեն հարցուցին, թէ ինչպէ՞ս պատահեցաւ, որ տունն էր այդ պահուն, ժպտեցաւ՝ ու շատ մեղմ ձայնով մը, գրեթէ փսփսուքով ըսաւ, թէ տուն եկած է ամուսնանալու համար իր ծնողքէն արտօնութիւն առնելու:

- Չրան՝ ս, հարսնիք պիտի ընե՛նք, — ըսի դուարթօրէն:
- Եթէ Տէրը կամի:

Թող տարօրինակ չթուի ձեզի, թէ Ամերիկայի ու քսաներորդ դարու մէջ նման մարդեր կան գեռ. բայց փաստն այն է՝ որ կան: Իտալացիք մեզի նման քիչ մը աւանդապաշտ են. ընտանեկան կապը ամուր է իրենց մէջ. կը յարգեն իրենց մեծերը ու յաճախ կը հետեւին անոնց խորհուրդին: Անոր վրայ աւելցուցէք նաեւ այն պարագան, որ Տաքթըր Յրէնք գեռ մեծ վաստակ մը չունէր. հիւանդանոցէն ստացածը անուանական բան մըն էր ու յաւելեալ ծախսերու համար դեռ իր ծնողքին օշնութեան կը կարօտէր. տունն դալ՝ ու քանի մը ժամ կամ օր մնալէ ետք, երբ ծնողքին զմնաք բարովչ ըսելու համար կը գրկուէր մօրը հետ, մայրը, ամուսնոյն տուած յիսուն կամ հարիւր տոլարնոցը, իրր թէ դադարեցին, կը սահեցնէր Յրէնքի գրպանը: Բնական է, այս պայմաններուն մէջ, չէր կրնար ակնկալել, որ առանց ծնողքի արտօնութեան ամուսնանալէ ետք, հարսնիքի ու անոր յաջորդող անխուսափելի ծախսերն ալ հոգային անոնք:

Ուրիշ խօսքով, բժիշկը քիչ մը կախեալ, քիչ մը հնազանդ, օրինակելի դաւակ էր, ու մամա ու փափա Ծոնթանայի սոսերուն թեթեւ մը սխտորարոյր շոգին:

Իրենց տան պատուհանէն յորդողը, ընտանեկան վէճերու եւ կռիւններու ազմուկը չէր, այլ՝ մամա Ծոնթանայի սոսերուն թեթեւ մը սխտորարոյր շոգին:

Մամա Ծոնթանան գործունեայ կին էր: Հակառակ դրել կարգալ չգիտնալուն, կարի աշխատանոց կը բանեցնէր: Կ'ըսէին, թէ նուազագոյնը 30 ազնիկ կ'աշխատեցնէ նուազագոյն վարձատրութեամբ. բայց այդ մեր գիտնալիք բանը չէր, մեզի վերաբերող բան չէր... Մեր ինչո՞ւն պէտք, թէ ինք ի՞նչ կը վճարէր իր գործատրներուն... Երբ մենք լողազգեստի, գիշերանոցի կամ նման բաներու պէտք ունենայինք, կը տեղեկացնէինք իրեն, ու ան, յաջորդ օրն իսկ, կէս գինով, մեր ուզածը կը հայթայթէր:

- Բայց մամա Ծոնթանա, — կ'առարկէր կինս երբեմն:
- Չայնդ կորէ՛, ես ըրածս գիտեմ:
- Վնաս չընե՛ս...
- Հող մի ընէր, ձրի ալ տամ, դրամագլուխէն բան չի պակսիր:

* *

Փափա Լա Ծոնթանան ալ կահապարձօքրձ կաւ կարպետ, մասնագէտ իր հիւղին մէջ: Նոր, արդիական ոճով, կրնար սքանչելի կարասիներ պատրաստ-

տեւ, բայց անոնց վրայ աշխատել չէր սիրեր. իր գործը հնութեանց հետ էր: Առաջ չէր նայիր, այլ՝ ետ, 14-րդ կամ 16-րդ դար: Կը պատահէր, որ այդ հին օրերէն մնացած կարասիի մը մէկ ոտքը արկածով կտորէր կամ վնասուէր, անոր տէրը, ինչպէս հիւանդի մը պարազանները լաւ, վստահելի բըժիշկ մը կ'որոնեն, իրենց հիւանդը անոր յանձնելու համար, այնպէս ալ, վնասուած կարասիին տէրերը, հեռաձայնի ընկերութեան մեծ գեղին գրքին մէջ գրուած ծանուցումները ուսումնասիրելէ ետք, իրենց մասը կը ընէին Մր. Լա Փոնթանայի անուան վրայ ու կը հեռաձայնէին իրեն:

Սինյոր Լա Փոնթանան սակարկութեան չէր հաւատար. արեւելքի չէ՛ր վերջապէս... Իր առաջին խօսքն ու գինը՝ նաեւ վերջինն էին:

Իր արհեստանոցը տունէն միայն չորս փողոց հեռու էր, ու ես, յաճախ, եղած եմ հոն՝ դիտելու համար, թէ ինչպէ՞ս կ'աշխատէր ան, թո՛ւ չհասրճեիրու կը դիմէր, նոր շինած մասը հինգ-վեց դարու հնութիւն ունեցող մայր մասին նմանցնելու համար:

— Նախապայման է, որ երկու մասերն ալ միեւնոյն տեսակի փայտով շինուած ըլլան, — բացատրեց ան օր մը ինձի, — բեւեկներն վրայ ընկող շի կարկուտիւր, կաղնիին վրայ՝ դղիի չ'երթա՛ր... Եթէ հարկ ըլլայ, վեց ամիս կը սպասեմ՝ մինչեւ որ ուզած փայտս գտնեմ կամ բերել տամ:

Գանի մը անգամ ալ, Տիկ. Փոնթանայի խնդրանքին վրայ, իր կէսօրուան ճաշը արհեստանոց եմ տարած:

— Մր. Էտրմ, փափան տուն չեկու, հաւանաբար շատ է գրադուած, կամ յաճախորդի կը սպասէ, անօթի է, կը հաճի՞ս իր ճաշը տանիլ...

— Եթէ թաքսիս դրամը խոստանաս տալ, կը տանիմ:

— Աղէ՛կ, կու տամ, տար:

Երկու վայրկեանէն կ'ըլլայի խանութը:

— Մր. Փոնթանա, ճաշդ բերի, ձգէ այդ գործը, չպաղած՝ կեր:

— Կրացիա ամիլիօ, մո՛լթէ կրացիա, (չնորհակալութիւն բարեկամս, շատ շնորհակալութիւն):

Կ'տունէր շոգի արձակող սրահեթիի մեծ պնակը առջեւ, ու ճարտարութեամբ մը, որ նախանձս կը շարժէր, խմորեղէնի լարերը կ'որոհէր պատասաքաղին շուրջ ու հօ՛փ, կը կլէր: Կը խմէր կարճիւր զինն ու, բերանն ու պեխերը սրբած պահուն, փառք կու տար Ամենակալին:

Յետոյ կը քննար մօտ մէկ ժամ:

Աշխատելու իր կերպը Ամերիկայի հեւ ի հեւ վազբին ու անպարանջքին հետ խօտոր կը համեմատէր: Գանդա՞ղ, անաճապարանք կերպ մը ունէր: Մոխիրով, լաւայի փոշիով ու իրեն միայն ծանօթ զանազան քիմիական նիւթերով կը շփէր փայտերը, մինչեւ որ անոնք լաւ մը յղկուէին ու ստանային իր փափաքած երանգը: Տեսած եմ նաեւ, որ ծակիչ սանդով լարիւրինթոուներ կը բանար հոս ու հոն, որդերէ ու ճճիներէ կերուածի, այցելուածի երեւոյթ տալու համար փայտին:

Կապուտաչուի էր վարպետը, թեթեւ մը ծաղկաւեր կ'որ ղէմքով, սպիտակ մորթով ու կարմիր մազերով: Իստրացիներու մէջ հազուադէպ տիպ մը կարծեմ: Եթէ ծնած ըլլար Արեւելքի մէջ, կամ Թաշակիրներու ճամբուն վրայ գոնուող զաղաք մը, պիտի կասկածէի, թէ հեշտամուտ սպիտիկ մը հեռուոր մէկ շառաւիղն է ինք... Գիրուկ էր, կը քալէր բաղի մը պէս, մէկ արջ՝ մէկ ձախ՝ ճօճուելով: Անզլերէնը կը խօսէր իստրական հնչաբանութեամբ ու նոյն լեզուի քերականական կանոններով կը կազմէր իր նախադասութիւնները: Ձերմ սիրով կապուած էր իր զաւակներուն, որոնց սպա-

գային ու դաստիարակութեան համար, այր ու կին, բան մը չէին խնայած :

— Թող մարդ ըլլան, ինծի պէս դործաւոր չըլլա՞ն, — կ'ըսէր :

— Բայց դուն գործաւոր չես, դուն քու պօսդ ես, ինքնիշխան... վը-
րադ հրամայող չկա՞յ, — կ'առարկէի ես :

— Է՛, ամիկօ, վրաս հսկող, հրամայող կենայ-չկենայ, գործաւոր եմ :

Իր աւագ որդին՝ Ֆրէնքը, որուն մենք ծանօթացանք, երբ ամուսնա-
նալու համար եղբորը պէս արտօնութիւն առնելու եկած էր ժողովայն քաղա-
քի մը հիւանդանոցէն, ամուսնացաւ իր երկու տարիքը ունեցող հիւանդա-
պահուհիի մը հետ :

Մամա Ծոնթանան շնորհալի կերպով ընդունեց իր հարսը, բայց ետքը
եկաւ մեր տունը, ու գաղտնօրէն լացաւ իր որդւոյն ձախող ընտրութեան
համար :

— Փափան ալ չհասնեցաւ, — ըտաւ, կլոր-կլոր արցունք թափելով :

Ֆրէնք, բժշկութիւն ընելու իր արտօնագիրը նահանգային իշխանու-
թիւններէն ստանալէն անմիջապէս ետք, առաւ իր կինը եւ փոխադրուեցաւ
հեռաւոր նահանգ մը, ուրկէ տարին քանի մը անգամ, տօնական օրերու առ-
թիւ կու գար իր ծնողքին այցելութեան : Երևութապէս Ծոնթանանը տունը
կը լեցուէր ուրախութեամբ : Իրենց բազմանդամ ընտանիքին բոլոր ներկա-
յացուցիչները, հրահմն հերթով, հրահմն միասնաբար, կու գային զարի ե-
կար՝ ըսելու Ֆրէնքին ու իր կնոջ՝ կը շնորհաւորէին իրարու սօն, երջան-
կութիւն կը մաղթէին իրարու, եւ կը խմէին կարծիք գինի՝ մանտօլինի նուա-
զի ընկերակցութեամբ :

Այս բոլորը լաւ էին, բայց՝ ժամանակաւոր : Ընտանիքին տեւական ու-
րախութիւն բերողը կրտսեր որդին՝ Ճօղէֆն էր : Ան ալ բժիշկ էր : Իր վկա-
յականը առնելէն անմիջապէս ետք, հօրը օժանդակութեամբ ու հաւանու-
թեամբ, իրենց երկայրկանի տան առաջին յարկը բարեփոխեց, սպասման, բն-
դոնեկութեան, քննութեան բաժիններով յարմարութիւն ստեղծեց, եւ օր
մըն ալ, հայր ու որդի միասին, էլան ու դրան առջեւ կախեցին բժիշկին գրա-
սենեակին քաջուժը յայտարարող ծանուցումը :

ՏՐ - ՃՕՁԷՖ ԱԱ ՖՈՆԹԱՆԱ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Ճօղէֆ իր հօր երկրորդ տղադուրութիւնն էր. միայն իր մազերը անոր-
նին նման կարծիք, ժանգագոյն չէին : Գիրուկ էր՝ ու ժպտողէ՛մ : Աւելի էր
լայնքին, քան երկայնքին աճելու հակամէտ :

Օր մը, երբ իրենց զբան առջեւ խօսքի էի բռնուած իր մօր հետ, կառ-
քը կ'էցուց մեր մօտը ու, բարակուկ, կապուտաչուի աղջկան մը օգնեց, որ
դուրս ելլէ : բերաւ մեր մօտ՝ ու սպասեց, որ աղջիկը իր մօր հետ ջերմօրէն
ողջապուրուի. յետոյ ինծի դառնալով, ներկայացուց դայն՝ իրրեւ իր ապա-
դայ կինը :

— Մօտ օրէն մեր տան վերին հրամանատարը պիտի ըլլայ. բժշկուհի
ալ է...

— Ուրախ եմ, — ըսի, աղջկան ինծի երկարած ձեռքը սեղմելով, —
մէկ տան մէջ երկու բժիշկ... Գէշ չէ՞, Բժիշկ, դուն իմ հիւանդութիւննե-
րուն հոգ կը տանես, տիկինն ալ՝ կնոջս :

Հարսնիքէն 15 օր առաջ, Մամա Ծոնթանան եկաւ մեզ հարսնիք հրա-
ւիրելու : Նուէր մը առինք, — որուն ընտրութեան համար այր ու կին թե-
թեւ վէճ մըն ալ ունեցանք, — ու, թէ՛ պսակին, եւ թէ՛ պսակին յաջորդող
ընդունելութեան ներկայ եղանք :

Յրէնքն ալ եկած էր իր կնոջ հետ: Մամա Յոնթանան իրաւունք ունէր: Յարմար զոյգ չէին: Իրաւ է, թէ ձօգէֆն ու իր կինը Ֆիդիքապէս տարբեր էին, մին, ինչպէս ուրիշ տեղ ըսած եմ, աւելի իր լայնքին աճելու հակամէտ էր, իր հարսն ըսե՛ս, նիւա՛ր, երկա՛ր, բարակուկ ու շուշանի պէս դիւրարեհ: Բայց գէթ տարիքով յարմար ըլլալ կը թուէին:

Օրը ուրախ անցաւ: Կերանք ու խմեցինք: Մանաւանդ խմեցինք: Փափա Յոնթանայի այնքան ծանր աշխատանքով աշան չինած գինիին տակէն մտանք՝ վրայէն ելանք:

Երջանիկ օր մըն ալ, տեսայ, որ փափան վար կ'առնէ սրբոյն արուեստը ծանուցանող ցուցանակը, ու անոր տեղ կը դնէ նորը:

ՏՐ. ՃՕՁԷՖ ԼԱ ՖՈՆԹԱՆԱ

Մանապէտ ներքին հիւանդութեանց

ՏՐ. ԷՎԸԼԻՆ ԼԱ ՖՈՆԹԱՆԱ

Առաջին օրերուն, մարդիկ այս ցուցանակը տեսնելով՝ կը ժպտէին: Ով դիտէ ի՞նչ կ'անցնէր իրենց մտքէն...

Վերջը վարժուեցան:

Փափա Յոնթանան չափազանց երջանիկ էր: Շատ կը սիրէր իր նոր հարսը, որ ցեղակից ալ էր իրեն:

— Փափան շատ ուրախ է, որ կրնայ իր հարսին հետ մեր լեզուով խօսել, — ըսաւ ինծի օր մը Մամա Յոնթանա:

— Եթէ ես ալ իր տեղը ըլլայի, ես ալ կ'ուրախանայի, — ըսի:

Մամա Յոնթանայի ծերունի դէմքը երջանկութեամբ ողորուեցաւ:

Դժբախտութիւնը այն էր, որ, թէեւ ծերունիները իրենց հարսով արտակարգօրէն երջանիկ էին, բայց իրենց որդին չէր: Կը հաւատամ, թէ մըրջակցութիւն կար այր ու կնոջ միջեւ: Հազիւ առաջին երեխան ծնած էր — լոյսի պէս սիրունիկ աղջիկ մը — բաժնուեցան: Կինը երեխան առած՝ գնաց ծօրը տունը ու ալ չվերադարձաւ:

Երբ դատարան ինկան ազահարգանի համար, արցունքը պակաս չեղաւ մամայի աչքերէն: Մինչեւ այդ պահը յուսացած էր, թէ տան աւագերէցին ու բարեկամներու միջամտութեանց շնորհիւ, ու ի վաճ կ'անուր, հասկացողութեան կու դան, ու հարսը, իր զաւակը զրկած՝ կը վերադառնայ իրենց մօտ:

Դատարանը, ինչպէս նման պարագաներու մէջ միշտ կ'ընէ, երեխան տուաւ ծօրը: Մամա Յոնթանայի սիրտը, գետինն ինկած նուրբ յախճապակիի պէս, կտոր-կտոր եղաւ:

— Եթէ քեզի տային, անոր ինչպէ՞ս հոգ պիտի տանէիր, — ըսի, գինքը միթէթարելու համար: Խորհեցաւ այդ մասին ու տալու պատասխան չգրտաւ... Այդ օրէն հոգ իր աչքին մէկը չոր էր, միւսը՝ թաց:

Յաճախ կը գանգատէր, թէ շատ կը կարօտնայ իր թոռնուհին: Օր մըն ալ, աւետեց, թէ գիշերը երազին մէջ վերկն էր առած դայն ու օրօրած... Այդ պատրանքը տեսց լման երեք օր՝ ու ան երեք օր արասկարգօրէն երջանիկ էր:

— Օր մը փափային հետ ելէք ու դայն տեսնելու դացէք, — թելադրեց տիկինը, — որքան որ դիտեմ, բարեկիրթ մարդեր են խնամիներդ...

— Ի՞նչ երթանք, ի՞նչ երեսով... Հարսս իր անցեալը լիչեցնող ամէն բան մոռնալ կ'ուզէ հաւանաբար:

— Բայց չէ՞ որ դուք սիրով էիք իրարու հետ, ձեզի հետ խնդիր մը

չունէ՛ր... անգամ մը նոյնիսկ ըսած ես ինծի, թէ «փափան շատ երջանիկ է, որ կրնայ իր Հարսին Հեռ իր լեզուով խօսիլ»:

— Այո՛, ըսած եմ, այդպէս էր... Բայց մի մտնաք, որ փափան ձօղճֆիս Հայրն է... Հաւանական է, որ ներկայիս մեղի Հանդէպ ալ լարուած ըլլայ, մեղի Հանդէպ բարեացակամ զգացումներ չունենա՛յ... Գիտէ՞ք ինչ ըսել է 22 տարեկանին կեանքի դուռները իր առջեւ փակուած գտնել...
— Ի՞նչ դուռ, ի՞նչ փականք, ինչո՞ւ կեանքի դուռները փակուած պիտի ըլլայ իր առջեւ... աշխարհի վրայ ձօղճֆէդ զատ ուրիշ լաւ մարդ չը կա՞յ...

— Յայտնի է, որ դուք կաթորիկ չէք: Տղա՛ս, մեր եկեղեցին, Հարսնս, նաեւ տղուս, ապահարզանը չի ճանչնար. ու եթէ կրկին ամուսնանան անոնք, կ'ապրին մեղքի մէջ:
— Ուրեմն ձօղճ՛Փդ ալ պիտի չվերամուսնանայ... Հը՛մ... այդ լաւ չեղա՛ւ...

— Օ՛, ձօղճֆս անհաւատ է, ան նման բաներու կարելորութիւն չի տա՛ր...

Եւ աղէ՛կ որ չի տար պիտի ըսէի, բայց խոհեմաբար լռեցի:

— Ու՛շ, եթէ ես ձեր տեղն ըլլայի, առանց բանի մը կարելորութիւն տալու, պամպիլոնոյիս — երեխայիս — Համար տղուոր նուէր մը առած՝ կ'երթայի ու Հարսիդ դուռը կը դարնէի օր մը:

— Տղա՛ս, դուն ամէն բան շեռ գիտեր. Հարսիս պարագաները մեր վերայ վերէն կը նային. անոնք Հոռոմէն են, մենք՝ Սիկիլիայէն... գիտեմ, թէ երբ տուներին երթանք, թերեւս դռնապանը մեզ յառնէ՛ ներս... Քերեւս առնեն՝ ու մեր մեկնելէն ետք, ծնողքը յարձակին խեղճ աղջկան վրայ՝ ըսելով, թէ ապահարզանէդ ետքն իսկ դեռ չազատեցանք աս բարբառոս ԸԱՎԻԵՐԷՆ:

Ալ ըսելիք չմնաց: Մամա Փոնթանան քիթը սրբեց, չորջուց արցունքները ու կռնակը կլորցուցած՝ ելաւ դնաց տուն:

— Եթէ ես նկարիչ ըլլայի, կը գծէի աս կնոջ նկարը ու տակը կը գրէի «ՅՈՒՍԷՆ ԶԱՅՆՆԻՆ»:

— Ես ալ սկսած եմ այդ կնոջ արցունքներէն յուսահատի՛լ: Աչքը չորցած չունի՛ր...

— Իրաւունք ունիս, մարդիկ չեն սիրեր յաւիտենական տխրութիւն տեսնել, տխրութիւնով չըջապատուիլ, — ըսի, ու դուրս ելայ:

* *

Բժիշկը, որ մօրը ըսածին պէս դաւանական նուրբ Հարցերով չէր հետաքրքրուեր, ու անոնց կարելորութիւն չէր տար, Հազիւ տարի մը անցած, ամուսնացաւ Հրէուհիի մը հետ ու իր կսպը տուաւ անոր ձեռքը:

Ի՞նչ տուաւ, թէ միւսը գրաւեց, յայտնի չէ ինծի Համար: Խնդիրը այն է՝ որ ինք օգը ելած թուցիկի պոչ դարձաւ. ու միւսը՝ գլուխը... Գլուխը ուր երթար՝ ինք կը հետեւէր, պարտաւորուած էր հետեւիլ անոր:

Բժիշկին, իր ծնողաց տան մէջ ունեցած ընդունարանը պահեցին, բայց ապրելու Համար բաւական հեռու թաղամասի մը մէջ յարկաբաժին վարձեցին:

Հրէուհին, իր ամուսնոյն ապրելակերպն ու գործելակերպը բարեկարգելու ձեռնարկեց: Նախ բժիշկին հիւանդներ ընդունելու ժամերը փոխեց: Դրան վրայ «Ժամադրութեամբ միայն», գրել տուաւ: Ամուսինը Պոսթոն դըր-

կելով՝ 15 օրուայ դասախօսութեանց շարքի մը հետեւիլ տուաւ, ու երբ ան վերադարձաւ, «Սրտի հիւանդութեանց մասնագէտ» էր արդէն: Այցեզրիննրը կրկնապատկեցին: Կինը բժիշկին համար նուիրոյն կառք մը գնեց: Սեւ Քէտիլէք մը:

— Տորտով պարտող բժիշկին վրայ ճարչ հաւատք ու վստահութիւն չ'ունենար, — ըսաւ ինծի օր մը, երբ իր անձնական սեւամորթ ծառան բժիշկին կառքը կը փայլեցնէր դրան առջեւ:

Ուրիշ անգամ մը, գարնանային մեղմ օդով օր մը, Լիզա — այդ էր իր անունը — մինչ մեր ծխնելոյզին վրայ թառած տարմահաւերը կ'երգէին լիւհազարգ, իր սեւ բաց կառքով եկաւ ու ինձմէ շորս քայլ հեռու կանգ առաւ: Տօնածառի մը պէս ներկուած, ծարիրուած, յարշարուած էր:

Իր կառավարը անապարանքով ցտակեց դուրս, կառքի կիսաշրջանն ըրաւ, ու եկաւ բանալ իր տիրուհիին նստած կողմին դուռը, որ ան, իր սեւ փուտքը շունը գրկած, ելլէ դուրս:

— Բարե լոյս ըտէ պարոնին, — ըսաւ ան, խօսքը իր շան ուղղելով...

Շունը բերան մը երկուք հաջեց:

— Կուտ պօ՛յ... — ու դուրսդուրանքով գայն սեղմեց կրծքին:

Միբայտ խառնուեցաւ:

Բժիշկը աս տղկան ինչո՞ն հաւանելով հետը ամուսնացաւ, անցաւ մտքէս: Նիհար էր, սեւ, չորցած: Հագուստին տէքոյթէն, կոնակի կողմէն մինչեւ մէջքն էր իջած, առջեւէն՝ մինչեւ տափակ, խեղճուկ կուրծքերուն ստուերոտ սահմանները: Սեւ նիհար ու երկար վզին, ամառ թէ մըրմեռ, նետած կ'ըլլար թանկարժէք մուշտակ մը: Երբ մէկուն հետ խօսքի րոտնւէր դէմ դիմաց, արագ-արագ կը թարթէր իր կեղծ, շատ խիտ ու շատ երկար թարթիչները, ու կը ժպտէր: Յաճախ հարցուցած եմ ինքզինքիս, թէ զարդօք իր կողմը չէ՞ն յոգնի կեղծ թարթիչներու քեան տակ: Առհասարակ սեւ կերպով, փայլուն՝ ու վրոն փակած բան մը հաղած կ'ըլլար: Իր մարմնի բարեմեծութեան ու գրաւչութեան մասին հաւանարար ինք ու մարդիկ տարբեր կարծիք ունէին:

Կօշիկներն ու ձեռքի պայուսակը միշտ կարծիք էին. կարծիք էր իր սեւ շան վզկապը, ու տխորթ մատը կառքին ներքին սարքը:

Ամուսնոյն գործերը լաւ կ'ընթանային: Մասններուն թիւը աւելցուց: Խոհարար ու պըրլըր վարձեց: Լոնկ Այլէնտի հեռուոր մէկ մասին մէջ ծոփափնեայ տուն մը գնեց 64,000 տուարի, ու իրենց երթալու ճամբաները ցոյց տուող քարտէսի մը հետ, զրկեց իրենց ծանօթներուն ու բարեկամներուն:

Օր մըն ալ աւետեց ինծի, թէ իրենց նոր տան կահաւորումն ու յարդարանքը աւարտած են, ու հրաւիրեց մեզ, զիս ու տիկինը, որ Կիրակի օր մը այցելէնք իրենց:

— Անպատճառ ճաշի պիտի գաք, — ըսաւ, յետոյ, իրրեւ խայծ, տաւիցուց, թէ իր կալուածին հոգ տանելու համար ճափոնացի պարտիզական մըն է վարձած:

— Ուղղակի կը ստեղծագործէ, հրաշքներ կը դործէ, գալու տեսնելու ե՛ս: Գիտեմ, թէ ծաղիկներով ու բոյսերով որքա՛ն կը հետաքրքրուիս:

Ձգացի: Այսօր վաղը ըսելով, յետաձգեցի՝ մինչեւ որ յուսահատեցաւ՝ ու դարձեցաւ իր հրաւերը կրկնելէ:

Յաճախ կու գար իր ամուսնոյն հաշտեցոյցին վրայ աչք մը նետելու: Շունը քովն առած, ոտքը ոտքին վրայ նետած, կը ցուցադրէր իր սուկրուս ծունկերն ու աւելի վերերու ծոփափոփուր յիշեցնող ճերմակեղէնները, Հի-

ւանդապահունչին կը զրկէր ներս, օգնելու ամուսնոյն ու ինք՝ հիւանդներու հիւանդութեանց կենսապահանները պարունակող քարտերով շրջապատուած, կատարելապէս երջանիկ, կը պատասխանէր հեռաձայնին.

— Հըր՞... Այո՛, առիկա Տք. Ծոնթանայի օֆիսն է... Իր կինն է խօսողը, ի՞նչ կայ, հիւանդապահունչին ներսը դատարան է, չի կրնար գալ... Բժիշկն ալ դատարան է: ...Աղջիկդ հիւանդ է ու բժիշկին բա՞ն մը հարցնել կ'ուզես... Բայց ինչո՞ւ հոս շես բերեր աղջիկդ... Կառք չունի՞ս... Թաքսի մը առ: Եթէ պլանիֆի մը մէջ պլանու ըլլաս՝ չի մտի... Զէ՛, բժիշկին հետ շես կրնար խօսիլ, դատարան է... Բայց տիկին, հոս օֆիս մը լեցուն մարզեր կան, անիրաւութիւն է անոնց հերթը ձեզի տալը, ըսի թէ անկարելի է... Բայց լալը օգուտ չ'ընէր... Ի՞նչ, ի՞նչ ըսի՞ր... Սիրտս ալ մորթիս պէս սեւ է... Դուն լէյտի չի՞ս. գիտես որ քեզ դատարան կը քաշեմ, բանս նետել կու տամ... Ես...

Բժիշկը, որ կը թուէր, թէ ներսէն իր գործիքով մտիկ կ'ընէր այս խօսակցութիւնը, եկաւ դուրս ու կնոջը ձեռքէն գործիքը առնելով՝ մեղծօրէն դրաւ իր տեղը:

— Ժօզֆ, հասու տէ՛ր ես... — Ժրփրեցաւ (ինչպէ՞ս կը յանդգնիս)

— Տարիսնի կօ հօմ: Փլի՛զ, փլի՛զ, կօ հօ՛մ... (դնա տուն, սիրելիս)

Դեփ դեղին եղաւ: «Ապերախտ արարած», պոռաց, առանց ներկաները հաշուի առնելու, «ապերախտ արարած, ոչնչութենէ քեզ այս աստիճանին բարձրացուցի՛ ու դուն ինծի կօ հօմ կ'ըսե՛ս, տուն կը զրկե՛ս...»:

Լման ամիս մը չերեւցաւ, ու ամէն մարդ երջանիկ ըլլաւ կը թուէր իր բացակայութեան համար:

Ամուսնոյն յաճախորդները մեծ մասով տարեց մարդիկ ու կազմ ընկերութեան աշխատող գործաւորներ էին: Աշխատանքի պահանջն առ կամ ան ձեւով միասուած, կամ միբաւորուած անտաշ մարդեր: Կ'նախադրուի, թէ իր բացակայութիւնը մոռցնել պիտի տար զինքը, բայց հակառակը պատահեցաւ. երբ իրենք կանուխ կու գային ու բժիշկն ալ կ'ուշանար, կը թափուէին դուրս՝ ու չէնքի մուտքին առջեւ կատակարանել ու զուարճանալ կը սկսէին: Ծագրանքի գլխաւոր նիւթը բժիշկի կինն էր: Անոր ծունկերուն շորութիւնը, թարթիչները, մորթին սեւութիւնը, գէմքը ծեփող կարմիրին ու բրնձափոշիին թանձրութիւնը, հասակը երկարելու ճիգով հազած կօշիկներուն բարակ ու երկար կրունկները:

— Գոռնիկի զաւակը ինչպէ՞ս ատոնց վրայ կրնայ իր հաւասարակը՝ ութիւնը պահել՝ խելքս չի հասնիր, — կ'ըսէր մէկը:

— Եթէ այդ կօշիկները չըլլան, ու չըլլայ նաեւ գլխուն վրայ բազմաթիւ հանգոյցներով գիգած կեղծամիւն խաւերը, հասակը թիզ մը կը մնայ:

— Օր մը, — մէջ ինկաւ տարեց մարդ մը, — կինս գիտ կատքով հոս բերաւ ու զայն տեսնելէ ետք, հարցուց ինծի, թէ ո՞վ է Մատամ Փոմփատուր: Երբ իմ անունը այդ կինը: Ըսի թէ՛ բժիշկին կինն է: Ատանկ շնորհքով մարդ ատ լղրճուկը ինչո՞ւ առեր է ըսաւ... Ես գիտե՞մ... ճաշակի հա՛րց:

— Կինդ որու նմանցուցեր էր զի՞նքը, — հարցուց ունկնդիրներէն մէկը:

— Մատամ Փոմփատուրին:

— Զգիտեմ, թէ ո՞վ է Մատամ Փոմփատուրը, բայց ասկէ ետք, երբ իր մասին խօսիլ ուզենք, կ'ըսենք «Մատամ Փոմփատուր» ու մարդ չ'իմանար, թէ մենք ո՞վ կը ծաղրենք, կամ ո՞վ կը բամբասենք, — թեխադրեց ան: Ինչորը համաժիտ գտնուեցան ու ան բոլորին համար դարձաւ Մատամ

Փոժփատուր: Երբ ամուսնայ մը բացակայութենէ ետք նորէն եկաւ, ներքը
հերթի սպասող քանի մը հողի, գլխարկին թեւերուն տակ դրած՝ ձգեցին
հեռացան:

Քանի մը օր ետք ալ՝ հիւանդապահուհին դործը ձգեց:

— Եթէ անոնք ինծի պէս ծառայող գտնեն, ես իրենց նման պօս չա՛ր
կը դանձմ, — ըսաւ, մեկնած պահուն:

— Մինչեւ բժիշկին մէկ վստահելի անձ գտնելը, ստիպուած եմ ամէն
բան ինքս ընել, — ըսաւ յաջորդ օրը ինծի Փոժփատուր:

— Հիւանդապահուհին դործը ինչո՞ւ ձգեց, — Հարցուցի:

— Մորֆին կը դողնար՝ ու դուրսը կը ծախէր, — ըսաւ:

— Ձէ՛, — պոռացի ես:

— Այո՛, — վրայ տուաւ ինք, — մորֆին կը գողնա՛ր...

— Ձե՛մ հաւատար:

— Հաւատա՛...

— Բժիշկը կրնար կողանքի տակ պահել այդ բաները:

— Գործնական չէ այդ բանը:

Երթալով յաճախորդները պակսիլ սկսան:

Պակսիլ սկսող եկամուտը հաւատարակչու համար՝ այցեգրենները
նորէն բարձրացուց: Հիմա 10 տուար կը գանձէր, դեղագիր ստորագրելու
պարագային՝ 12:

— Ասանկ բանի ալ բնաւ չէի հանդիպած, — ըսաւ օր մը մեր դրացի
Մանուկին կիներ:

— Ի՞նչ բանի չէիր հանդիպած, ի՞նչ բանի կ'ականարկես:

— Դեղագիր տրուելու պարագային՝ Փոժփատուրին երկու տուար ա-
ւելի գանձելուն:

— Ի՞նչ ընեն, — ըսի, — 65,000 տուարնոց տունի մէջ կը բնակին,
խոհարար, շոֆէր, ճափոնացի պարտիզպան ու սպասուհիներ ունին, ատոնց
ամոսկանները ո՞վ պիտի վճարէ, դուն ու ե՛ս:

— Ճե՛ննՅՅՅՄ... քիչ մը օժաննոց տեղ չէի՞ն կրնար բնակիլ:

— Մարդոց ճաշակը երբեմն մեծածախս կ'ըլլայ, — ըսի:

— Մէկ ալ եթէ քովերնին երթամ՝ երեսս թուք:

Մեծ խօսեցաւ: Օր մը յանկարծ իր ամուսինը հիւանդացաւ ու կինը,
չնչակտուր, վաղեց բժիշկին:

— Աման սօքթար, Մանուկս ձեռքէ կ'ելլէ, հասի՛ր:

— Բժիշկը հասաւ, բայց չկրցաւ փրկել Մանուկը:

Սեւ օրէն հաղիւ 15 օր անցած էր՝ Փոժփատուր հաշուեցոյց մը դրկեց
Մանուկի կնոջ: Էն տակը, կարմիր մելանով, գայպագած, կը խնդրուի փու-
թացնել:

Այդ «գայպագածն» ու «փութացնելը» ցույին առջեւ շարժուող կարմիր
լաթի ապաւորութիւն ձգեցին Մանուկի կնոջ վրայ: Աւելի քան քսոորդ դար
է դրացի էր բժիշկինց, ու յաճախորդ՝ անոր վկայական ատենէն ի վեր:
Դրամն ու հաշուեցոյցը առած՝ վաղեց դարձանատուն: Բարեբախտաբար առ-
տուն կանուխ էր ու հաստատութիւնը չէր բացուած. ստիպուած, լալով, վե-
րագարձաւ տուն: Մեր դրան առջեւ հանդիպեցաւ ինծի ու հեկեկալ սկսաւ:

— Ի՞նչ է, ինչո՞ւ կույսա, ի՞նչ պատահեցաւ, — Հարցուցի:

— Հելպէթ կու դայ, եթէ սեւ սուրբաթին չթքնե՛մ, թող...:

— Որո՞ւ սուրբաթին թքնես կոր, — Հարցուցի:

— Այդ քածին, այդ բողին, այդ շուն փութածին:

— Բայց իրաւունք չունին մէկուն հասցէին նման բաներ ըսելու. վերջապէս գործած մեղքն ի՞նչ է, առնելիքն ուղեր է...

— Պարոն Արամ, տուն ունինք. տեղ ունինք, այսքան տարուան դրացի է՛նք, հեմէն չէինք փախեր կո՞ր... Դեռ մարդուս վրայի հողը չտեղաւորուեցա՛ւ... չի՞՛ջ մը յարգանք չունին մէկուն վիշտին, սուգին հանգէպ...

— Ի՞նչ յարգանք, ի՞նչ սուգ, նման բաներ մի ակնկալեր անոնցմէ. յետոյ, նո՞ր պիտի ճանչնաս ատ կինը... Տուր դրամը եւ հաշուեցոյցը ինծի. երբ դայ՝ ես կը վճարեմ:

— Աէ՛, չե՛մ տար, ես պիտի ձեռքովս տամ՝ ու քանի մը խօսք ալ բան:

— Տուր ինծի՛... Կ'ելլես էվէլ պակաս բաներ կ'ըսես, վերջը խնդիրը կը բարդանայ:

Սկսաւ լալ:

— Ինչո՞ւ կուլաս, կ'արժէ՞ ատ փխսին արարքին համար լալ: Գրաւի կու գամ բժիշկը բանէ լուր չունի:

— Ի՞նչ բանէ լուր ունի որ... Խաղալիք դարձեր է ատ քածին ձեռքը: «Ե՛ւ մայ լըվ, ե՛ւ մայ տարլիկ, ե՛ւ փրէշը»... Աշխարհի վրայ եթէ ես էրիկ մարդ ըլլամ ու ան մնացած միակ կինը, նորէն վրան չեմ թքներ...

— Աղէկ, մի թքներ. հիմա գնա՛ տուն ու մոռցիր այդ բոլորը:

Տուաւ դրամն ու հաշուեցոյցը ու շնորհակալութեան խօսք մը բերնին, դարձաւ ետ:

Ետեւէն տեսայ, որ իր ուսերը կը դողային: Դեռ կուլա՛ր:

Կէսօրուայ դէմ, երբ Փոմփատուրն եկաւ, ու շունը գիրկը, բացաւ դուռը, առաջին գործն եղաւ իր մօտ երթալ ու դրամն ու հաշուեցոյցը սեղանին վրայ դնել:

— Օ՛, դրացիիդ հաշուեցոյցն է:

— Այո, դրացիիս հաշուեցոյցն է:

Դրամը համբոց, հաշուեցոյցին վրայ զամբողջութեամբ վճարուած» գրեց, ստորագրեց՝ ու երկարեց ինծի:

Աւի թուղթի կտորը, ու առանց բառ մը ըսելու, ելայ դուրս:

Այս դէպքէն մօտ մէկ ամիս ետք՝ խանութի իր դրացիները ուշաթափ գետինն ինկած գտան Մը. Թոնթանան ու լուրը բերին տուն: Բարեբախտաբար բժիշկը տունն էր, գործը աւարտած՝ մեկնելու կը պատրաստուէր, երբ գոյժը բերին: Վաղեց հոն — ես ալ հետը — հօրը բազկերակը բռնեց, սրտին մտիկ ըրաւ, աչքին կոպը վերցուց ու տակը նայեցաւ, գոյն տուաւ ու գոյն առաւ: Մենք հեռուէն շունչներնս բռնած, իր վճիռին կը սպասէինք: Երազուկեցաւ, լրափողը ծալլելով գրաւ իր կաշուէ սեւ պայուսակին մէջ, ու աջ ձեռքին բութն ու ցուցամատը կարկինի պէս բանալով, անոնցմով փակեց հօրը բաց մնացած աչքերը:

~ ~

Ինչպէս վտայի է լաւ դրացիներու, ամէնքով ծաղիկ զրկեցինք ու թաղումին գացինք: Գերեզմանատունէն մեր վերադարձին՝ Տիկին Մոմենանը, Մանուկին կինը, մեզի հետ էր:

— Գրաւի կու դամ չամչցածը հաշուեցոյց մը զրկած է կեսօրը, — ըսաւ:

— Ի՞նչ բանի համար:

— Իրկանը մինչև հօրը խանութը երթալով բաց մնացած աչքերը փակելուն համար:

Չպատասխանեցինք:

Քանի մը ամիս ետք Մամա Ֆոնթանան մեզի եկաւ:

— Մը. հարմ, — ըսաւ, իր սեւ սուրճը լրացնելէ ու բաժակը վար դընելէ ետք, — եկայ խորհուրդ հարցնելու: Հիմա, որ փափան չկայ, ու ես ալ երեք տարի է աշխատանոցս փակած եմ, եթէ տանս վարի յարկը իբր օֆիս գործածելուն համար ճօզէֆէս վարձք ուզեմ, ամօթ կ'ըլլա՞յ:

— Ինչո՞ւ ամօթ պիտի ըլլայ, մինակ կիս մըն ես՝ ու ջու ծախսերը ունիս. եթէ շէնքին տէրը ուրիշներ ըլլային՝ վարձք պիտի շտայի՞ն...

— Որքա՞ն ուզեմ:

— Յարկարժինը 300 տարար կ'արժէ, բայց քանի որ վարձակալները քուկիներդ են, 200-ով դուրսցիր: Կը զարմանամ, որ մինչև հիմա վարձք չես առեր:

— Անդամ մը խօսք բացի, հարսս վրաս յարձակեցաւ: Դրամն ի՞նչ պիտի ընես, արդէն երբ մեռնիս, բոլորը մեզի պիտի մնայ, ըսաւ... Ես ալ ձայնս կտրեցի:

— Հիմա պայմանները փոխուած են, — ըսի, — իրաւունք ունիս վարձք պահանջելու:

Երեք օր հարսը կռիւ ըրաւ իր հետ: Օր մը ուղղակի մեր բաց պատուհանին տակ լսեցի, որ կ'ըսէր.

— Հազար անգամ ըսած եմ, թէ ունեցածդ մինչև մահդ կը բաւէ զեղի. դրամն ի՞նչ պիտի ընես, ստակելու պարագայիդ՝ հետդ վեր տանելու միջոցը դառա՞ծ ես...

~ ~

Այս վէճէն քանի մը տարի ետք, իրիկուն մը, մօրը մտնող արեւուն դէմ նստած շքեղ կարմիր վերջաւորյալ կը դիտէի ու մտքով հաշիւ կ'ընէի, թէ քանի՞ եզ մորթած ըլլալու են այդքան արիւն թափելու համար հոն, երբ Մամա Ֆոնթանան, որ ալ լաւ մը պատուած էր, լուսերու պէս սիրուն աղջկան մը ձեռքէն բռնած՝ ջովս եկաւ: Անմիջապէս ելայ ոտքի ու նստած աթոռս հրամցուցի իրեն:

Աչքս աղջնակին վրայ էր: Ոնկըս տարա՛ւ: Ես նման թարմ զեղեցկութիւն շատ քիչ էի տեսած:

— Շատ պիտի շնտիմ, — ըսաւ պատուը, աթոռին վրայ տեղաւորուելով, — Եիչդ վայրկեանի մը համար հանդիպեցայ հոս, զեղի ծանօթացնելու համար սա բալիկը:

— Եւ ի՞նչ բալիկ, — ըսի ես՝ մանկամարդուհիին աչքերուն մէջ նայելով:

— Թօռնուհիս է:

— Պրէնքին աղջիկն է:

— Ի՞նչն ալ ինչե՞ր կ'անցընես մտքէդ. եթէ ես զուակ ունենամ, Պրէնքի կիներն ալ կ'ունենայ: Աս բալիկը ճօզէֆիս աղջիկն է: Անտեղիս է անունը:

— Վա՛յ, բալի՛կ, ես ջու ծնիլդ դիտեմ, ան ատեն սա տունն էիք զես,

— Ըսի մեծ մօրը բնակարանը ցոյց տալով, — մօրդ հարս եղած օրն ալ, մեծ հօրդ շինած դիմիս խմելով գինովցած եմ... Մամադ հիմա ո՞ւր է, ի՞նչ կ'ընէ, որքա՞ն ատեն է տեսած կամ լսած չեսք իր մասին:

— Լաւ է. կ'աշխատի, բժշկութիւնը կը շարունակէ:

— Չամուսնացա՞ւ :

Ժխտական շարժեց դուրսը ու իր զանգուրները ծփծփացին ուսերուն վրայ :

— Իրական, վաւերական հրեշտակի կը նմանիս, անունդ կ'արդարացընես, — ըսի :

— Հրեշտակը ուր տեսած ես, որ զիս անոր կը նմանցնես, — ըսաւ Անտէրինա, անուշ-անուշ ժպտելով :

— Հրեշտակը տեսած եմ իտալացի դասականներու գործերուն մէջ ու մեր եկեղեցիին պատերուն վրայ. ալ ո՞ւր... Վերը, անոնց բնական տեղը երթալու հնարաւորութիւն չկայ արդէն. կենայ ալ՝ ինծի համար չէ, վարի յարկն է իմ տեղը :

— Ուրեմն մեղքերդ այդքա՞ն չա՛տ են :

— Այդ կողմէն հարուստ կը համարուիմ, — ըսի :

— Ձեմ հաւատար, — ըսաւ ծիծաղելով, մեծ մայրիկս տարբեր բաներ է ըսած քու մասին :

— Անոր վկայութիւնը Վերի Դատարանին մէջ կո՛ւտ մը չ'արժեր : Ան նախապաշարեալ մըն է :

— Ես զի՞նքը շատ կը սիրեմ, — ըսաւ, գուրգուրանքով անոր կողմը նայելով, — չըլլայ որ իր մասին գէշ բան ըսես :

— Գէշ բան չենք կրնար ըսել իր մասին, բարի ու աստուածազօյն կրն է. ինչե՞ր կը քաշէ հօրդ ներկայ կնոջը ձեռքէն :

— Ինչի՞ կը նմանի այդ կինը :

— Ձայն նկարագրել անկարելի է : Սր մը նկարը կը հանեմ ու յաջորդ պարուէ ցոյց կու տամ քեզի : Այո՞ :

— Այո՛ :

— Մէկ պայմանով :

— Ի՞նչ պայման :

— Անոր վրայ վառնած ֆելիս դրամը պիտի տաս :

— Կու տամ :

Վայրկեան մը լռութիւն տիրեց : Եւտոյ չգիտեմ ինչ խորհեցաւ, որ, ըսաւ .

— Ես համարձակասու մարդերը կը սիրեմ :

— Անշուշտ, հասկնալի է, երբ համարձակասու են, ու երբ քեզ տեսնելով խելքերնին կորսնցնեն, չեն վախնար քեզի այդ բանն ըսելու :

— Մեծ մայրիկ, ելիք երթանք, առ մարդը ինծի միշտ նեղը կը դնէ :

— Կեցէ՛ք, ո՞ւր կ'երթաք, դեռ չհիւրասիրեցի՞նք ձեզ, բայց նախ քան այդ, ըսէ ինծի, թէ օրական քանի՞ սիրտ կը կտորես :

— Ոչ մէկ սիրտ : Առայժմ սիրոյ մասին չեմ խորհիր :

— Քու խորհիլդ կամ շխորհիլդ կացութենէն բան չի փոխեր. ծաղիկը իր ուղեւով չէ, որ բուրում կ'արձակէ... Պզտիկ սիրուն աղջիկները իրենց ուղեւով չէ, որ կը սիրեն կամ կը սիրուին... Սիրտ կը կտորեն՝ ու խելք կը թոցնեն... Հիմա շտկէ-չիտակ ինծի ըսէ, թէ օրական քանի անգամ «քեզ կը սիրեմ» բառերը կը լսես :

— Կ'ուզե՞ս որ ճշմարտութիւնը ըսեմ :

— Անշուշտ : Գիտես, թէ սուտ խօսիլը մեղք է :

— Ոչ մէկ անգամ :

— Ուրեմն ապուշներով կամ կոյրերով ես չըջապատուած : Ես աշխար-

հի վրայ ունեցածս, շարժական ու անշարժ, բոլոր, բոլոր ունեցած բաներս կու տայի՝ քսան տարեկան ըլլալու համար:

— Ինչո՞ւ:

— Որպէսզի հետզ սիրաբանելու իրաւունք ունենամ:

— Օ՛ր, Մը. էտըմ...

Ու այնպիսի սրտազին ծիծաղեցաւ, որ աչքերէն արցունք եկաւ:

— Աս արջիկը ինչո՞ւ այսքան կը ծիծաղի, — հարցուց իր մեծ մայրը, որ տկարացած էր լսողութեան պատճառով, չէր կրցած հետեւիլ մեր խօսակցութեան:

— Ուրախ չե՞ս, որ կը ծիծաղի, — ըսի, — ծիծաղիլը լալէն հազար տեղամ աղէկ է:

— Այո՛, աղէկ է, բայիկս առանց հօր մեծցաւ ու ծիծաղելու շատ առիթ չունեցաւ, — որքաց մեծ մայրը, ու թաշկինակը տարաւ իր ծեր աչքերուն:

— Կարծեմ թէ նման բայիկէ մը զրկուիլը աւելի խորունկ պատիժ է հօրը համար, քան իրեն, — ըսի ես. — բայց ըսէք, խնդրեմ, հայրը երբեւիցէ հետաքրքրուած է իրմով:

Ըսի ու գլջացի:

Այդքան ալ ապուշ, անտեղի հարցում...

Բարեբախտաբար երկուքն ալ չլսելու եկան ու հարցը փակուեցաւ:

— Գրաւի կու դամ, որ պայուսակիդ մէջ հայելի ունիս, — ըսի, քան մը ըսած ըլլալու համար:

— Թէեւ աղջիկներուն համար պայուսակին մէջ հայելի պահելը ներելի է, բայց ես չունիմ, — ըսաւ, — չեմ պահեր, որովհետեւ մէքափ չեմ գործածեր:

— Ու այնքա՞ն վստահ ես սիրուն ըլլալուդ վրայ, որ հայելիով ստուգելու պէտք չի՞ս տեսներ:

— Կրէն մա՛, — դարձաւ իր մեծ մօրը, — աս մարդը շատ շիտակ բաներ կ'ըսէ, ու ես շատ ուրախ եմ, որ զիս ծանօթացուցիր իր հետ:

— Եթէ աս մարդուն շատ հաւնեցար, ուրեմն յաճախ եկուր զովս, ու ես կը խոստանամ ամէն անգամ դալուդ, քեզ իր քով բերել: Այդ ձեւով ես ալ կարօտ չեմ մնար քեզի:

— Բալիկ, մի՞նչեւ հիմա ո՞ր էիր, ինչո՞ւ բնաւ աս կողմերը չէիր եկած, — հարցուցի:

— Մի՞նչեւ հիմա կը վախնայի հոս գտլու:

— Որմէ՞ն:

— Գիտե՛ս թէ որմէ, ան կնոջմէն:

— Մասամ ֆոմֆատուրէ՞ն:

— Մասամ ֆոմֆատուրն ո՞վ է:

— Ան կի՞նն է:

— Ո՞վ տուաւ իրեն այդ անունը:

— Հօրդ յաճախորդները, ալ ո՞վ:

— Ուրկից տ'ը...

— Ուէ՛լ, իր հասակը կարճ է, շատ կարճ. երկարելու համար արտակարգօրէն բարձր կրունկներով կ'օշիկը կը հաղնի, գլխուն կեղծամն ալ քանի մը հանգոց կը դիզէ վրայէ վրայ՝ ու վաւալաւ, մասամ ֆոմֆատուր անունը տուին իրեն:

— Ըսել կ'ուզես, թէ դուն մեղք չունի՞ս այդ անուանակոչութեան մէջ:

- Հաւատա՛ չունիմ : Կ'ուզե՞ս երդում ալ ընեմ :
- Ձէ՛, հարկ չկայ . կը հաւատամ խօսքիդ :
- Բայց ըսէ ինծի, սիրելիս, ինչո՞ւ կը վախնաս այդ կնոջմէն :
- Զգացածս վա՛խ չէ, դժուար է բացատրել, թէ ի՞նչ է... բացատրածիդ նայելով՝ այնքան ալ զբաւիչ էակ մը չէ :
- Շատ հետու է գրաւէչ ըլլալէ :
- Ուրեմն ինչպէ՞ս կ'ըլլայ, որ հայրս չի կրնար ապրիլ հրեշտականման մօրս հետ՝ ու հողի կու տայ այդ կնոջ վրայ :
- Իրեն հարցնելու ես այդ պարագան :
- Ես ո՞ւր պիտի տեսնեմ, որ հարցնեմ իրեն... յետոյ՝ այնքան ալ տեղին հարցում մը չէ :
- Հարցումին համար չէ, բայց լաւ կ'ըլլայ, որ օր մը տեսնես դինջը : Միեւնոյն քաղաքին մէջ կ'ապրիք՝ ու այսքան տարի է, իրար չէք տեսած . եթէ փողոցը հանդիպիք, երկու օտարներու պէս պիտի երթաք ձեր ճամբան :
- Մեղքը ի՞մա չէ : Հայրս ինձմով ընաւ չէ հետաքրքրուած :

Տխրեցաւ :

Մեղքացայ իրեն :

— Աղէ՛կ, մտցիր հայրդ, բայց երբեմն եկուր տեսնելու մեծ մայրդ . քեզմէ զատ մէկը չունի իրմով հետաքրքրուող . բոլոր իր մերձաւորները, աս կամ ան ձեւով, կոտորած են իր սիրտը . զիտես, ծերերը քիչ մը շատ զգայուն կ'ըլլան . յաճախ գանգատած է ինծի, թէ իրենները վրան կը նային իրրեւ աւելորդ բնի, հակառակ անոր՝ որ մարդու վրայ բնո չէ՝ ու նիւթապէս անկախ է : Հայրիկիդ գրասենեակի օրերը Երկուշաբթի, Զորեքշաբթի եւ Ուրբաթ օրերն են . միւս օրերը՝ Հոս մարդ մարդասանք չկայ : Այդ օրերն իսկ կրնաս ուղղակի մեկի գալ . ես լուր կու տամ մեծ մօրդ ու մեր տան մէջ կը տեսնուիք : Ի՞նչ կ'ըսես, է՞ :

— Տեսնենք :

— Տեսնենք ըսելով մի՛ խուսափիր, խոստացի՛ր :

Անորոչ շարժում մը ըրաւ ու օտքի ելաւ՝ մեկնելու համար :

— Սպասէ՛ :

Կառատուն մտնելով առի յօտիչը ու եկայ իր քով :

— Ի՞նչ գոյն վարդ կը սիրես :

— Կարմիր :

— Անշուշտ, հարցնելու աւելորդ է, սիրոյ զոյնը :

Բուքումնաւէտ վարդի շատ սիրուն կոկոն մը կարելով՝ բերի իրեն :

— Աղուորին՝ աղուոր վարդ մը :

— Ենորհակալութիւն՝ եւ մնաք բարեւ : Ուրախ եղայ ձեզ հետ ծանօթանալով, — ծոնցաւ ու համբուրեց մեծ մօրը թոմթոկած թուշը :

— Երթաս բարով ու մի մոռնար մեզ, ըսածներս :

Անոր երթալէն ետք, մեծ մայրն ալ ոտքի ելաւ : Ենորհակալութիւն յայտնեց ու գլուխը զլիկս մօտեցնելով, ըսաւ .

— Երբ սասկիմ, ունեցած չունեցածս իրեն պիտի ձգեմ :

~*~

Վրայէն քանի մը ամառ ու ձմեռ անցան կարծեմ ու ես Անտիպիան չտեսայ : Երբ օր մը հարցուցի իր մեծ մօր, պատասխանեց, թէ ինչ ալ տեսած չունի ու կը կարծէ, թէ ուսանելու համար մօրը կողմէ զբնութեան է հետաւոր քաղաք մը կամ Եւրոպա :

Մտքէս անցաւ որ Հարցնեմ իրեն, թէ պատրաստե՞ց իր կտակը, ամէն բան Անժեյիկայի ճակտին գրե՞ց, ինչպէս որ խոստացած էր: Բայց սիրտ չըրի. ծե՛ր է, էր օրերը հատնելու վրայ են. կախուող մարդուն տունը չուանի մասին չե՞ն խօսիր, խորհեցայ:

Օր մը, երբ մեր տան դիմաց գտնուող շուկան կ'երթայի պտուղ գնելու, տեսայ որ պատուը պողոտայի եզրին կը սպասէ, դիմաց անցնելու համար:

— Ո՛ւր կ'երթաս, — Հարցուցի:

— Գիմաց կ'երթամ հաւ մը դնելու համար, — ըսաւ, բայց անիծուած կառքերը կարծես կրակ մարել կ'երթան, պատահութիւն չե՞ն տար ինծի:

— Ի՞նչ կ'ըսես, ինծի կը վստահի՞ս, ես գնեմ՞ հաւը:

— Հա՛, զուակա, Աստուած օրհնէ զեզ, երեք շորս փառնանոց հաւ մը գնէ: Կեցիք՝ դրամը տամ:

— Վերջը, գնելէս ետք, երբ տուն բերեմ՝ կու տաս:

Մեր հաւը գնեցի ու տարի իրեն, դրան առջիւ, սանդուխներուն վրայ նստած էր. Զերմագին շնորհակալութիւն յայտնեց ու մեծ աւետիս մը տուող զ՞ք երջանիկ արտայայտութեամբ, ըսաւ, թէ լուր արած է, որ Անժեյիկան այսօր չըջանաւարտ ըլլալով տուն կը դառնայ ու ինք վստահ է, որ պիտի գայ իրեն տեսութեան:

— Ախ, այնպէս կարօտցի՞ր եմ, այնպէս կարօտցե՞ր... աղուր նուէր մըն ալ գնեմ եմ իրեն համար. ու երբ դայ՝ անշուշտ ճաշի վար պիտի գնեմ գինը. ահա թէ ինչո՞ւ հաւը գնեցի. այլապէս, — ես երեք փառնանոց հաւն ի՞նչ ընեմ, ութ օրէն չեմ կրնար հատցնել:

— Ինչ լա՛ւ... Երբ գայ, ըսէ իրեն, որ դիս շտեսած տուն չերթայ:

— Կ'ըսեմ, կ'ըսեմ, վստահ եղիր:

— Չմոռնա՛ս:

— Չե՛մ մոռնար:

Տեսայ որ ձախ աչքի խոռոչին մէջ արցունք մը կազմուեցաւ. մեծցաւ, մեծցաւ, ու դունստ գէճքին վրայ թաց դիծ մը քաշելով՝ հասաւ ժինչեւ բերնին անկիւնը:

— Դուն գիտես, թէ լալու օր չէ աս օրը, — ըսի:

— Գիտե՛մ, ուրախ ե՛մ, բայց չորնայիք արցունքը առանց ինծի հարցընելու կը վազէ՛: Բայիկս առանց հօր դուրսդուրանքի՛ն մեծցաւ:

— Բաղձաթիւ ուրիշներ կան իրեն պէս. կան նաեւ հայր ունեցողներ՝ բայց անոնցմէ դուրսդուրանք չգտնողներ... Մի՛ մեղքնար իրեն. լաւ աղիկ է, ասողը դաղափարներով ու դատողութեամբ. եթէ կայ մեղքնայիք մէկը, այդ ալ՝ իր հայրն է. չի գիտեր, թէ ի՞նչ անուշ բայիկ ունի:

— Բայիկ մըն ալ իր անկողնին մէջ ունի՞ր... Թիւ՛հ, — թքաւ՝ ու հաւը գրկած, մէջքը ծուռ, բարձրացաւ սանդուխներէն վեր:

Այս դէպքէն ետք Հաղիւ տարի մը անցած էր, երբ ձմրան օր մը, մեր տան պատուհանէն դուրս նայելով, տեսայ որ Պոնթանաներու կողքի մուտքին առջև սեւ զանգուած մը կայ: Գլխարաց վազեցի դուրս: Մամա մոնթանան էր: Ձիւնին վրայ կծկուած, շարժելու, նոյնիսկ օգնութեան կանչելու անկարող, ինկած էր: Վիճակը լաւ չթուեցաւ ինծի: Ամպիւլսն մը կանչեցի ու աղուն ալ Հեռաձայնեցի որ գայ:

— Կը ցաւիմ որ, — ըսի, — ամէն անգամ Հեռաձայնելուս զեզի վատ լուր մը կու տամ... Այս անգամ մայրդ է:

— Ի՞նչ է, մօրս ի՞նչ պատահեցաւ:

— Դրան առջեւ ինկած գտայ զինքը: Ամպիրամն մը կանչեցի:
 — Լաւ ես ըրեր: Ո՞ր հիւանդանոցէն:
 — Ամենամօտը Մէն Ճանդն էր:
 — Ազէ՛կ, ես ուղղակի կ'երթամ հոն:
 Երկու ժամ ետք, բժիշկը եկաւ մեզի: Տխուր էր: Յնցուած: Խմելք մը տուի: Սպասեցի, որ ինքզինքը գտնէ ու տեղեկութիւն տայ:
 — Կաթուած է ունեցածը, — ըսաւ, — անկման պահուն ալ կոտորած է զիստի սուկորը, այդ տարիքին մէջ սուկորները փխրուն կը դառնան: Գէշը այն է՝ որ չեն ալ միանար... Իրականութեան մէջ, չգիտեմք, շենք կրնար ճշդէ՛լ թէ իր անկումը պատճառ եղաւ կաթուածին, թէ կաթուածը պատճառ եղաւ անկումին: Յամենայնդէպս, վիճակը լաւ չէ:
 Ելաւ սոքի, որ երթայ:
 — Ենթահակալութիւն Հողածութեանը համար, աս առաջին անգամը չէ, որ օգտակար կ'ըլլաք մեզի:
 — Դրան վրայ դրացի ենք, մեր պարտականութիւնը կատարեցինք:
 — Մնաք բարով:
 — Երթաք բարով:
 Քանի մը օր ետք, փունջ մը ծաղիկ տուած՝ հիւանդանոց գացի Մամա Ծոնթանան տեսնելու: Բանէ լուր չունէր: Ոչ զիս տեսաւ, ոչ ալ՝ տարած ծաղիկներս: Ապաքինման յոյս չկար:
 Լման վեց ամիս ետք, դեռ կ'ապրէր բուսական կեանքով մը, ու իր վիճակին մէջ բարեօրում չէր նշմարուեր:
 — Ժամանակի հարց է, — ըսաւ իր տղան օր մը:
 — Թող հարսը կեսրոջ ջով տանին ու դուռը գոցեն. բուլէպալէս ժամանակի հարցը կը կարգադրուի, — ըսաւ լուսահոգի Մանուկի այրին:
 — Բժիշկին կնոջը մասին շատ վատ կարծիք ունիս, — ըսի:
 — Պարոն Արամըս, դուն այդ օձը չես ճանչնար, չես ճանչնա՞ր... Դրամի համար հողին կը ծախէ՞... Ու նաեւ մարմինը՝ եթէ դնող ըլլայ...
 Յունիսի սկիզբը, հետը երկու սեւամորթ աղջիկ առած՝ Մատամ Փոմփասուր եկաւ ու բացաւ կեսրոջ յարկարամինին դուռը: Սեւերը սկսան դիմացի նպարավաճառէն փոխ առնուած խաւաքարտէ տուփերով, տսպրակներով ու ծրարներով, դուրս բերել ու աղբահաւաքին համար դրան առջեւ դիզել ինչ որ գտան ներքը:
 — Կետուրգ մեռա՞ւ, — հարցուցի այս աշխատանքներուն հսկող մատամին:
 — Դեռ չէ: Բայց յոյս չկայ: Երթալիք տեղը հողին տակն է: Մեզի միլիոն տուրք արժեց իր հիւանդութիւնը: Բարեբախտաբար, իբրեւ բժիշկի ընտանիքին մէկ անդամը, հիւանդանոցը զեղչ կ'ընէ մեզի. այլուպէս, կործանուած էինք: Վեց ամիս: Օրական քառասունական տոլարէն, դուն ըրէ հաշիւը... Ամբողջ տունը աղբանոցի կը նմանի: Բան դուրս նետելու չէ՞ր հաւատար այս պառաւը... Ափսոս, որ խելք չըրի ու տունը օր առաջ չպարպեցի. հիմա վարձու տուած ու քանի մը ամսուան վարձ գանձած կ'ըլլայի...
 Տունը անմիջապէս մաքրել ու ներկել տալէ ետք՝ դրան առջեւ ՎԱՐՁՈՒ ՍԵՆՆԱԿ-ի ծանուցում մը գրաւ ու կլաւ դնաց:
 Յաջորդ օրը եկաւ ինծի, հարցնելու համար, թէ հետաքրքրուող եղա՞ւ:
 — Զգիտեմ, — ըսի, — ինչո՞ւ մեր հետաձայնի թիւն ալ չէք դներ ծանուցման տակ:
 Դրաւ: Յետոյ դարձաւ ինծի.

- Կրնա՞մ բանալին քեզի ձգել... Եթէ մէկը հետաքրքրուի ու տեսնել ուզէ, խնդրեմ, բաց՝ ու ցոյց տուր:
- Գի՞նը, — Հարցուցի, — Հարցնողին ի՞նչ դին պիտի տամ:
- Գի՞նը ամսական 160 տուար է:
- Լաւ: Ամսական 160 տուար:

Մամա Գոնթանայի մահուան լուրը շտուին մեզի. ոչ ալ թարման մանրամասնութիւններն իմացանք: Գերեզմանին ուր ըլլալն ալ չգիտցանք, ու չկրցինք իբրև վերջին յարգանք, ծաղիկ մը նետել վրան ու Գոնթա մը խօսք բռնի իրեն, լուր տալ անցած դարձածի մասին:

— Քա, պարոն Արամըս, դրամ տուած՝ ու թաղուելու հող չե՛ն գրնած. ձգած են, որ իբրև անտէր մեռել՝ թաղուի Բրուտին Արաբը(*):

Ժամանակ մը ետք մոռցանք զինքը: Մենք ալ մեր հոգերն ունէինք: Սեպտեմբերին, զարոցական վերամուտէն ճիշդ մէկ շաբաթ առաջ, օր մը, երբ մեր պարտէզը նստած երկար բաժաններու մէջէն զովացուցիւ կը խմէինք քանի մը բարեկամներու հետ, սպիտակ միսի սքըլթ՝ ու բաց երկնազոյն շապիկ հագած, դեղուհի մը մօտեցաւ մեզի ու մպտելով ձեռքը երկարեց ինձի:

— Անժեկա՛... Ո՞ր բարի հրեշտակը ձեռքէդ բռնելով քեզ հոս առաջնորդեց... Որքա՞ն տուն է չե՛նք տեսած քեզ... Մեզ բուրդովին մոռցա՛ր...

— Փափառ տեսնելու եկայ, — ըսաւ, ու լռեց՝ ջանալով կարդալ այս յեղափոխական յայտարարութեան մեր վրայ ձգելիք տպաւորութիւնը:

— Իրա՛ւ... Չե՛մ հուսատա՛ր:

— Հաւատա՛ւ:

— Պատմէ, — ըսի ու թեւէն բռնելով՝ զինքը տարի պարտէզի հեռաւոր խորքը, որ միւսները չլսեն իր պատմութիւնը, ու, թերեւ ալ, ինք չենդուրս ա՛նոնց, օտարներու ներկայութիւնէն:

— Սորպոնի դասախօսութեանց հետեւելու համար Փարիզ երթալու միտք ունիմ: Եկայ, մօրս կամքին հակառակ, հայրս տեսնելու:

— Կը հասկնամ, — ըսի, ու անմիջապէս դիտեալ ուզեցի, թէ տեսակցութեան արդիւնքը ի՞նչ եղաւ:

— Մայրս իրաւունք ունէր: Դէպքերն ալ լաւ չդասուորուեցա՛ն: Բայց կ'արժէր, հետաքրքրական հանդիպում էր:

— Սպասէ. երկու աթոռ բերեմ, նստինք որ պատմես:

— Որոշած էի անպատճառ զինքը տեսնել, — ըսաւ ան, աթոռին վըրայ տեղաւորուելէ ետք: Գիտէի, թէ ան կ'իմը, օրհակ շան պէս, կը հակէ դրան առջեւ: Ես առջի միամիտ ու անփորձ աղջիկը չե՛մ:

— Կեցցե՛ն:

— Պատրաստուած էի: Երբ ներս մտայ, ուղղակի դասի մօտը ու ըսի,

(*): Բրուտին Արաբը: Երբ Յուդա Քամ արծաթի փոխան իր Տէրը մտանել: Եւս գրեցայ ու ինքզինքը կայծցեց, արեւմտեք չուպցիմ գայն քաղի իրենց գերեզմանատուն մէջ: Քամ արծաթով գնեցին Բրուտին Արաբը՝ ու Յուդան քաղուեցաւ հոն: Ամ օրեւ ի վեր ամէն խաղա՛մ ունի իր Թրուտին Արաբը, ուր կը քաղուին քաղք անուր մեռելները իրարմ վրայ, քով քովի, քաղաքուած սման փայտէ սնուկներու մէջ:

Թէ բժշկը տեսնել կ'ուզեմ : Հրաւիրեց, որ իր դիմացի աթոռին վրայ նըստիմ ու քարտըս լեցնելու համար պատասխանեմ իր հարցումներուն :

— Անունդ, ինչքեմ :

«Տուր ընկերուհիներէն մէկուն անունը : Հասցէ, հեռագրային թիւ, տարիք, ամէն բան, կէս ուղիղ, կէս սխալ, տուի : Ըսու, որ դիմացի աթոռներէն մէկուն վրայ նստիմ՝ ու սպասեմ հերթիս : Այդ հերթի սպասումը դարու մը չափ երկար թուեցաւ ինծի : Ի՞նչն ըսես, աչքը վրայէս չէր հեռացրներ, ու, ամէն ակնարկս բռնելուն՝ կը ժպտէր հին ծանօթ բարեկամուհիի պէս : Վերջապէս հերթը հասաւ ինծի ու զրկուեցայ ներս : Գունքերուն մազերը ճերմկելու վրայ եղող մարդու մը ներկայութեանն էի : Մարդու մը, որ հայրս էր՝ ու միտմամանակ՝ օտարական մը... Սիրտս արագ կը բարախէր : Առանց հրաւիրի սպասելու՝ նստեցայ աթոռի մը վրայ ու սպասեցի :

«Աս մարդը հայրս է, իր արիւնը կը կրեմ երակներուս մէջը, կը կըրկնէի ինքզինքիս անընդհատ :

— «Ուէ՛լ, երկն լեյտի, ի՞նչ կրնամ ընել քեզի համար, գժգոհութիւնդ ի՞նչ է, — հարցուց :

— «Նընկ լէյտին անուն չունի՞ :

— «Գեղի տեսնամ, — ըսաւ հետո ներս բերած քարտիս վրայ աչք մը նետելով :

— «Ձուք տեղը մի փնտրեք, այդ անունը իմս չէ :

— «Ձեմ հասկնար :

— «Ձիտ չե՞ս ճանչնար :

— «Ճանչնալու եմ :

— «Ի՞նչ գիտնամ, ուրիշ հայրեր, սովորաբար կը ճանչնան իրենց զուակները... Ես քու աղջիկդ եմ... Գու արիւնը կը կրեմ երակներուս մէջ : «Գոնաստեցաւ :

— «Ի՞նչ կատակ մը չէ՞, որ կ'ընես, — ըսաւ անձկութեամբ աչքերուս մէջ նայելով :

— «Ձէ՛, կատակ չեմ ըներ : Եթէ մոռցած չես այսքան տարիներէ ի վեր, անունս Անթեյիկն է :

— «Օ մայ Կա՛տ, օ մայ Կա՛տ... (Աստուած իմ)

«Կը տատապէր : Ու ես, իր աղջիկը, դիմացը նստած անտարբեր կը գիտէի իր տուապանքը :

— «Ինչպէ՞ս ներս մտար, — հարցուց, գիւտ մը ընողի պէս :

— «Գեղծ անուն մը տուի :

«Ոտքի ելաւ ու գնաց ստուգելու, թէ սպասման սրահը առաջնորդող դուռը լու մը փակ է : Յետոյ եկաւ ու քովս նստեցաւ կաշեպատ լայն աթոռին վրայ : ձեռքս առաւ իր լայն ափին մէջ ու վրան ծռելով՝ համբուրեց բազմաթիւ անգամներ :

— Օ, մայ Կա՛տ...

«Մեղքեցայ : Հակառակ փափաքիս, հակառակ կամքիս, աչքերէս արցունքները հոսիլ սկսան : Կը ժպտէի անընդհատ, բայց արցունքներս կը հոսէին, կը հոսէին...

«Հանեց իր թաշկինակը ու գուրգուրանքով չորացուց զանոնք :

— «Ներէ՛, բալի՛կ, պէ՛շ, շա՛տ պէ՛շ հայր մը եղայ...

«Հեկեկալ սկսայ : Այս անգամ՝ բարձրաձայն :

«Ձէի կրնար յուզումնալի այս հանդիպման պահը օգտագործել՝ գուրգուրան ծախսերուս կամ թոշակիս մասին խօսք բանալու համար : Ծիլը պիտի

չըլլա՞ր... Ոտքի ելայ, ձեռքս երկարեցի իրեն, մնաք բարով ըսի ու ելայ դուրս։ Նախ քան դուռը բանալս՝ կեցուց զիս, գրպանէն տասը տոլարնոց մը հանելով, դրաւ ափիս մէջ։

— Չ'ուրս ելած պահուէ անը տուր, — ըսաւ։

— Պարոն Հէյլըզ, այդ կիներ ի՞նչ ժողական դորութիւն ունի, որ այդքան կը վախնայ իրմէ։

— Ձեմ խորհր, թէ կը վախնայ։

— Հապա ի՞նչ։

— Հաւատա՛ չգիտեմ. այդ մասին չեմ խորհած։ Մայրիկդ ինչպէ՞ս է, ի՞նչ կ'ընէ, — Հարցուցի նիւթը փոխելու համար։

— Կը ճանչնաս զինք։

— Ճանչնալն ալ խօսք է. մինչեւ քու ծնիւղ ու ատկէ ալ բաւական վերջը դրացիներ էինք։

— Այո՛, ժողով։

— Մայրիկդ չի՞ խորհր վեբամուսնանալու մասին, դեռ երեսասորդ ըլլալու է ու սիրուն։

— Ձե՛ս գիտեր, թէ մայրս ջերմեանդ կաթովիկ է։ Մեր եկեղեցին չ'ընդունիք նման ապահարդանի օրինաւորութիւնը։

Մեծ ճիգով ճաշի վար դրինք զինքը։ Հեռաձայնեց տուն ու արտօնութիւն առաւ ժօրմէն, աւելի ուշանալուն՝ քան ճաշի մնալուն համար։

Ճաշէն ետք, մեր օրհնութիւններով ու կրկին մեզի այցելելու հրաւերներով, ճամբեցինք զինքը։

Այն օրէն ի վեր չենք հանդիսած։ Միայն Մատամ Փամփատուրն է, որ շարաթը երեք անգամ, Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը իր սեւ շոֆէրով ու շունով կու գայ մեր գեղը։ Կը սպասէ, որ դուռը բացուի իրեն համար, որ ինք տոտիկ-տոտիկ ելլէ դուրս, բանայ բժիշկին օֆիսը ու սաքը ոտքին վրայ նետած՝ սպասէ, որ յաճախորդները գան, նստին, հերթի սպասեն ու վճարելով, նոր ժամադրութեանց թուականները առնեն ու մեկնին։

Հիմա տունին աէրը ինք է, գիտեմ։ Օր մը բժիշկը ըսաւ, թէ ամէն բան դրած է իր կնոջ անունին. տուն, տեղ, ամէն բան։

— Ինչո՞ւ, — Հարցուցի։

— Է՛, աշխարհ է, անկուշտ, խարդախ մարդ շա՛տ. օր մը անոնցմէ մէկը կ'ելլէ ու, իբր թէ սխալ դարմանած ըլլամ զինքը, դատ կը բանայ դէմս, Դուն եկուր եւ ել մէջէն։ Մեր դատաւորները միշտ աղքատին, գործաւորին կողմը կը բռնեն ու անիրաւ վճիռներ կու տան։ Այս ձեւով, թող ուղածնուն շափ անիրաւեն զիս, ի՞նչս պիտի առնեն, եթէ բան չունիմ... Ինչպէ՞ս եղաւ, որ տունը բժիշկին մնաց, ու բժիշկն ալ իր կնոջ անունին գրեց զայն՝ խելքս չհասաւ։ Մամա Յոնթիանան ըսած էր ինձի, թէ «երբ մեռնի՛ ամէն բան իր բալիկին անունին դրած պիտի ըլլայ»։

Եթէ միայն մեռնիւնքուն հետ յարսերութեան մտնելու միջոց ըլլար... ար... ար...

ԱՐՄ ՂՍՅԿԱԶ

Ծ Ո Վ Ի Ե Ր Գ Ե Ր

Եկել եմ ես...

Եկել եմ ես
 Փրփրադէզ ամբոյսների ծովի միջից՝
 Առած հոգիս նաւարեկեալ՝ իմ ափի մէջ,
 Եկել եմ ես՝ խոժոռադէմ՝
 Ու կանգնել եմ, ահա՛, քո դէմ՝
 Ծո՛ւլ իմ ծախ,
 Որ կատաղի երգդ լսեմ,
 Յանձնուեմ անհուն քո գայրոյթին,
 Քո խշշոցին, խշխշոցին,
 Ջարկուեմ կրծքիդ կաթնափրփուր,
 Սուգուեմ ծոցում քո տարփագին,
 Մաքրեմ փռջին ես իմ հագու,
 Ժանգը՝ սրտի իմ հրակէզ.
 — Եկել եմ ես, եկե՛լ եմ ես...

Երբ հասայ ափին...

Երբ հասայ ափին,
 Ուռել էր կուրծքը գայրոյթից սեեզ.
 Թափահարում էր բաշը հողմածեծ
 Ու փրփրերախ՝ լեզի էր թփում ու թափում անէծք...
 Մերթ իր խրտնած ձիերն էր էջում վրաս սանձարձակ,
 Ու մերթ նահանջում ու վրնջում էր սու երկնքի տակ...
 Մօտեցայ... դրի ոտն իմ յանկարծ իր ասպանդակին,
 Յանձնուեցի իր հրայրքին վայրագ,
 Ու փափացի ես իր ականջին...
 — Ես սիրում եմ քեզ.
 Սիրում եմ, սիրում՝ աչքերդ կանաչ, վարսերդ մարմանդ.
 Կապոյտ գայրոյթդ, խշշացող մութդ, ներմակ մութդ.
 Թէկուզ ինձ խեղդես՝ ես սիրում եմ քեզ:
 Եւ նա բացեց լայն թևերը հզօր
 Ու անդնդախոր ինձ գիրկն առաւ,
 Ապա՝ խաղաղուեց հանց մի երեխայ
 Իմ կրծքի վրայ...

Պահել է շունչը...

Պահել է շունչը ծովը մերկացած՝
 Շրթունքը սեղմած երկնքի շրթին.
 Վազում է փոքրիկ մի ալիք յանկարծ՝
 կանաչ ծիծաղով, խայտամեով գուարբ-
 Ու նետում իրեն բազուկներին մէջ:
 Շոյում եմ իր մերկ կուրծքը ձիւնաթայր,
 Փշափաղում է իրանը մաքուր
 Ու փախչում արագ,
 Դառնում է փրփուր...

Խենթութիւնը ջրերի...

Գիշերն ամբողջ մոնչաց առիծի պէս վերաւոր.
 Նրա ձայնից անարեկ՝ ականջները վեր ցցած
 Քնի եղնիկը մնաց արթուն մինչեւ առաւօտ...
 Ալիքը երեց ալիքին, առաջ ընկաւ անհամբեր...
 Փշրեց գլուխը ժայռի դէմ ու սպաննեց փոքր մի ձուկ
 Իսկ սառնարին ձուկը մեծ այդ աղմուկից նեղացած՝
 Իջաւ խորքերը ջրի,
 Եւ յուսահատ պատմեց նա
 Ոնրի մասին, որ գործեց խենթութիւնը ջրերի...

Ծովը բարձրացել է...

Ծովը բարձրածել է.
 Դրօշակները սեւ են...
 Ես՝ ափին, հոգիս՝ բաշին ալիքի՝
 Մոնչում է անձայն...
 Ծովը բարձրացել է,
 Մերժում է իջնել.
 Դրօշակները սեւ են:
 Մերկ ստեփրիս սողում են ննիներ.
 Մրրկահաւը մագերս է կտցում:
 Ծովն ու ես,
 Եւ ու ծովը
 Բարձրացել ենք:
 — Տո՛ւր ինձ ձեռքդ,
 Բարձրածի՛ր...

ԱՐՄԱՆՏ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԱՅՆ ԽԵԼՕՔ, ՊԶՏԻԿ ԱՂԶԻԿԸ

Մեր երեք ընկերներուն երիցագոյնը ես էի, սակայն երեք քօրերէն ինծի բաժին ինկաւ ամենակրտսերը՝ Էլօն:

Մեզ իրարու շնորհայացուցին: Խընդրեցանք ինքնաշարժին մէջ ու ճամբայ ինկանք: Ընկերներս կը շաղակրատէին: Միայն լուռ էինք ես ու Էլօն:

Էլօն դիւրամտելի չէր թուեր երբեք իր քօրերուն նման: Հաղիւ տասնեւեօթ տարու, արդէն ամէնէն հասակաւորն էր: Ոսկի ծամերը ուտերուն վրայ կը հանդէտէին, իսկ խաժ աչքերը խոնարհած, լուռ ու սառ, կարծես կը սպասէր, արանց դիտնալու, թէ որո՞ւ, ինչի՞:

Շարունակ աչքիս ծայրովը կը զըննէի զինք: Ի՞նչ շնորհալի էր իր դէմքին արտայայտութիւնը եւ ի՞նչ հպարտ կեցումները:

Առջին վայրկեաններու հետաքրքրութիւնս քիչ-քիչ փոխուեցաւ վերապահ ինքնամփոփումի ու տակաւ դայրձայ երկչոտ եւ տխուր: Ո՛ր, վստահօ-

րէն այս երեկոն տառապանքի ու անկարելի տենչանքներու ժապաւէն մը պիտի ըլլար:

Ինքնաշարժէն իջած ասնն, Հրաչ ականջիս կը փսփսար.

— Ազուր է, լա՛կո՛ւս, ա՛լ դժգոհելու պատճառ մը չունիս... անուշ ըլլայ:

Ես տխուր ժպետով մը դուրսս կ'օրօրէի ու միայն այդքան: Վստահ դիտէի, թէ բոլորովին անհաղորդ էինք իրարու, ու մինչ ես եկած էի հանելի ժամանցի մը հեռանկարով, ինք պարզապէս մունջ գերակատար մըն էր, որ կը սպասէր ստուերին մէջ:

Յած, կամարակապ դուռնէ մը ներս մտանք:

Գրեթէ մռութ էր: Կարծիր լամբերու աղօտ նշոյլներ հազիւ կ'երանդաւորէին խաւարը: Հեշտալուր նուագի մը հընչիւնները կը ժարէին զբոսաձայրին մռթ անկիւններուն մէջ ու կը լուծուէին գիւղընդիսան գոյգերու փսփսուքներուն:

Թաւուտքին մէջ դժուարութեամբ

յառաջացող խումբի մը նման կը քա-
լէինք, մեր կոխած տեղերը հազիւ տես-
նելով:

Մեզ կ'առաջնորդէր սպանեակը, ու-
րուն կը հետեւէր Հրաչ, խանդավառ ու
աղմկալի: Անոնց ետեւէն կը քայլէին Տիգ-
րան ու աղջիկները, իսկ ես յետապահն
էի: Մեր անցքին վրայ, զոյգերը կը
չտկուէին, ինքզինքնին կը հաւաքէին, կը
ժպտէին, մինչ Հրաչ, ամէն քայլափո-
խին կը ճշար:

— Օլէ՛... օլէ՛... —

Տիգրան, նոյնքան խանդավառ, կը
պատասխանէր:

— Եստ՛... մամ՛... —

Ծրկու քոյրերը երջանիկ թուշննե-
րու նման կը ճուռոզէին ու կը քրքը-
լին: Էլիօ կը քայլէր զխահակ ու ինքնամ-
փոփ, կուտափնարան տարուող մարտի-
րոսի մը նման:

Ես՝ ստուեր մը: Այդ վայրկեանին
չէի կրնար վստահօրէն ըսել, թէ կ'ապ-
րէ՞ն, կը շնչէ՞ն, կը քայլէ՞ն...

Ընդարձակ լարելերն թոսին ամայի
մէկ անկիւնը դրաւեցինք: Տակաւ, մեր
տեսողութիւնը ընտելացաւ խաւարին ու
արդէն սկսանք յստակօրէն ամէն ինչ
զանազանել:

Առաջին դաւաթները շտա պարպը-
ւեցան: Լեցուն էր միայն իշոյի դաւա-
թը:

— Ինչո՞ւ չես խմեր, — հարցուցի
երկշտա, — խմէ՛, կը փոխուիս:

Զպտասխանեց: Նոյնիսկ նայ-
լածքը ինծի չդարձուց: Աչքերը սեւե-
ռած էր անորոշ անկիւնի մը ու կը մնար
անշարժ, անասելի դառնութիւն մը դէմ-
քին վրայ:

Գեռ պէտք է գաւաթ մը եւս խմէի,
որպէսզի երեսս պատուէր ու կարենայի
սոսանց վերաւորուելու դարձեալ գրոհ
տալ:

— Պիտի չտախկեմ այլեւս, որ խը-
մես, — հանդարտեցուցի զինք, — սա-
կայն առնուազն հետս խօսէ, զայո՞ ըսէ,
գոչ՞ ըսէ, «չնորահակալ եմ» ըսէ, վերջա-

պէս բան մը ըսէ, «հետս մի՛ խօսիր» ը-
սէ... —

Այս անգամ ըմբոստ աչքերը ինծի
դարձուց, շրթները շարժեց բան մը ըն-
լու համար, սակայն ձայնը կոկորդին
մէջ խեղդուեցաւ:

— Կենացդ, — ըսի դաւաթս վերցը-
նելով ու ցած սեղանին վրայ հանդիշող
էր դաւաթին զարնելով, — կենացդ,
խմէ՛, որ փոխուիս:

Ես խմեցի, իսկ ինք դաւաթին իսկ
չդպու: Միայն ժպտեցաւ ու մեղմ ձայ-
նով մը պատասխանեց:

— Ձեմ կրնար խմել, վարժուած
չեմ:

— Ո՛հ, շնորհակալ եմ, շնորհակալ
եմ, որ անուշ ձայնդ լսելու բախտաւո-
րութիւնը ունեցայ:

Հրաչի ու Տիգրանի խանդավառու-
թիւնը զազաթնակէտին հասած էր: Ա-
նոնք կը պարէին, կ'երգէին, մերթ կը
համարուէին, դաւաթները իրարու ե-
տեւէ կը պարպէին ու ապա, դարձեալ
կը կատղէին:

Սիրան, սկիզբը վերապահ՝ պզտիկ
քրոջ ներկայութեան պատճառաւ, քիչ
քիչ տաքցած էր ու ինքնիրմէ ելած: Սե-
ղա, միջնեկը, միայն կը քրքըտր, անվե-
րապահօրէն յանձնուած Տիգրանի խը-
նամքներուն:

Այս բուրբը բնաւ չէին վրեպեր իշոյի
խուզարկու աչքերէն: Ան երբեմն դէպի
ստալ կը թեքէր ու սատող նայուածքը
կը դամկը քրոջ աչքերուն:

— Սեղա՛, քիչ մը ինքզինքդ զսպէ՛,
չե՞ս ամչնար:

Կ'ուզէի զինք զբաղեցնել, ուշադրու-
թիւնը քոյրերէն հեռացնելու համար,
սակայն բուր ճիգերս կը մնային սպառ-
դիւն:

— Ոե՞ղճ պզտիկ ուղղիկս, կիրակ-
նօրեայ դպրոցի մէջ կը կարծես ինք-
զինքդ:

— Այս ի՞նչ աղտոտութիւն է, քոյ-
րերս, ափսո՞ս... — ըսաւ հատաչեղէն:

— Դպրոցակա՞ն ես:

— Այո, — պատասխանեց, նայ-

աածքով հետեւելով տեղափոխուող քոյրերուն:

— Լաւ ուրեմն, — ըսի, — պատշաճ է, որ նախ ինքզինքնիս ներկայացնենք իրարու:

— Իմ տնունս էլ լօ է, — ըսաւ, — բուն անունս Եղիսարէթ է, սակայն էլ օ աւելի արդիական կը հնչէ:

— Քանի որ արդիականը այնքան մօտ է սրտիդ, ալ ինչո՞ւ կ'ընդգլխոս այս արդիական բարբերուն ի տես:

— Երանի՛թ է այս բոլորը չտեսնէի, — հառաչեց արտասանքով, — շես հասկնար, կարծես ամբողջ աշխարհ մը կը կործանի շուրջս: Դուն հիմա կը կարծես, թէ զէմքիս կարծութիւնը լոյսերէն է, ո՛չ, ամօթէս է: Աչքերուս չեմ հաւատար...

Ապա, փէշերը հաւաքելով զդուշացուց դիս.

— Ուշագրութիւն, չմտնես ինծի, — ըսաւ երկչոտ, — ես անոնց քոյրն եմ, սակայն տարբեր եմ, մի՛ կարծեր, որ օր մը թոյլ պիտի տամ մարդոց, որ հետս արդպէս վարուին:

— Դուն շատ հետաքրքրական մէկն ես, — հաստատեցի, — արդէն հասուն աղջիկ ես, սակայն չեմ գիտեր ինչո՞ւ մարդոցմէ հետու ես մեծցած ու գրկուած ես հողեկան ու զգացական ամէն տեսակ հանոյքէ:

— Հանո՛յք, — հեղնեց, — եւ այս բոլորը հանոյք կը կոչես: Ինծի համար հանոյքը ուրիշ իմաստ ունի:

— Շատ պիտի ուզէի, որ քիչ մը աւելի մանրամասնօրէն խօսէիր հանոյքներուդ մասին:

— Կ'ազօթեմ, — ըսաւ լուրջ, — ընտրուած ու բարոյալից գրութիւններ կը կարդամ, Եղիկներու հաւաքածոս կը ճոխացնեմ, քիչ մը ձեռագործ կ'ընեմ... այսքանը բաւական չէ՞...:

— Դուն շատ սիրուն աղտիկ աղջիկ մըն ես, — ըսի յուզուած, — շատ սիրուն ու միամիտ, պղտիկ ու անմեղ թռչնիկ մըն ես:

— Քոյրերս մէյմէկ սատանաներ են

եղեր, արհա՛րհ, — հառաչեց, — իսկ այդ տղաքը, այդ սրիկաները...

— Ընկերներս, — ծիծաղեցայ, — շատ լաւ տղաք են:

— Ես երբեք պիտի չուզէի, որ դուն ալ հետս այդպէս վարուէիր:

— Ինչո՞ւ կը պայտաբերս ինքզինքիդ դէմ: Ի վերջոյ, եթէ ձեռքս տանիմ մազերուդ, ու այսպէս դուրսեմ դանոնք, այս խեղճ ոսկի մազերդ, որոնք, արհա՛րհ, օր մը պիտի ճերմկին, եթէ այսպէս շոյեմ մազերդ, ու եթէ այս պարզ զգուանքով թոյլ տաս, որ հոգիս լեցուի, ի՞նչ մեղք դործած կ'ըլլաս, մեղանշած կ'ըլլա՞ս պատշաճութեան դէմ:

Վայրկեան մը վայրի աչքերը վրաս սեւեռեց, ապա նայուածքը դարձուց ձեռքերուս: Տակնուվրայ եղած էր:

— Արդար ըլլալու համար, — ըսաւ, — խոստովանիմ, որ այդ զգուանքդ իմ ալ հոգիս թրթռացուց: Սակայն չե՞ս կարծեր, որ կը մեղանշեց, չե՞ս կարծեր, որ բան մը կը պակսի մեր հոգիի մաքրութենէն:

Այս պղտիկ աղջիկը համակ հմայք էր, իր վայրի հողին, թրթռուն գեղեցկութիւնն ու խոսվարոյզ խօսքերը կը գինովցնէին դիս: Պազանի մը պէս կը սպասէի պատեհ առիթին՝ զինք թղկտելու համար, սակայն, չեմ գիտեր ինչո՞ւ, ինքզինքս կը զսպէի, սանձելով մէջս եռացող ցանկութիւնը:

— Նախ եւ առաջ կը խնդրեմ, որ ումպ մը առնես այս ըմպելիէն:

— Ձե՞ս կարծեր, որ մեղք կը դործեմ:

— Ի՞նչ մեղք, ի՞նչ բան, — ծիծաղեցայ:

Պաւաթը վերցուց զողողով, տարաւ շրթներուն՝ նայուածքը յատած ինծի, կարծես օգնութիւն հայցելու համար: Ես զաւաթին սակէն վերցուցի: Մեծ քանակութեամբ ալքոլ կուլ տուաւ, փոքրօք տաց ու հազաց:

— Հիմա մեղ պիտի խայտառակես, զաւաթը մարդավարի բռնել անգամ չես գիտեր:

Գաւաթը վերցուցի ու շրթներուն մօտեցուցի: Հանդարտօրէն խմեց: Փակ աչքերէն ու դէմքին արտայայտութենէն դատելով, կարծի էր հետեւցնել, թէ խմածը դիւթական նեկտար մըն էր:

— Չափը մի՛ անցնէր: — Այս ի՛նչ համով բան է, — ըսաւ, — լեղի եւ համով, եղակուն է:

— Քիչ մը եւս սպասէ, — ըսի ժրպտելով, — երբ մի քանի ուժայ եւս առնես ու դուրսը տաքնայ, այն ատեն կը տեսնես, թէ ինչպէս կը մերկանայ հոգիդ, սիրտդ կը յորդի սիրով, մարմինդ կը մազնիտանայ ու մատներդ կը դառնան անհանդարտ...

Պէտք է խոստովանիմ, որ այս վայրկեանին արդէն ինքզինքս փոխուած կը զգամ: Չեմ գիտեր, կրնայ ըլլալ, որ խմիչքին ազդեցութիւնն է, կամ քու ընկերակցութիւնդ:

— Ո՛չ իմ ընկերակցութիւնն է, ո՛չ ալ խմիչքին ազդեցութիւնը, այլ քու իսկական անձնականութիւնդ է, որ ձերբազատուած է ամէն կապանքէ ու կաշկանդումէ: Եւ եթէ կրնաս, ճանչցիր ինքզինքդ. հիմա ժպտուն ես ու հրաշալի, չէնչորդ, միշտ զիջող ատմող...

— Ոնչո՞րեմ, մի՛ ծաղրեր, — ըսաւ ժպտելով, — կը զգամ, որ կեանքիս մէջ երբեք այսքան զուարթ ու երջանիկ եղած չեմ, միայն, որտեղ խորքը վախ մը կայ, վախ մը, որ կը մեղանշեմ, կը մեղանշեմ Աստուծոյ դէմ...

— Աստուծո՞յ դէմ, Աստուած ի՞նչ գործ ունի հոս:

— Աստուած ամէն տեղ է, — ճշդեց իր ջանալով, — արդեօք չե՞ն ըսած քեզի:

— Ըսած են, շատ յսած եմ, սակայն ես ատանկ պարսպ բաններ չեմ հաւատար:

— Աստուծոյ չե՞ս հաւատար, — ըսաւ սարսափաւար ու մատներով բերանը գոցելով, — մեղայ ըսէ, շո՛ւտ, մեղա՛յ ըսէ, շո՛ւտ, մեղա՛յ ըսէ:

— Գիտե՞ս, — ըսի, — որոնք կը հաւատան Աստուծոյ, ապուշները կը հաւատան Աստուծոյ, եւ շատ խելացի

մարդիկ: Ապուշները կը հաւատան, վախի զգացումէն մղուած, ստրուկի հոգեբանութեամբ՝ անպայման մէկու մը հոգեմահաւորութեան սպաւիճելու մտահոգութեամբ, իսկ շատ խելացի մարդիկ կը հաւատան, անկասկած հասկնալով ու լուծելով Աստուծոյ դոյութեան ու տիրապետութեան անեղծուածը: Ես, գիտեմ, ապուշ չեմ, սակայն ինչ մեղքս պահեմ, այս հանելուկը լուծելու չափ խելացի ալ չեմ զգար ինքզինքս:

— Ոնչո՞րեմ, — ըսաւ, — արդէն ամէն տեսակ մեղքեր գործելու վրայ եմք, դոնէ՛ Աստուծոյ անունը պարսպ տեղը բերաննիս շառնենք:

— Ե՛ս ալ այդպէս կը մտածեմ, խօսինք տարբեր բաներու մասին, օրինակի համար, խօսինք արուեստի մասին:

— Այո, — ըսաւ գաւաթը վերցնելով եւ ուժայ մը կը խմելով, — խօսինք արուեստի մասին:

— Այո, նախ կ'ուզեմ քո՛ւ կարծիքդ հասկնալ արուեստի մասին:

— Ի՞մ դիտցածս մեծ բան մը չէ, դիտեմ միայն, որ երզն ու նուազը արուեստ են, զիրն ու դրականութիւնը, նրկարչութիւնն ու քանդակագործութիւնը արուեստ են, եւ դեռ հեռարուծութիւնը արուեստ է...

— Ինձի համար, — ըսի, — արուեստը մասնաւոր ընտրուած մը ունի: Ամէն ինչ, որ զեղեցիկ է ու զգլխիչ՝ արուեստ է: Ամէն ինչ, որ հոգին կը լիցընէ՝ արուեստ է: Կրնայ ատիկա ըլլալ խելացի խօսք մը, յուզիչ եղանակ մը... օրինակի համար, այս վայրկեանին, զուն ինքը արուեստի զլուխ-գործոց մըն ես: Ոսկի մագերղ ու հեշտանքով դունաւորուած դէմքդ, սուէ նկարիչ պիտի չկրնար վերարտադրել պատաստի մը վրայ: Իսկ ձայնդ ու շարժումներդ, չես գիտեր որքա՞ն շնորհալի են...

— Կատակը մէկդի, — ըսաւ ժպտելով, — ըստ քեզի մ'ըն է ամէնէն տպաւորիչ արուեստը:

— Ի՞մ կարծիքով, արուեստներու առաջինը՝ նուագն է: Նուագը, երբեմն ա-

ասնձին, երբեմն երգութեան, ամէնէն մասշէի ու ազգեցիկ արուեստն է: Պէտք է նկատած ըլլաս, որ նոյնիսկ անասուններն ու երեխաները կ'ազդուին երգէն ու նուազէն: Երաժշտութիւնը ուղղակի աղբրն ունի հողիին հետ: Արուեստները գիտահատելու համար, մարդ պէտք է որոշ զարգացում մը ունենայ, սակայն երաժշտութիւնը մասշէի է բոլորին, առանց բացառութեան, քաղաքակրթուած մարդուն թէ վայրենի լեռնցիին, ասունին թէ անասունին:

Գաւաթները լեցուցի: Անուշ եղանակ մը սկսաւ նուազուիլ: Հարցուցի, թէ չէ՞ որ սեզնոն պարել: Մերժեց, ըսելով՝ թէ արտակա շատ աւելի լաւ էր ու հաճելի: Այսպէս, գլուխ-գլխի, սեւէ մէկուն հետ խօսելու բախտը չէր ունեցած:

Այս արտակարգ խանդավառութեան մէջ, ձեռքէն բռնեցի ու ոտքի հանեցի:

— Պարենք, — ըսի կարուկ:
 Քնքոյ ձեռքը ափիս մէջ, քաշեցի գինք մինչև պարի փխարը, ուր արդէն մի քանի զոյգեր, գրեթէ անշարժ, կ'որորուէին մեղմանոյ մեղեդիի մը դանդաղ շարժումով:

Յանկարծ ժպտը չբացաւ. դէմքէն, լընացաւ ու աղաչական աչքերը ինձի յառաձ:

— Կեանքի մէջ առաջին անգամ է, որ պիտի պարեմ, ներողամիտ պիտի ըլլաս եթէ որեւէ անշարժութիւն ընեմ:

— Հոգ մի՛ ընեմ, — ըսի, — անշարժութիւնները իսկ աչքիս շնորհալի կ'երեւին: Միայն ինքզինքդ թոյլ ձգէ, դետին մի՛ նայիր ու ոտքերուդ մասին մի՛ մտահոգուիր:

Գանդաղ ու հեղասահ սկսանք պարել: Ձեռքը կ'այրէր ափիս մէջ: Միւս ձեռքովս պարուրած էի մէջքը: Մեր աչքերը իրարու սեւեռած էին, կուրծքը կը հանգչէր կուրծքիս վրայ ու շունչը կը խառնուէր շունչիս:

— Տեսա՞ր որքան լաւ կը պարես: Միայն կը ժպտէր, յանձնուած քրմայքիս: Կը գդայի, որ իր հողին կ'արեւկոծէր: Խուլ պայքար մը կը մղուէր իր

մէջ, մտքի ու սրտի պայքարը: Միտքը կը բռնանար զգացումներուն վրայ, կ'ուղէր ըլատել անոնց թռիչքը, կտրել սըրտին թրթոսացող լարերը, կ'ուղէր խաւարեցնել երջանկութեան ճառագայթումը. մինչ սիրտը կը տրոփէր արագ, արտակարգ ջերմութիւն մը կը համակէր իր էութիւնը...

Ուրիշ աւելի սուր պայքար մը կը մղուէր ի՞մ մէջս: Մտքիս մէջ կը պատկերացնէի անմեղ, սպիտակ գունձուկ մը, երկչոտ ու հլու, կանգնած զայլի մը դիմաց: Ապա կ'երեւակայէի հսկայ կրկնիկ մը, որուն ճիշդ մէջտեղը, հէք դատապարտեալ մը, ձեռքերը կապուած՝ կը սպասէր առիւծի մը, որուն միայն մռնչիւնը կը լսուէր տակաւին:

Առաջին եղանակը շատոնց վերջացած էր, սակայն մենք դեռ կը պարէինք: Իրարու փաթթուած՝ դանդաղ կ'որորուէինք: Այլեւս չէի գիտեր, արդեօք աչքերը բաց էին, թէ գոց, դէմքը ժպտո՞ւն էր, թէ ցանկութեամբ դաւկացած, որովհետեւ գլուխը յուշիկ դրած էր ոտին, ու կը պարէինք: Ես հմայիչի վիճակէս ելած էի այլեւս եւ դուցէ՛ հմայուածը ե՛ս էի: Ո՛չ, այլեւս ամէն պայքար դարձած էր մէջս, յանձնուած էի զղացումներու... Թուշը կը քուէր երեսիս, այնքան անուշ ու բուրումնաւէտ: Ո՛չ, այդ բոյրը, բոլոր վարդերէն ու մեխակներէն աւելի բուրումնաւէտ, կը խենթենայի, լըթներս կը պատէին իր ձիւնաթոյր պարանոցին վրայ, ձեռքերս իրարու կը միանային իր ետին ու կը սեղմուէին, կը սեղմուէին...

Ոտարը երանդաւորող կարմիր նըշոյններուն մէջ, հազիւ կը շարժէինք, վերացած ու զգայազիրիկ:

— Ահ, — կը հատաչէր, — երա՞զ է, իրակա՞ն է, ի՞նչպէս կրնամ գիտնալ, անշուշտ այս զգացումները Աստուած է տուած մարդուս, անանկ չէ՞, հը՞, ըսէ՛, անանկ չէ՞...

Ես, առանց լըթներս հեռացնելու իր ծոծրակէն, կը փոփոսայի:

— Չէ՞ որ Յիսուս ըսաւ, սիրեցէ՛ք զմիմիանս :

— Գիտե՛՛մ, դիտե՛՛մ, շատ անգամ լսած եմ, սակայն չէի գիտեր, որ ասոր համար ըսած է...

Բ.

Յաջորդ օրուան համար ժամադրուած էինք :

Այր ուզեք, որ իրենց թաղին ծայրէն առնէի զինքը : Գարոցին մերձակայքն ալ վտանգաւոր էր : Տան թաղն ու զպրոցին թաղը, Իր պզտիկ աշխարհին սահմաններն էին, ուրկէ անդին հազիւ թէ մի քանի անգամ անցած ըլլար : Հետուոր թաղ մը, որուն ծանօթ էր, դարձեալ անպատեհութիւն մը կը ներկայացնէր. աղղականներ կը բնակէին այդ փողոցին վրայ :

Սակայն, ի վերջոյ, դժուարութիւնները հարթուած էին :

Ուղիղ ու երկայն պողոտայի մը վըրայ, դանդաղ հետեւած էի իրեն ու սմայի տեղ մը, սարսափով ցատկած էր ինքնաշարժի մէջ :

Կը կարծէր, թէ ամբողջ աշխարհը մեզ կը դիտէր, թէ՛ ծանօթները կը հետապնդէին զինք եւ թէ իր այս անխոհեմ քայլը կրնար ծանր հետեւանքներ ունենալ : Հանդարտեցուցի զինք, ըսի, թէ երկրագունտը կը շարունակէր իր հոյսօյն յայտն ամէն օրուայ նման, թէ՛ արեւուն ներքեւ փոխուած բան չկար :

Ինք գրեթէ պատկած էր ինքնաշարժին աթոռին վրայ, դիրքերը կուրծքին սեղմած ու կծկուած՝ դուրսէն շտեմուելու համար :

Ձուզեցի ձաղկել խճուղիներէն թեւադրուած իր նախադուշութիւնները, թոյլ տուի, որ այդպէս կծկուած մնայ, մինչեւ որ քաղաքի արուարձաններէն դուրս եկանք :

— Հիմա կրնաս ազատ ու հանգարտ նստիլ, միայն ճամբու եզերքի ծառերն են, որ կը դիտեն մեզ, ու վստահ եղիք, ծառերը ոչ աչք ունին, ոչ ականջ, ոչ

ալ, մանաւանդ, լեզու, ձեր թաղի շատիս պատաներուն նման :

Ժպտեցաւ ու հանդարտ շունչ մը քաշելով շակուեցաւ :

— Ինչ սիրո՞ւն ճամբայ է, ո՞ւր կը տանի :

— Կը տանի դէպի երջանկութիւն, — բացազանչեցի խնդարով :

Ինք ալ խնդաց, ապա լըջացաւ ու ձեռքը զնկելով ձեռքիս վրայ, ըսաւ .

— Անշուշտ կը ներես, որ երէկ պայմաններ դրի հետզ պայտ համար : Գուցէ մանկական ու ռամիկ պանես, սակայն դիտես, առջին անգամ է որ... Ձայնը խեղդուեցաւ, կարծես պիտի արտասուէր...

Յանկարծ տիրութիւնը համակեց դէմքը ու ես պահ մը զղջացի այս ազագուն կոկոնը ծաղկամանէն դուրս բերած ըլլալուս համար :

Յոստացած, պատուոյ խօսք տուած էի, որ հետք պիտի վարուիմ պարկեշտօրէն :

— Սիրելի՛ս, մինչեւ հիմա ամէն ինչ բնականն կը գտնեմ : Եթէ հրաւերիս անմիջապէս դրական պատասխան տայի, կը համարձակիմ ըսել, որ պիտի կասկածէի պարկեշտութեանդ վրայ : Իսկ այդ պայմանները բոլորովին տրամաբանական կը դտնեմ ու երբեք՝ մանկական եւ ռամիկ :

Պօք տուաւ, որ մինչեւ մեր պտոյտին վերջը, պիտի ձերբազատուի ամէն տեսակ աւելորդ մտածումներէ ու մըտահոգութիւններէ :

— Գիտե՛՛ս ինչ, — ըսաւ կոնակը պատուհանին կռթնցնելով, — այս երկու օրուան մէջ ինչ նորութիւններ եկան կեանքիս մէջ : Սրիմակի համար, եթէ երէկ մէկը ըսէր, թէ այսօր տղու մը հետ ժամադրուելով պտոյտի պիտի ելլէի, առանձին, ինքնաշարժով պիտի հասնէինք այսքան հեռուները, պարզապէս ծիծաղելի պիտի դտնէի ու անարամաբանական :

Երկուսը երեկոյթը սկսած էր, ըստ իրեն, շատ ողբերգական ու ցնցող տե-

արաններով: Սակայն ջիւղէն Հաւ-
տըւած էր իրականութեան հետ, ու ող-
բերդութիւնը տակաւ փոխուած էր քնա-
րերգութեան...

— Ինչ քսանընտրութեամբ յանցաւ, սա-
կայն անթէ ինչն'ը պատահեցան ինծի:
Նախ քոյրերս եկան ու ըսին, թէ պտոյ-
տի պիտի երթանք: Ապա՝ տեսայ զեզ,
խոտոս ու անհաղորդ, վերջը այլ մութ
զժոխքը, ու առաջին արարին ախուր
վերջաւորութիւնը՝ քոյրերուս անպատ-
կառ վարմունքը: Երկրորդ արարը սկսաւ
անելի յուսատու ու անուշ... Գիշերը
զբեթէ չքնացայ: Կախարդուած էի ու
կարծես կը ըսէի մայրդ: Անկողնիս մէջ
ակամայ կը ժպտէի ու ինքնիրենս կը
փոփոսայի: «Ի՞նչն շատ խելօք պղտիկ աղ-
ջիկ մըն ես»: Ձեռն գիտեր ո՞րքան երջա-
նիկ կը զգայի ինքզինքս, ու այս վայր-
կեանիս, երբ երրորդ արարը շատոնց
սկսած է, չես գիտեր ինքզինքս որքան
թեթեւ ու ազատ կը զգամ, կարծես վան-
դակէն փախած թռչուն մըն եմ:

— Միտքերդ Հաւաքէ՛, պղտիկ աղ-
ջիկ, կարծեմ պիտի վերադառնաս վան-
դակդ:

— Այլեւս վանդակ չկա՞յ, — զոչեց
ուրախ, — այլեւս ոչ մէկ վանդակ չի
կրնար պարփակել Հոգիս, որ անուրջէ
անուրջ կը սաւառնի:

— Այս բոլոր նորութիւններուն մէջ,
ի՞նչ բանն է, որ ամէնէն շատ ապա-
ւորած է զեզ:

Պահ մը լրջացաւ եւ ուղղակի աչքե-
րուս նայեցաւ.

— Ի՞նչն: Ձէի երեւակայի, որ տը-
ղու մը ընկերակցութիւնը կրնար այսպէս
յեղաշրջել Հոգիս: Արտաքինով ու ար-
տայախոտութիւնով տարբեր տղայ մը
կ'երագէի ինծի ընկերակից, սակայն աբ-
սոր, մինչև զպրոցէն արձակուելս, մե-
այն քու պատկերդ տեսած եմ մտքիս
մէջ: Մի՛ ծիծաղիր, դասերէն զրեթէ
բան չհասկցայ, նոյնիսկ ընկերուհիներս
նկատեցին, որ փոխուած բան մը կար
վրաս: Գիտես, շատ յաւակնուս դարձած
էի, կը կարծէի, թէ թշուառ աղջիկներ

էին դասընկերուհիներս, ու տղաքը՝ ծե-
ծաղիլի երեսաներ: Կ'ուզէի փորձառու-
թիւնս պոռալ բոլորի երեսին, սակայն
ինքզինքս կը զսպէի, չէ՞ որ...

— Շատ խելօք ու պղտիկ աղջիկ մըն
ես, — եզրակացուցի ու միասին խնդա-
ցինք լիահագազ:

Ապա սկսաւ երգել շատ մեղմ, թըր-
թըռուն ձայնով.

Բայց ուրիշն է իմ փափաքը, տե՛նչ իմ
սիրտուս,
Սեւ սղիմ եմ անբըւմ ես, իմ անուշ
տաւիլ:

Մանօթ էի երգին ու բառերուն:
Պէտք է ըսէր՝ շէկ տղիմ եմ...

— Եթէ ինծի Համար է, որ շէկը
սեւի փոխեցիր, — ըսի խնդալով, — իս-
կապէս շափազանցեցիր, սեւը՝ շատ սեւ
է, ածուխի պէս, ապա շոր է ու անհա-
ղորդ, պէտք է թուի ըսես, կարծեմ:
Այդպէս աւելի պատշաճ է, աւելի բա-
նաստեղծական:

— Այո, այո, պէտք է թուի ըսէի,
սակայն չզտայ բառը: Ուրեմն՝
Թուի տղիմ եմ անբըւմ ես, իմ անուշ
տաւիլ:

Ի՜նչ մը կը փայլատակէր երջանկու-
թեամբ: Շարժումները թեթեւ էին ու
անհոգ: Շարունակեց երգել.

Նա սիրոյ երգս լսեց քայց անտէր մնաց,
Սիրտ ունէր, քայց չյուզուեց ու անցաւ
զկաց,

Հնչիր տաւիլ, թող այս գիշեր երգը
վարարի,

Սրտիս խնդումն ու կարօտը պատմիր
աշխարհիմ...

Ամէն մէկ բառին, աչքերուս մէջ կը
նայէր իմաստալից նայուածքով: Կը
զգայի, թէ այս պղտիկ աղջիկը բոլոր-
կած էր կիրքով, սակայն կը խուսափէի
իր նայուածքէն, ինքնաշարժիս ընթաց-
քը արագացնելով եւ ուշադրութիւնս
կեղբոնացնելով ճամբուն վրայ:

— Այս երգը շատ կը սիրէի, կը սի-
րէի իր անուշ եղանակին Համար: Սա-
կայն երէկ իրիկուրնէ ի վեր կարծես
երգերը ինծի Համար տարբեր նշանակու-

թիւն զգեցան, անոնց ամէն մէկ բառին մէջ որոշ իմաստ մը կը դտնեմ պահած, ու սիրտս կը հայի ամէն անգամ, որ երգեմ...

— Ատիկա կը փաստէ, որ այլեւս պղտիկ աղջիկ մը չես: Երբ քերթուածի մը կամ երգի մը նրբահիւս թելերը քակելու կարող կը դառնայ սիրտդ, կը նշտնակէ, թէ մեծցած ես, հողիդ հակամէտ է ծարաւի...

— Հիմա հաստատեցինք, որ մեծցիր եմ, եւ հաստատեցինք նաեւ, թէ հողին հակամէտ է ծարաւի, սիրոյ ծարաւի: Ի՞նչ պէտք է ընեմ ուրիմ, յազկցնելու համար այդ ծարաւը:

Պղտիկ աղջիկը ծանր հարցի մը տուն կը դնէր դիս:

— Ես կը կարծէի, թէ իւրաքանչիւր հարցումիս պատասխան մը ունիս:

— Պիտի սպասես, սիրելիս, դեռ կողոն մըն ես, պիտի սպասես, որ մէկը զայ քեզ քաղելու: Գիտեմ, զատն է սպասումը, մանաւանդ անորոշ ելքի մը սպասումը, սակայն այս պարագային, սպասելէ ուրիշ բան մը չի մնար քեզի:

— Կ'ուզես զիս վերադարձնել վանդակիս, կ'ուզես հնարոյր բարձրուստրուկը դարձնել զիս, ո՛չ, ո՛չ, անգամ մը ըմպեցի կեանքի քաղցրութիւնը, ալ ի՞նչպէս կ'ուզես, որ զսպեմ ինքզինքս, թաղեմ երազներս, սանձեմ հողիս թռիչքները, ո՛չ, ուրիշ ելք մը զըտիր, խնդրեմ...

Ինքզինքը կորսնցուցած էր, յանկարծ թեւիս վրայ ինկաւ: Ես հաղի ինքնաշարժին ուղղիչը կրցայ զսպել, արդեւակները ճանշացին, անիւները անշարժացան սեւ կուպրին վրայ ու ահազին ուժգնութեամբ ինքնաշարժը զարնուցցաւ ճամբան եզերող հսկայ ժայռի մը: Լապտերին ապակին սխուր-փշուր եզած էր, եւ ինքնաշարժին մէկ կողմը բուրբուրի ճզմուած:

Դէպքերը այնքան արագ ընթացած էին, որ բուրբուրի շուարած էի: Երբ ինքզինքս զտայ, առաջին անգամ դար-

ձայ իրեն: Սարսափաւոր աչքերը խոշոր բացած՝ ինծի կը նայէր լալագին ու կը մղկտոր.

— Ի՞նչ ըրի... Ի՞նչ ըրի...
— Ոչի՛նչ, էլ՛մ, ոչի՛նչ, միայն ըսե՛, բան մը ունի՞ս:

Ճակատը դժուած էր ու արիւնած: Քնքոյշ զլուխը գրկիս մէջ առի, հակատին արիւնի քիծը սրբեցի, ապա համբուրեցի մեղմիկ:

— Ի՞նչ ըրի... Ի՞նչ ըրի... — կը Հեկեկար մեքենաբար:

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, — կը պատասխանէի դուրսդանքով, — բան մը չէ, իմ պղտիկ, խելօք աղջիկս...

Գ.

Արկածաւոր ինքնաշարժս պատճառ եղաւ, որ մեր յարաբերութիւնները առկախութիւն մինչեւ Շաքաթ օր: Մինչ այդ կը հաղորդակցէինք հեռախօսով:

— Շատ կարօտցեր եմ, — կ'ըսէ, — կարծես տարի մը եղաւ, որ Հեռու ենք իրարմէ:

— Պէտք է վարժուիս, — կ'ըսեմ, — կեանքը քաղկացած է մեծ ու պղտիկ բաժանումներէ: Կորովի մարդը ա՛ն է, որ անայլալ կը դիմաւորէ այդ բաժանումները:

— Կարօտցեր եմ, — կ'ըսէ, — այս անգամ, երբ դամ, ուրիշ պայման մը ունիմ:

— Հետաքրքրական է, երթալէն աւելի՛ պահանջկոտ կը դառնաս:

— Ո՛չ, կը նահանջեմ, սիրտս ու արամարանութիւնս կը նոյնանան...

— Զրոյր պայմանդ:

— Նախորդ պայմանիս ճիշդ հակառակը. պայման կը դնեմ, որ մեր յարաբերութիւնները խօսակցութենէ անդին ալ անցնին: Քարք պլանշ կու տամ քեզի, օգտուէ՛ կրցածիդ չափ:

— Ո՛նկըք թոցուցեր ես, խօսքերդ կշռէ՛: Ինչ ալ պատահի, ինծի համար

դուն այդ խելօք ու բարի պատիկ աղջիկն էս, մի՛շտ:

— Ո՛ր, ո՛ր, ես խելօք չե՛մ, ոչ ալ պատիկ, կ'ուզեմ որ հետս վարուիս այնպէս՝ ինչպէս պիտի վարուէիր մեծ աղջիկայ մը հետ:

— Ի՞մ խելօք պատիկ աղջիկս...
— Կը համբուրեմ քեզ...

— Շարաթ, ժամը շորսին կու դամ, նոյն տեղէն կ'անեմ քեզ...

— Կը համբուրեմ քեզ:
— Պատիկ աղջիկ, աւելի խոհեմ կ'ըլլա՛յ, եթէ խօսքէ անդին շանցիկնք: Անցալ օրուայ պատիկ մէկ շարժումդ պատճառ եղաւ որ...

— Ինչո՞րք'մ, ձախաւերութիւնս մի՛ յիշեցնէր, քեզ ահագին վնասի մտայուցի՛:

— Ատիկա վնաս չէ, վնասը կը վախնամ, որ ուրիշ տեղէ զայ:

— Ուրի՞նչ, ըսէ՛, ուրի՞նչ:

— Երբ քեզի պէս խելօք ու պատիկ աղջիկ մը կ'ուզէ քակել իր անխոհեմ քոյրերուն քալած ուղիով, ատիկա կ'ըլլայ վնասը...

— Քեզի ի՛նչ:
Ձղայնութեամբ կը զոցեմ հեռախօսը:

Դարձեալ կը բանայ: Շատ մեղմ ու քնքոյշ, ներողութիւն կը խնդրէ: Կ'ըսէ, թէ շատ կարօտցած է ինծի, այդ պատճառաւ ջղադրդիւ վիճակ մը ունի: Կ'ըսէ, թէ անհամբեր կը սպասէ ինծի, որպէսզի հանդարտեցնեմ զինք:

— Կրակը դո՛ւն վառեցիր, — կ'ըսէ, — ուշադրութիւն ըրէ, որ հրդեհի չվերածուի:

— Հանդարտէ՛, պատիկ աղջիկ, հանդարտէ: Կեանքը սանդխամատերով աստիճան մըն է, եթէ ուղես մէկ անգամ մէծ մի քանի սանդխամատ բարձրանալ, կը սայթաքիս ու անկումդ կ'ըլլայ դառն, անվերադարձ:

— Կը համբուրեմ քեզ:
— Ամէն տարիք իր հաճոյքները ունի, ի՞մ խելօք պատիկ աղջիկս, ինչպիսե՞րդ զպէ՛, հանդարտէ, լաւ կ'ըլլայ:

— Կը համբուրեմ քեզ, — կ'ըսէ ու կը սպասէ, որ կ'ս գոցեմ հեռախօսը:

Գրեթէ իր կրկին տարիքը ունէի: Փորձառութիւնս անսխորտ եղրակացութիւններու կը տանէր զիս: Ասկայն այդ պատիկ աղջիկը չափէն աւելի կը հետաքրքրէր ու կը հրապուրէր սիրտըս: Իր անհանդարտ արեւնն ու գերազրգուած հոգին անհուն համակրանք մը կ'արթնցնէին մէջս իրեն հանդէպ: Կը զգայի, թէ անօգնական ու խեղճ թռչնիկ մըն էր, վանդակէն դիպուածով դուրս սպրդած ու կանգնած մտլոր՝ կեանքի քառուղիին վրայ:

Ձէի ուզեր զինք լքել, որովհետեւ այնպիսի հաճելի ու արբեցնող զգացումներ կը ժայթքեցնէր սրտիս մէջ, նոր աւել մը կը ներմուծէր երակներէս ներս: Ինքնավստահութիւնս կը շեշտուէր ու կեանքս տարբեր հմայք մը կը ստանար: Իր անտալ հոգին, խոսվայրջ խօսքերը, խաժ աչքերն ու արբեցնող բոյրը մէջս կ'արթնցնէին այնպիսի խոտիւղներ, որոնց յաճախանքը եղերականօրէն հազապէս կը քրտնէր մէջ:

Նոյն երկար պողոտային վրայ, զինք առի ինքնաշարժիս մէջ:

Անմիջապէս նկատեցի, որ դուստ կ'ը խօսքերով, ու ժլատ՝ ժպիտներով: Յանկարծակիի եկայ: Կը սպասէի, որ անծեղի պէս շատախօսէր ու կալազակի պէս քրքջար, մինչդեռ լուռ էր, խոհուն ու անշարժ: Միայն կարուկ բարեւ մը տուած էր:

— Ի՞նչ ունիս, տխուր ես:
— Տխուր չեմ, պարզապէս ինչպիսե՞րդ կը զսպեմ, ինչպէս դուն կը խրատէիր:
— Ատոր կ'ըսեն քիթը կարսիլ: Ըսէ՛ ինչ ունիս, պատուի պէս լըջացիր ես:
— Տեղ մը երթանք նստիկնք, մեկուսի անկիւն մը, դաւաթ մը խմենք ու խօսինք...

«Պօսիկնքը շեշտեց ու աչքերուս նախեցաւ հեղինակնքով:

Յանկարծ մէջն մոնչեց վերաւորուած արուն:

— Ժամը քանի՞ն՝ պէտք է վերադառնաս սուն:

— Հոգս չէ՛, — ըսաւ անփութօրէն, — քոյրերուս չափ ես ալ ուշանալու իրաւունք ունիմ, կարծեմ:

Այդ վայրկեանին, երբ աչքերուն նայեցայ, տեսայ կինը՝ որ ժարմոյն բուրբ բլիթներով կը ցանկար...

Մովեզերեայ պալիստինայի մը մէջ առանձնացանք: Եղէզներուն արանքէն լոյսը ներս կը մազուէր թեթեւ: Պոր լուսթեան մէջ միայն ճպուռին երգը կը լսուէր...

Դուռը փակեցի ու զէմ-զիմաց կանդնած՝ իրարու նայեցանք լուս:

Յանկարծ վզիս փաթթուեցաւ:

— Պօսի՛նք:

— Այո՛, խօսի՛նք, — պատասխանեցի մեքենարար, — սակայն խօսինք ունի չանդարա, աւելի տրամարանական...

— Դուն անտանիկ շատախօս մըն ես, ես ալ արդիական աղջիկ մըն եմ: Ի՞նչ կը Հասկնաս արդիականութիւնը սերով:

— Արդիականութիւնը Հին բարբերու ժխտումն է, — ըսի բորբոքին յանձնըւած իր քմայքին:

— Արդեօք Հիները չէ՞ին Համբուրեր, — ըսաւ քմծիծաղով:

— Համբուրը Եւային Հեռ ծնած է, չէ՞ս գիտեր, — ըսի կատակելով: — Երբ Եւան առաջին անգամ Համբուրած է Ադամը, սքանչացած է եւ աղաղակած՝ «Ինչ Համ, ինչ բո՛յր»: Այդ օրուքն է ծնած է Համբուր երկրարքառը: Ազամ — Եւային մինչեւ այսօր նոյն պատմութիւնն է...

Կը ծիծաղէր անվերջ, կը խմէր ու կը ծիծաղէր: Ե՛ս ալ կը խմէի ու սարէնուած կը խօսէի:

— Ամէն դար կը բնորոշուի ուրոյն դիմազծով մը. օրինակի Համար, միջին դարերը կրօնքի ու կրօնականներու տիրապետութեան դարերն էին: Անցեալ դարը կարելի է կոչել դիտական բացա-

ռիկ դիտերու եւ արդիական կենցաղի ձեւաւորման դարը: Քսաներորդ դարը դրամատիրութեան դարն է: Յաջորդ դարը կրնայ ըլլալ անջրպետի տիրապետութեան դարը: Քսաներկրորդ դարուն, երկու սեռերու յարաբերութիւնները կըրնան այնքան սերտանալ, որ դուք է վերադարձ մը կատարուի դէպի նախապատմական դարերը, երբ մարդիկ խոժրուորումներով կ'ապրէին: Ախտաճանաչումը կարելի է կատարել իբրև քիմիական չիփփիները, որոնց բարոյական Հասկացողութիւնն ու կենցաղափարութիւնը կը մաղկեն բռնակալ ու բռնազրօսիկ օրէնքները...

— Դարձեալ վերադարձանք խնձորին, — ծիծաղեցաւ:

— Այո, — ըսի լուրջ, — աշխարհի Համառօտ պատմութիւնը կարելի է գրել այսպէս. «Ազամ եւ Եւա կերան արդիււան խնձորը: Յ. Գ. — Պատմութիւնը կրկնութիւն է»:



Կրկնուող պատմութեան վերջին Հեռոսները մենք էինք...

Տխուր ու լուռ, իրարու նայեցանք... Լուսնի մահիկը կը լողար թափանցիկ ամպերու փրփուրին մէջ...

Այդ վայրկեանին, եթէ դիտանայի, որ վերջին անգամ ըլլալով կը գրկէի ու կը Համբուրէի դինք, գուցէ կաթուածահար ըլլայի, այնքան սիրով ու խանդավառութեամբ կապուած էի այդ պոստիկ, խելօք աղլկան, որ իմ սուրբաբայած էր իր անյատակ դանձերը:

Չեռա ուսին դրած՝ լուռ յառաջացանք մինչեւ ինքնաշարժս: Տժգոյն էր ու Հանդարտ:

— Ի՞նչ կը զգաս, — Հարցուցի Հետաքրքիր:

— Ոչինչ, — ըսաւ ուսերը թօթուելով, — ոչինչ, կարծես ամէն զգացում թմրած է մէջս, կարծեմ կ'երազեմ:

— Կեանքը արդէն երազ մըն է, — ըսի, — երազ եւ սէր: Հիփփիները էրենց

Թմրեցուցիչներով կը ստեղծեն իրենց ցանկացած երազային տրամադրութիւնը ու սէրը՝ երազի մէջ, փորձառութեամբ ամէն մարդ դիտէ, որքան հեշտ է ու հոճեղի...

Դ.

Ի զուր սպասեցի հեռաձայնային կանչի մը:

Օրերը կը յաջորդէին իրարու, սակայն նորութիւն չկար:

Քանի անգամ որոշեցի երթալ սպասել դպրոցին առջեւը, ամշցայ: Գոնէ անգամ մը ձայնը լսէի ու տեսնէի զինքը:

Մտահոգ էի: Արդեօք հիւանդացա՞ւ: Արդեօք մէկը տեղեկացա՞ւ գաղտնիքին: Արդեօք անխոհեմ կերպով վիրաւորեցի՞ զինք: Անթիւ հարցականներ կը պարէին մտքիս մէջ:

Կայուն հեռաձայնի թիւ չունէր, հասցէ չունէի, չէի ուզեր ընկերներու տեղեկացնել կատարուածը, շուտաւժ էի:

Երկու շաբաթ անցած էր, երբ սինեմայի մը առջեւ յանկարծ դէմ-դիմաց եկանք: Իրեն կ'ընկերանար պատանի մը, որուն մազերը իր մազերուն չափ երկայն էին ու կը պարէին օդին մէջ:

— Մանօթացնեմ, — ըսաւ:

Իր նոր բարեկամն էր, իսկ ես՝ իր փրկեսփայ կնքահայրը:

— Ճաշակդ բաւական նրբացնր է, — ըտի դառնութեամբ, — կը շնորհաւորեմ:

— Քեզի չափ խելացի չէ, — ըսաւ ծիծաղելով, — սակայն վստահաբար քեզմէ աւելի խենթ է:

— Ինչո՞ւ անգամ մը չհեռաձայնեցիր, արդեօք վշտացուցի՞ր քեզ:

— Ամենեւին, միշտ պիտի լիշեմ քեզ ու խօսքերդ, — կեանքը բաղկացած է մեծ ու պղտիկ բաժանումներէ: Կորովի մարդը ա՛ն է, որ անայլալ կը դիմաւորէ այդ բաժանումները:

— Ուրեմն այդպէս, յոյս կտրեմ քեզմէ:

— Պայ-պա՞յ, — ծիծաղեցաւ, քիօ մը խնձոր առ ու կեր, կը մխիթարուիս, իմ խելօք, պզտիկ տղաս...



Ամառնային Գիտերուայ Երազ

Ա.— ԽԱԻԱԲ

Անհում խաւար...

Յոզնած մտամ
Անտառին մէջ մեծաւոր:

Հին հաւատքի պարպուած լուս եղջիւրներ
Եւ դազացող, վախկտ ձեռքեր.
Կասկած մը մեծ, անորոշ...

Ի՞նչ պիտի ընենք այսօր,
Ի՞նչ պիտի ընենք վաղը.
Օ՛հ, ճարագած մայրերու լուս երկայնքին՝
Ի՞նչ պիտի ընենք:

Բ.— ՄԵՐԿ ԱՂՕԹՔ

Տղայ մը խենք,
Յոզնած էջեր գրեյլէ,
Պատուեց թուղթերը բարդ,
Եւ բիրեղեայ շրթներով՝
Կանգնած ըսաւ.

— Մերկացէ՛ք շո՛ւտ
Եւ ձեզ կապոյտ հորիզոններ պիտի տամ,
Ուր երազներ յուշերու պէս կը ծնին.
Մերկացէ՛ք շո՛ւտ
Ազօթֆներէն, դիմակներէն, երգերէն.
Ձեր մարմիններն պիտի ազատ փաթորկին
Եւ աչքերէն
Պիտի յարդին կարօտավառ նոր ձայներ,
Իբրեւ պայթող պտուկներ
Իբրեւ զարեր փնտռող ելք:

Այդ ծամանակ,
Ջերմութիւն մը մեր միտերէն դուրս գալով՝
Պիտի պռոթկալ
Եւ լեցնելով եղջիւրները ոզողէ մեզ՝
Հին, հարագատ երգի մը պէս կը քառուած...:

Գ.— ԽԱՐՈՅԿԸ

Խարոյկն ուրախ կը շողար
Եւ ամէն ոք հանդերձներն իր
Կը ձգէր հոն :

- Քառերը մեր
Վազուց, վազուց են մեռած, —
Հսաւ տղան .
- Խօսեցէ՛ք ձեր պի՛րկ ձեռքերով, մարմնով վայրագ,
Խեռ միշտերով, աչքով բոսոր :

Կոնգ մը արնոտ .
Կին մը՝ վրան .
Եւ գալարում դժոխային,
...Սրուակներ բոյրի, եւ մետաքսէ գուլպաներ,
Եւ քարացած, սառած բառեր
Կնկալ կարմիր շրթումքներու տարածքին...
Եւ մարմիններ կը վազէին խոտերու մէջ
Եւ ձեռքեր վեր կ'ամբաստանային,
Եւ հեւք մը հին
Եւ մարմիններ կ'ըլլային մէկ :

Եւ ամացած արգանդներ
Կ'արածէին...

Դ.— ՊԱՐԸ

Կին մը վագրի կանչերով
Մօտեցաւ
Տգաւ բիւրեղ շրթներուն .

- Եւ ծպիտ մը դառն, հին...
- Պարէ՛, — բոս :
- Պարէ՛ ազատ,
Պարէ՛ մերկ,
Եւ կիրքերուդ
Կրակն ամբողջ թռչ պռփկայ :
- Պարէ՛ ազատ,
Պարէ՛ մերկ
Եւ հեշտամէք անուարտ երգ պիտի ըլլայ
Եւ յանկարծ .
Մենութիւն մը պիտ' զգաս :

— Պարէ՛ ազատ
 Պարէ՛ մերկ
 Կրակներդ կարծես խաբուած պիտ' մարին
 Եւ անշոյս
 Գու կիրքերուդ մոխրին վրայ՝
 Պիտի լաս
 Կտորնացում,
 Արգանատում,
 Անձող՝ ցեխ:

— Պարէ՛ ազատ,
 Պարէ՛ մերկ,
 Եւ երազներն կողերուդ
 Պիտի ըլլան հեռացող
 Անհասելի տառապանք:

Արարչագործ տառապանքդ հաշիջ է քեզ,
 Եւ քարացող
 Հին խաբկանք.

Դուն չես կրնար չպարել,
 Պարէ՛ ազատ
 Պարէ՛ մերկ...

Յ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

12 Օգոստոս 1970



ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Վ Ա Ր Ք

ԿՈՄԻՏԱՍ ԿՈՒՏԻՆԱՑԻԻ

Բ.

ՍՅԷ Թիւրքմանստանի մը կար վերյուշի գծած ճանապարհին եւ իրական ճամբորդութեան տարեգրութեան մէջ, այդ ալ յառաջ եկած էր վերյուշին տածած սէրէն՝ դէպի Հայրենի բնութիւնը. յեռնէ՛ր, ձորեր ու տակաւին լեռնաշղթաներ, իրարու ձեռք տուած, մէջ մէջի մտած, քիչ մը հոս խոյսացող, քիչ մը անդին բարձրաբերձ, խոր կիրճերու վրայ քիթ ծռած, հովիտնէ՛ր կանաչաւէտ, գլզլան ջուրեր, մշանջնական հունէ մը հոսող լայնաթիկունք գետեր եւ այս բնական հրաշալիքին մէջ պատմական հին ու նոր քաղաքներ, աւերակ բերդեր ու պեղե՛ր, պիւղեր, արծուարիք, կախ վիզ, խեղճ ու կրակ: Եօթնարեան օտար լուծի տակ ճնշուած ժողովուրդ մը, որուն մէկ սրբ թոռնիկն էր Սողոմոն: Տասներկու տարեկան պատանի էր ան, բայց արդէն հասունցած մարգու տպաւորութիւններ ունէր վերյուշի նկարագրած աշխարհէն: Մեղքը վիզին անոր, որ սիրով դարձուած սխալը մատի փաթթոց պիտի ընէր...

՝

Երբ իջմիածին հասան Գէորդ Վարդապետ եւ Սողոմոն, արդէն խոր աշուն էր, դեղնակալած, մրգալից, չոր աշուն մը:

Վեհարանի ընդարձակ սրահին դիմաց, դահլիճ վրայ բազմած էր Հայոց Հայրապետը, մականը ձեռքին: Ծուրջը մեծ-մեծ սրբազաններ, զառամեալ, յառաջացած տարիքէն թուլամորթ, սեւ մօրուք այլ հոգեւորականներ, որոնք արդէն կոխած էին արջութեան սանդխամատին: Լուռ էր դահլիճը: Սպասում կար. դժգոհ մտայնութիւն՝ ներկաներու դէմքին:

digitised by A.R.A.R.@

Գահիրեի դուռնէն մինչեւ Հայրապետին դահլը ճամբան երկար կը թը-
ւէր: Բայց Գէորգ Վարդապետ ինքզինքը կորսնցնելու վախով չէր, որ կը յա-
ռաջանար: Որտա կարեւոր առաքելութիւն մը դինք կը մղէր զէպի Վեհը:
Ներկայ սրբազանները քամահանքով, կեղծ ժպիտով ու խոփոտ նայուածք-
ներով կ'ընդունէին անոր ներկայութիւնը վեհարանին մէջ: Գիտէին, թէ ին-
չմ'ա Հայր Սուրբը կը դիմէր զէպի բարձրադոյն դահլը, կ'որոճային մերժու-
մի պատրուակներ եւ սակայն չէին կրնար արդիւնէլ անոր հպարտ, գիտակից
քայլուածքը:

Գէորգ Վարդապետ կը զգար անբարեացակամ ակնարկներուն սրութիւ-
նը իր դէմքին դամուած: Գիտէր, թէ մարդոց սրտովը չէր իր վկայութիւնը,
սակայն վճռած էր ամէն գնով ի կատար անել առաքելութիւնը, կոտանդ-
նուպոյսոյ Պատրիարքը կանգնած էր իր թիկունքին: Անկէ ունէր դէր մը
ծոցին մէջ Վեհափառին ուղղուած:

Հասաւ զահին եւ խոնարհեցաւ: Վեհը երկարեց այլ եւ տուաւ օրհ-
նութիւնը:

— Բարի գալուստ, որդի. ո՞ւր է պատանին...:

— Իրա՛ն ետեւ, Սրբազան Հայր, — ու քաշուեցաւ Գէորգ Վարդապետ
մէկ կողմ:

Առաջին անգամ չէր արդէն հանդիպումը, ուստի ժամավաճառութիւն
յեղաւ նոր հարց ու փորձի: Կը լսուէին կեղծ, արձապանդող հարկեր, մէկ-
մէկ, որ կը հարուածէին դահլիճին պատն ու տոտտաղը: Մերունափառ
Հայրապետը բարձրացուց թեւը:

— Թող ներս բերուի Սողոմոն պատանին:

Գահիրեի դուռը կիսաբաց եղաւ եւ գոցուեցաւ պատանին կոնակին:
Վեհարանին մէջ գտնուող ներկաներու նայուածքը մէկ անգամէն խուժեց
ներս մտած ազուն վրայ: Կարկամած էր Սողոմոն: Ինչպէ՞ս պիտի հասնէր
Գէորգ Վարդապետին: Կրնա՞ր միթէ՞ ճեղքել նայուածքներու պատուարը:
Կանգնած էր դրան առջեւ նոր յարմարացուած բանկոնակ մը կոնակին: Գեղը-
կական փոքրիկ շալուար մը կը սեղմէր անոր ոտքերը, որոնք դրուած էին
քով քովի, սրածայր մաշիկներով ծածկուած: Վնասողի խորհրէն բերուած
մ'ըր մըք, որ բերուեր էր Ճեմարան: ԵԳէորգ Վարդապետ լաւ ըրած պիտի
ըլլար, եթէ գիրուկ ոչխար մը բերած ըլլար նուէր—ընծայ վեհարանի խոհա-
նոցին: Այսպէս էր մտածումը շատերուն: Բայց Վեհափառ Հայրապետը ուշ
չդրաւ սրբակրօն եղբայրներու անիմանալի փափաքներուն:

— Մօտեցի՛ր, զաւակս. մօտեցի՛ր, որ բան հասկնանք...:

Սողոմոնին ոտքերը կ'թոտեցան: Փնտեց իր ուժը Գէորգ Վարդապե-
տի նայուածքին մէջ: Այլ նայուածքը քաջաւերական էր եւ հրաւիրող: Ու-
րեմն քաշեց պատանեկան անստոյգ քայլերով, շուրջի շուրջան նայուածք-
ներէն ընկճուած: Սուր քիթը եւ այտերուն դեղնամաշկը չափէն աւելի
կարմրութիւն հազած էին: Աչքերը Վեհափառին ուղղած, անոր յատաշա-
ցումը դանդաղ էր, կ'թոտ, սայթաջուն: Վեհափառ Հայրապետը հարկ տեսաւ
անապարեցնել աստանող պատանեկութիւնը, բարձրաբերձ ասիներու նեղ-
ւածքէն դուրս բերելու համար:

— Աճապարէ՛, որդիս. մի՛ քաշուիր Սրբազան Հայրերէն...:

Ինչպէ՞ս անապարէր. չէ՞ որ երկու բառ մայրենի լեզուով պիտի չկըր-
նար արտայայտել իր վախը, ամօթը եւ... շնորհակալութիւնը: Բայց ա-
րագոյց քայլերը. կիսած էր վեհարանը: Շատ մը խոփոտութիւններ մնա-
ցնէր էին ետին: Աւելի յստակ կը տեսնէր Գէորգ Վարդապետին նայուածքն

մէջ նշուող ապահովութիւնը: Հայրապետին ձայնն ալ մեղմ էր, Հայրական, սրտացաւ: Գուցէ իր վրայ մեղքնայու համար էր կակուղ այդ ձայնը: Գէորգ Վարդապետ նախազուշացուցած էր զինք: Պէտք էր ծոնկի դար եւ համբուրէր Վեհափառին ալը: Յիշողութեան այդ կէտին, Սողոմոնի շարժումները եղան անմիջական: Կազանքներէ ձերբազատուածի պէս, քանի մը քայլ հեռաւորութիւնը կտրեց վաղելով: Չիչեց, թէ ի՛նչպէս դտաւ ալը ու արցունքոտ, տաք, հրախտապարտ աջահամբոյրը ելեկտրական հոսանքի ցնցում տրուաւ Վեհափառի աջին, որ ետ պիտի քաշուէր անիմտնալի հապենակով մը.

— Ապրի՛ս, որդի, այժմ անցիր այդ անկիւնը... Հայր Սուրբ, օգնէ իրեն, որ տեղը դանկ...:

Գէորգ Հայր Սուրբը կեցուց Սողոմոնը անկիւնին, ուրկէ տեսանլի ըլլար տղան բոլոր սրբազնութեանց:

Կանչուած էր Սողոմոն քննութիւն տալու Վեհին առջեւ: Չեմարանին պատասխանատուները զբաժ էին իր մասին. «Ատակ ոչ»: Իրբեւ բացատրութիւն՝ շարան մը նախադասութիւններու, որոնց մէջ Վեհափառը գտած էր մէկը ուշադրութեան արժանի. «Ձայն հանելի, բայց ոչ-հանոյ՝ թրքեմէն»...: Կաթողիկոսը ուղեց լսել «Ձայն հանելի»-ն:

— Հայր Սուրբ, որդի՛, ըսէք Սողոմոնին երգել երգ հանոյ...:

— Իս՛յց, Սրբազան Տէր, — Գէորգ Վարդապետին խօսքը կտրուեցաւ:

— Կրնա՛յ արտայայտուիլ թուրքերէնով, — վրայ տուաւ Հայրապետը: «Սրբապղծութիւն» անցաւ սրբազնութեանց շրթունքներէն: Փոփրտուներու ազնուիք պահ մը վարանիլ տուաւ Սողոմոնին ունեցած սրտատուութիւնը: Սակայն, Վեհն էր պահանջողը եւ Գէորգ Վարդապետը կը ժպտէր պիտին տակ: Սկսաւ: Ձայնը զրնգուն զանգակ, բարակ, մեղանոյշ, զողզով, հետզհետէ ուճացաւ, բարձրացաւ: Վեհարանին պատերն ու առաստաղը չէին կրնար տոկալ անոր սրութեան, որ կը թափանցէր պատնէշները եւ կը թռչէր դուրս, զոցուած պատուհաններէն, դահլիճի երկրեղկ դուռէն: Բաները թուրքերէն էին. բայց անոնց վրայ բեռնուած եղանակը հայ մօր մը վիշտը կը ցոլացնէր. տառապող, որդեկորոյս, աէր սիրական չունեցող մօր մը աղապատանքը, որ ուղղուած էր առ Աստուած...:

Խոսվեցաւ դահլիճը: Չկամութեան չար ոգին բազմած էր սրբազնութեանց փորին մէջ: Խոռ, դատապարտող նայուածքներու նետ մը կ'ուղղուէր Հայրապետին գահին, որուն վրայ բազմած Հայոց Հայրապետը կախած էր գլուխը եւ ափն ի կզակ՝ կը խոկար: «Ի՞նչ կ'ուզէին «եղբայրները» սա թիղ մը հասակով պատանիէն, որ որբ ու անտէր՝ կը ցանկար ուտում, մտքի խորութիւն եւ պայծառութիւն»...:

— Սրբապղծութիւն էր. թոյլ պէտք չէ տայիք, Սրբազան Տէր, — լսուեցան ձայնի դահլիճի դանապան կողմերէն:

— Կրնար եւ չրկուել. նմանը չա՛տ, — կ'ուսելցնէին ուրիշներ քիփը չոցով:

Հայրապետը դեռ կը խոկար: Գէորգ Վարդապետ ցցուեցաւ դահլիճին դէմ, եղաւ իրական թիկունք մը պատանի Սողոմոնին:

— Մեղքը ո՛ւր է տղուն. ո՞վ պիտի սորվեցնէր հայերէնը: Իսկ դետէ՞ք, թէ ո՛ւր կը գտնուի Գիւթահան...:

— Կարեւո՛րը Գիւթահանն չէ՛, — եղան փաստարկողներ:

— Մե՛ղքը ծնողքին է, — ըսին ուրիշ բերաններ:

Գէորգ Վարդապետ կը նշմարէր արցունքի տաք չիթ մը Վեհափառի

սչքին մէջ: Կար եւ լալու տրամադրութիւնը Սողոմոնին: Ըմբոսացաւ: Դրաւ հարցը դահլիճին առջեւ.

— Ինքը՝ մաս մը տղայ. ծնողքը՝ մեկնած առ Աստուած...

— Քիւթահալի մէջ երկու դպրոց կայ. պէտք է մտնէր մէկն ու մէկը, — առարկեց բանիմաց մը:

— Պէ՛տք էր. բայց որ կարելութիւն չկար սորվածը կիրարկելու դուրսը:

— Այդ արդէն մեր նիւթէն դուրս է, — ձայնը բարձրացուց հաստափոր արքութիւն մը:

Քչիչոցը շարունակուեցաւ: Դիմադրութիւնը դորաւոր հոսանք մը կը ներկայացնէր: Կաթողիկոսը տեղի պիտի տա՞ր միթէ վկայութեան կանչուած մարդոց, որ միտն իր ճաննային իրենց փորը եւ զայն պարարտացնելու ճգնած էին միշտ:

— Տէ՛ր Վեհափառ, — դարձաւ Գևորգ Վարդապետ Կաթողիկոսին, որ բարձրացուցած էր գլուխը եւ մշուշի մէջ թաղուած կը տեսնէր դահլիճը:

— Այո՛, Վեհափառը կը խոկար. այժմ արժանի կը գտնէ կրկին անդամ լսել պատանին: Թող Սըբազան Հայրերը քիչ մը խօսին խիզճէն եւ ոչ առարկեն ըստ կանոնաց...

Վեհափառին թելադրութիւնը թափանցիկ էր:

Սողոմոն կանգնած էր ճեմութեանց զէմ փոքրամբմին: Գրեթէ ալքախնդ արտաքինով, մանրացած, ընկճուած: Աչքերը կը բացլիւթէր. խօսուածներէն շատ քիչ բան կ'ըմբռնէր. գիտէր միայն, թէ Գէորգ Հայր Սուրբը իր բական մեծութիւն մըն էր դահլիճին զիմացը կանգնած: Իր միակ յոյսը ան էր: Պահ մը դժգոհանքը տեղի տուաւ արհամարհանքի: Վռչին ընդունիլ արդան դպրոց. իրենց գիտնալիք բանն է. բայց ես Գևորգ չըլլամ, եթէ նյաջողցնեմ ամէն գնով Սողոմոնին մուտքը ճեմարան»...

— Չերդե՞ս հատ մըն ալ, որդի, — թելադրութիւնը եկաւ կրկին Հայրապետէն:

Վեհափառը այդ թելադրութեամբ կ'ուզէր խորանալ գիմացիներու հոգիէն ներս: Կ'ուզէր փորձաքարին տալ անոնց աղքատին դիտակցութիւնը: Դժուար էր թէ եւ նպաստատու որոշուած կայացնել, երբ Կրօնաց Թորհուրդը տեղի տալ չէր ուզեր: Իր ընկիւթը միտպետական արարք մը պիտի ընդունուէր ճիշդ չէր նման գիրքորոշում. բայց մէջտեղը կար չորր ու անողնական, տաղանդաւոր պատանի մը, որ բացառիկ ձայնի շնորհով օժտուած էր: Կ'արժէ՞ր զոճել տաղանդը, ինչ որ ոչ-պատճառաբանուած օրէնքի արամադրութեանց...

Իսկ պատանի Սողոմոնը չէր համարձակեր երգելու: Դահլիճին մէջ կը տեսէր տակաւին բարեւոյնական աղմուկ մը:

Վեհափառը կը բարձրացնէր ահա աջը: Քիւթի մնջեցին դժգոհանքն ու Քչիչոցը վեհարանին մէջ: Ապա կ'իջնէր ծանր, խորհրդատու լուսութիւնը: Սողոմոնին սիրտը անհամաչափ արտփել սկսաւ: Սպասումը մահացնող էր կամ փրկարար լոյս...

Լուսութեան վրայ Վեհափառ Հայրապետը դրաւ իր կնիքը.

— Անդամ մը եւս, որդի՛. կը լսե՛նք...

Սողոմոն հաւատացած էր, թէ եկեղեցական շարականները դուրսը երկուց մեղք էր. անպատշաճ: Գէորգ Վարդապետին փսփոսքը ակունջին մէջ արթնացուց նիրհող արիւնը: Քանի որ ներկաները բուրբ ալ կրօնաւորներ էին եւ Վեհափառը կը պահանջէր, ուրեմն մեղք չկար կրօնական երգեր եկեղեցի:

ցիէն գուրս երգելուն մէջ: Յիշեց Բիւթահայի իրենց եկեղեցին, ծեր քահանան, Հայրը... Յիշեց որ քահանան կ'ըսէր. «Ակսէ՛, որդի Սողոմոն»: Ու դարաց դասին մէջ կը բարձրանար գլուխն, թախտանուշ մեղեդին, բազում դարերու Հայոց ազգապատանքը խոսացուցած իր մէջ: Ռունկի ծուխին եւ եկեղեցին լեցնող ժողովուրդին կիսաձայն աղօթքներուն ընդմէջէն կարծես լրսւեցաւ ու լեցուց զահլիճը:

«Սո՛ւրբ, Սուրբ... Սուրբ, Տէ՛ր գօրութեանց...»

Սողոմոն, իր երկիւղած գիրքով, նայուածքը յառած առաստաղին, կարճ բանկանակի մէջ սեղմուած, ծոպաւոր շալուարով կը նմանէր գեղջուկ տղու պատկերի, որ գծուած էր նշանաւոր արուեստագէտի վրձինով եւ դըրուած անկիւնին: Նկարի առջեւի ֆոնին վրայ կը տեսնուէին ահա փոռ-փոռ սպիտակ ու սեւ մօրուքով արքերու, եպիսկոպոսներու եւ վարդապետներու դրոշմներ: Անոնց աչքերուն մէջ միշտ կար շարութիւն, քիչիկ մը գութ, քիչիկ մըն ալ ապշանք, որ կու գար խղճի խայթէ:

Սողոմոն նկար մը չէր սակայն: Քովը կը զգար ներկայութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսին. սակայն չէր նշմարէր արցունքի տաք ըլլելը, որ կը կազմաւորուէր անոր նայուածքին խորը: Ե՛րբ վերջացուց երգելը, ինքն ալ չէր գիտեր: Գիտէր միայն, թէ ծունկի եկած էր Վեհ'ին առջեւ՝ անոր աջը իր գլխուն վրայ:

— Օրհնուած ըլլաս, որդի՛. շատ ապրիս:

Սողոմոն զգաց ապա Հայրապետին ձեռքը, որ խաչ կը հանէր իր վրան եւ ապա դահլիճին մէջ բազմած կրօնակիցներու վրայ:

— Օրհնեալ ըլլաք եւ գուք ձեր բարեմտութեամբ, ներողամտութեամբ եւ մասամբ նորին...

Քննութիւնը վերջացած էր: Սողոմոն ոտք կը դնէր առաջին դասարանը Գէորգեան ձեմարտին: Ու հրածեղա կու տար աշխարհական կեանքին: Հրածեղա կու տար նաեւ իր բարեբար Գէորգ վարդապետին: Գէորգ վարդապետ վերադարձաւ Գոլիս եւ այդպէս ալ Սողոմոն չգիտցաւ, թէ ան եպիսկոպոսական գաւազան կրէ՞ց թէ ոչ...

Տարիները կոխեցին, իրար վրայ բարձրացան. բարձրացաւ նաեւ Սողոմոնի տարիքը: Դասարանները ետ մնացին տարուէ տարի. բարձր կարգերը չկրցան սարսափեցնել դինք: Գիշեր-ցերեկ աշխատեցաւ դասապիքներու վրայ եւ սակայն գտաւ ժամանակ ու խորացաւ Հայկական խաղերու բաւիղէն ներս: Արահետներ շատ կային. իր պատանեկութեան անցած լեռ ու ձորի մէջ ձըզւած կածաններու նման խորտ ու բորտ, բնակուած կամ ամայի: Մտաւ խաղերու թաւուտը: Սակայն չկորսուեցաւ հոն: Երբ ավարտեց Գէորգեան ձեմարտին դասընթացը — արդէն հասուն մարդու համբաւ կրեց: Քասնըչորս տարեկանին վերջակէտ կը դրուէր ուսումնական շրջանին:

Սողոմոն սարկաւազ ծառաւ էր սակայն: Հայկական խաղերը դէնք ըրած՝ ինկաւ դաշտ ու հովիտ. հետաքրքրութիւնը գինք կը տանէր երբեմն հեռուները: Երգի աղբիւրներ շատ կային: Գիւղական գեղջուկ երգեր, խամ, անժաղ, գունաթափ, կրօնափոխ՝ կ'երգուէին հոս ու հոն: Որսի նման կ'որսար գանոնք, կը լեցնէր իր մախաղը՝ սուրն դարձին անոնց մէջ կը փնտռէր կորսուած զնդակը, որ արծաթէ էր շինուած, ոսկեղօծ էր. անդին էր, որովհետեւ հայկական էր:

Այսպէս կարգով, կանոնով շարեց որսացուած երգերը իր գրոց մատենին մէջ. մէկիկ-մէկիկ, վախով, ափսոսանքով, զուրգուրտու մատ-

ներով մինչև ուշ գիշեր, աղօտ լոյսի ժը առջև: Չմտածեց անձնական հանդիսախի, առողջութեան մասին: Ձղզայց որ կը կորսնցնէր աչքերուն սրութիւնը, այլ գտաւ սիրտը մեծցած, հագին ուռնացած: Կոպիւրը կարմրեցան, աւագի մնայուն ցաւ ժը անքուն թողուց զինք. տենդ ունեցաւ միտերուն մէջ, տեւաբար ճնշող յոգնութիւն ժը ուտերուն: Ամբաստանեց կամքը սակայն. «Ինչպէ՞ օ էին ապրած նախորդները. այն մեծ նգնաւորները, որոնք ստեղծեցին ազգին գիրը, տուին անոր պատմութիւն, գրեցին Նարեկը, որ դեղձկուհին ունենար բարձին տակ: Ովքե՞ր էին Աստուածաշունչը ծագեցողները, զայն ընդօրինակողը մարդ չէ՞ր... Իմաստութիւնը մտաւ վանքերու գիրութեան մէջ, սակայն իմաստունները մնացին քերպերու բնակիչ. գրիչցին ինքզինքին սընունդէ, աչքի լոյսէ. մարմնական խոնջէնքը տեւաբար կերաւ անոնց կեանքը... ու այս ամէնէն մնաց հայ մշակոյթը: Անոնք չէին, որ իրեն հասցուցին «Մատենաք եղելութեանցը»...:

Ինքը, սակայն, ճգնաւոր շեղաւ: Գտաւ առիթներ, ունեցաւ բարեկամներ: Տասներկու տարի տեւած էր որրութեան եւ մանկութեան շրջանը. տասնհերկու տարի եւս պէտք էր իրեն սարկաւազութեան եւ արեղայութեան միջև. կանգնելու համար: Սարկաւազ Սողոմոնը հասած էր տեղ մը, շրջանի մը մէջ, ուր կաթողիկոսական դահին կը բազմէր Հայոց Հայրիկը:

Կոշած էին զինք Թրիմեան Հայրիկ: Գեղեցիկ դիմագիծով աղամարդ մը, որ պոսակուած էր ամէն աշխարհական մարդու պէս: Գրած էր «Պապիկ եւ քոռնիկ»-ը, հրատարակած էր նաեւ «Արծիւ Վասպուրականի»: Ինքը արծիւ չէր եղած, բայց ունեցած էր առիւծի սիրտ: Մեռաւ կինը. պահեց սուգ, ծոծապահուցութիւն, ցկեանս այրիութիւն: Սիրեց զինք ժողովուրդը, կարգել տուաւ իր գլխուն վրայ Տէր: Ու Տէրը բարձրացաւ Ամենայն Հայոց Հայրապետական դահին: Ան պիտի երթար սպա Պերլինի վեհաժողովին ու ձեռնուներն ղառանք, որովհետեւ հետը չէր կրեր երկաթէ շերեփ: Ո՛վ իրեն հերեմա պիտի կերցնէր թուղթէ շերեփով: Եկաւ ետ, յժողոցաւ երկաթէ շերեփին պատմութիւնը. պահեց սանելութիւնը այն բոլոր բաներուն մէջ, ուր Եւրոպա գտաւ: Այդպէս էր մարդը, որ կոչուեցաւ Հայոց Հայրիկ եւ ունեցաւ իր երգը.

«Հայրիկ, Հայրիկ քու հայրնիւմ.
Վասպուրական մեր աշխարհ...»

Տարեգրութիւնը չ'ըսեք, թէ պաշտօնական տօն էր այդ օրը: Փաստ է, սակայն, որ Հայրիկն էր պատարագիչը եւ Սողոմոն սարկաւազ՝ սարկաւազաց դասի երգիչ: Արդէն ընդունուած կարգ էր, թէ ո՛ւր որ երթար Հայոց Հայրիկը, հոն էր նաեւ Սողոմոն Սարկաւազը: Մեծ ընդունելութեանց մէջ ծայրնեղ, հարսանեկան խնճոյքներուն հետուէն գիտող, կալ ու կամիչ հորովիւն սիրահար. ինքը բանաստեղծ սերերգակ, սքեմը կուսակրօն վարդապետի...:

Պատարագ էր. Սողոմոն Սարկաւազին ձայնը տանարին պատուհաններն ու դուռները թրթռացնող: Կը հիպնոտանար ժողովուրդը. գմբէթին տակ ոլորտ կու տար շարականը: Հմայուած էր պատարագիչ Հայոց Հայրիկը.

— Բա՛ւ է, որ մնաս Սարկաւազ, որդի, — կ'ըսէր Հայրապետը ինքեմբեն, ոչէմքը խորանին, — ժամանակն է, որ դառնաս արեղայ. ողջ մնանք, կ'օծեմ քեզ ապա վարդապետ... խորհէ, Թրիմեան, թէ ի՞նչ անուն պիտի կրէ այնուհետեւ Սողոմոն Սարկաւազը...:

Պատարագէն ետք դուած էր անունը :

Կոթնած էր Հայոց Հայրիկը վանքի բակին մէջ՝ դարաւոր կաղնիի բուսնին : Ինքն ալ աղղին համար՝ բարձրադաս կաղնի : Կը կըէր սովորական օրերու պարզ սքեմ մը, որ կրնար քիչ մը զունաթափ ըլլալ, բաճկոնակին հետ, զոր նետած էր ուսերուն : Մեծափաթեմ, սպիտակափրփուր մօրուքը փռած կուրծքին, ձեռքին մէջ՝ համրիչի մը հատիկներու չիշխոցը : Խոշոր աչքերուն մէջ հանգչած էր արծուաբիրը : Դիմազիծը կը պահէր հին օրերու փայլուն շքեղութիւնը : Կը խոկար աշխարհի շարն ու բարին . Պերլինի մէջ գործածած թուղթէ շերեփի մասին . . . Վասպուրական աշխարհի մասին, բայց միտքը սեւեռուած էր կէտի մը, որ այդ պահուն տեսադաշտին վրայ չէր դտնուեր : Մալլած էր ծունկերէն մէկը, ձեռքը հանդիպուցած անոր կունին, համրիչը կախ մատներէն : Չիշխոցը կը շարունակուէր :

Ալուն էր, բայց ամառը կը դեղեւէր դեռ բակին վրայ . ջնաբեր տաք մը կար կաղնիի շուքն դուրս : Յետիջօրեայ հանգիստի պահն էր : Վեհաբանին դրան առջեւ կը տեսնուէր տնտես-դռնապան Վարդանը, զոր կը կոչէին Վանեցի : Կը մրափէ՛ր, թէ նստած տեղը քարացած պտտկեր մըն էր՝ շքադրան վրայ արտադրուած խաշքարի պէս :

Հայոց Հայրիկին յօնքը վեր թռաւ մէկէն .

— Մօ՛, Վարդան . . . :

Ձայնը բամբ էր, առողջ, լիցուն : Հասաւ մրափող Վարդանին, ոլորտ դարձաւ անոր գլխաձերեւը եւ ականջաթաղանթները թրթռացուց : Խամբած աչքերը բացութումը եղան : Զգաստութիւնը լրջացաւ : Ոտքի էր հիմա :

— Մօ՛, Վարդան . կանչէ՛ մեր Սողոմոնը հոս, — եղաւ կտրուկ հրամանը :

Վարդան վաղեց շքադրան աստիճաններէն վար . երիտասարդ չէր . լայց պահեր էր վանեցիական ստոյգ քայլուածք մը : Բակին մէջ ան հետեւեցաւ արահետի մը եւ ծածկուեցաւ պատի մը ետին :

Հայոց Հայրիկը կը շարունակէր պահել յօնքը վեր . մինչ մատներուն մէջ համրիչին հատիկները դադրած էին տեղափոխուելէ ու չիշխակալէ :

Քիչ յետոյ դիմացի պատին անկիւնէն տեսադաշտին մէջ ինկաւ Սողոմոն Սարկաւազը, ետեւէն Վարդան տնտեսը : Հայոց Հայրիկին սպառումը դոհացում գտած՝ կը հանդէպ այժմ . Սողոմոն Սարկաւազը կրնար արագացնել քայլերը : Դարաւոր կաղնիին տակ ան նշմարած էր Վեհին սպասող աչքերը : Թաւ էին յօնքերը անոնց վրայ . գէմքը լայն, ծերունական : Զոյգ մը դեղջկական այդ աչքերը հիպոստացուցած կը թուէին զինք : Սողոմոն Սարկաւազին քայլերը դանդաղեցան եւ մէկէն կանգ առին : Ծռեցաւ . պիտի առնէր Հայրապետին տղը : Այլը եղաւ մտերմական . աջահամբոյրը պէտք չէր, աւելորդ, անհիմն ցուցադրութիւն՝ այդ պահուն :

Հայոց Հայրիկը վանեցիական շէշտը պահելով, դարձաւ մտերմական .

— Կանչեցի քեզ, տղա՛ս, հանդիսաէ՛ր ետ ըրի, որովհետեւ ես ալ հանդիստ չունիմ . եկա՛ր . օրհնեալ ըլլաս . հիմա որ պապիկ եւ թոռնիկ միասին ենք . առ սա աջս համբուրէ . լաւ սովորութիւնը նահապետական տան համար է . . . Նստէ՛ :

Թեղադրեց նստիլ, սակայն տեսաւ, որ նստելիք յարմարութիւն չկար շուրջը : Կապերտը, զոր Վարդան տնտեսը ամէն օր կը փուէր բունին առջեւ, իր հանդիտող անդամներուն հազիւ կը բաւէր : Պոռաց .

— Մօ՛, Վարդան . չվաղե՞ս . Հայրիկը հիւր ունենայ եւ դուն աթոռ չբերե՞ս, հը՛ . . . Ծղկէ՛ . . . :

— Ինչ որ է, կը տեսնեմ, որ կը շարժարուիս. ասիս՝ս ես, որդի. եկուր փոփոխութիւն մը մտցնենք զու կուտակը տնտեսական մէջը: Կանոն էր սպասել. սպասեցիր. իսկ ես անհամբեր եմ: Բնաւ միտքէդ անցուցե՞ր ես նրեղայութեան բարձրանալը: Ո՞չ. դէ՛: այդ լաւ է ոչ փառամոլ մարդոց համար: Ես ալ միտքէս չէի անցըներ Ամենայն Հայոց Հայրապետ ըլլալ: Ոմանց ժողովուրդը կը պարտադրէ. ուրիշներ իրենք զիրենք կը պարտադրեն: Գու հաշտոյդ, դուն կ'իյնաս առաջիններուն մէջ... Ե՛ս է որ կը պարտադրեմ... օրէնքով-կանոնով չիմա հասկցա՞ր միտքս. չէ՞...:

— Կը հասկնամ Վեհափառ:

— Լա՛ւ է. եթէ ողջ մնամ, կը ձեռնադրուիս ապա վարդապետ:

— Հայ ազգը պէտք ունի Ձեր Վեհափառութեան երկարակեցութեան:

— Հա՛ւ. բառերը շծամծմենք, որդի Սողոմոն. միտքս դրած էի եւ փնտրեցի. կ'ուզեմ պատշաճաւոր անուն մը նոր կոչումիդ առիթով: Կը գառնաս արեւդայ եւ կը կրես Կոմիտաս անունը: Կարգացի կաթողիկոսական շարքի պատմութիւնը. բերի՛ աչքիս առջեւ մեր սրբակրօն եւ ոչ սրբացեալ հայրապետներու անձն ու գործը եւ գտայ Կոմիտասը արժանի: Գիտե՞ս ով է եղեր Կոմիտաս Կաթողիկոսը. ինծի, քեզի պէս գլուխը երազներով լեցուն լանաստեղծ: Գրած է «ԱՅՈՒՅԻ ԱՅԻՆԱՅԻ»-ը: Կարգացե՞ր ես. հա՛ւ. լաւ ու յնձն որ կարգացեր ես: Ելեր կան, որ չեն կարդար. նրիմեանին գրածներն ալ չեն կարդացած. իսկ նրիմեան գրած է իր «Պատիկ եւ քառնիկ»-ը: Այն-այն՝ ինչպէս այժմ պապիկը խրատ կու տայ թոռնիկին...: «Գիւղացի է մեր Կաթողիկոսը», կ'ըսեն. «Ի՛նչ դուրս կ'ելլէ գիւղացիէն», կ'ըսեն. ու չեն կարդար: Կը մնան էլ... Կը տեսնեմ, որ կը վիրաւորուի. Հայոց Հայրիկը մեղք չունի, երբ էլ կ'որոհէ տգիտութիւնը: Աստուած ամենագէտ է. ըլլանք մենք ալ գէտ, որ շնեղարտի Ամենակալն Աստուած: Հա՛ւ, չհարցուցի. հաւա՞ն ես նոր անունիդ:

— Երախտագիտութեամբ պիտի կրեմ Կոմիտաս անունը:

— Եա՛տ ապրիս. եկող ամիս քեզ կ'օծենք արեւդայ. գործելուդ դաշտը կը մեծնայ. առջեւդ նոր ճամբաներ կը բացուին...:

Լոեց Հայոց Հայրիկը եւ կոնակը սեղմեց դարաւոր կաղնիի հաստ բուռին: Ու քաշեց չիպուրիսն ծուխը ներս, խոր, երկար շունչով մը: Այդ օրհնուն ի՞նչ կը տեսնէր ապագայի ֆոնին վրայ — յայտնի չէր. բայց անպայման հոգին խնճոյքի մէջ էր. ահա թէ ինչո՞ւ ժպիտ կար գծուած դէմքին: Աչքերը դիմացկուն շողեր կ'արձակէին. կանչեց.

— Ծ'՛, վարդան. ո՞ւր ես. երկու շայ բեր մեզի:

Ձկրկնեց հրամանը. դուռ մը տեղէ մը ճանչեց: Հայոց Հայրիկը շարունակեց.

— Սա վարդանը, որ վանեցի է, արժանի չէ իր կոչումին. պարզապէս աւազակ է. լեռներու վրայէն քաշեցի բերի հոս. դողցած է քաջ վարդանի անունը. վրայէն նետած քաջը՝ որ գողցածը յայտնի չգառնայ...:

Ու բարձրաձայն խնդաց: Կը սիրէր իր համազօրացին. ան հաւատարիմ շան պէս կը պահպանէր տիրոջ ճամբան: Սողոմոն Սարկաւազ կը ճանշտար մարդը: Ամէն հիւրագնացութեան, կը հետեւէր շքախումբին, պրաւնիկ մը գօտիին մէջ:

— Կը վարկաբեկէք իր քաջութիւնը, Սըրբազան Տէր, վարդանը քաջ է իր վարդան կոչուելուն համար, — Սողոմոն Սարկաւազ ոտքի ելաւ:

— Ականջ չկախես. շատախօս-սուտասանին մէկն է:

Ապա լրջացաւ. խոսելիք ունէր.

— Նստէ, որդի. հիմա թէյը կը բերէ քու քաջ վարդանդ. անուշ կ'ընենք. իսկ մինչեւ թէյին հասնիլը, կ'ուզեմ խօսիլ քեզի: Երբ ոտքի կը մնան մարդիկ առջեւս, երկիւղած, խեղճացած երեւոյթով — սիրտէս բան մը կը փլի: Արքայզնութիւն է խորհիլը, թէ ես այդ պահուն քերտ բէկ մը կամ թուրք աղա մը ընդունիմ ինքզինքս: Բայց այդ այդպէս է. մենք վարժուած ենք այդպէս կենալ անոնց առջեւ: Ձեռքերնիս չէ. չընենք այդպէս, դուրսնիս կը թոցնեն... Ձեռ տար աւելի բարձր կոչում. փաշա, սուլթան կամ փոխարքայ — ասոնք բոլորն ալ դիւատիչ դազաններ են, երբ առջեւնին կեցած է անկար հայը: Մեզ անարայնողը անիծուի...: Իսկ դուն, որդի, լուրջ, խնայող պաշտօնեայ ես եւ պիտի մնաս Աստուծոյ ծառայութեան մէջ: Տե՛ս, մեր բոլոր հին դրոց-բրոցները վանքերէն դուրս եկած են: Իշխան-թագաւորի անուն կայ, բայց դորձը չմնաց. բայց կայ Խորհնացի, Եղիշէ, Եզնիկ. կան Նարեկացիներ, Ենորհայիներ... Կան հազար-հազար դիւններ եւ ծաղիկոյններ. ասոնց դորձը կը մնայ: Կը մնայ կանգուն մեր եկեղեցիներ. լուսաւորչականը: Խօսքերս քամիին շատս. փոթորիկներ պիտի փչեն մեր վրայ. խե՛ղճ անիծած բոլորին... Հօտ է Խրիմեան Հայրիկը, որ ոչ մէկ շունի դունչ չհասնի Պեղի... Իսկ դուն մտիկ սուր խորհուրդներու: Զիրքը ամէն ծնող տղու դրուական չէ, վկայականով շատացուիր. բայց ձիրքը բնածին է...: Ընծարանի վարժապետները հաստատեր են քու մէջ բնատուր ձիրք մը. ես կը վաւերացնեմ անոնց վկայութիւնը: Ի՛նչ, Խրիմեան Հայրիկը կ'ըսէ. քանի որ Սողոմոնը այդպիսին է, ծառայելու է սպիտակ...: Խրիմեան Հայրիկը ուզեց ծառայել ազգին, բայց թուղթէ շերտի ունէր. «Նէրիսան» չհասաւ իրեն, որ բերէր իր ազգին կերցնէր...: Ապագայ Կոմիտասը պէտք պիտի չունենար ոչ մէկ շերտի: Անորը պիտի ըլլար քառապէս մատնանը Հայոց խաչին: Ականջը խօսի երանելի հայր սրբազնութեանց. միշտ պիտի դտնեն զօրքազնութիւնները, բայց ոչինչ. անոնք կան այսօր, վաղը չեն ըլլար, կ'երթան հողի...: Մատնանը կը մնայ մէջը արձանագրուած ձեռքերը խոով դնաց» երգերու նման անթիւ-անհամար յարբերակներով...:

Սողոմոն Սարգսաւազին աչքերը թրջուած էին: Հայոց Հայրիկը խորրբեռ մը կը դնէր նիհարկեկ ուսերուն. զայն պատուով, շնորհով կրելը խոտիք էր իրեն համար: Բարձրացաւ տեղէն ու ծունկի եկաւ Հայրապետին առջեւ: Ծակեց իրանը Խրիմեան Հայրիկը. խորր ձեռքը դրաւ Սողոմոնի գլուխին. օրհնեց ու խաչակնքեց.

- Օրհնեալ ըլլաս... փառաւորութիւն ի հայս...:
- Անշա՛փ երախտապարտ եմ Ձեզ, Վեհափառ Տէր. մեծ է Ձերդ Սըրբազնութիւնը այս ծառին պէս: Ենորհակալութիւն...:
- Երթա՛ս ի խաղաղութիւն...:
- Երեկոյեան զովք մեղծօրէն կը տարածուէր վանքին վրայ...:

(Շար. 3)

ՄՐԱՍ ՓԱՆՈՍԵԱՆ

ԵՐԷԿ ԴԵՌ...

Երէկ դեռ միայն բողբոջ էր կանուչ,
 Մի ծիլ էր դալար՝ բնութեան նուէր,
 Այսօր հաւաքած երակներ իր մէջ,
 Առած գոյն ու տեսք՝ յագնած անցորդին տալիս է ստուեր:

Երէկ դեռ փոքրիկ աղբիւր էր գուլալ,
 Աղբիւր էր զնգուն, աղբիւր էր խօսուն,
 Այսօր հաւաքած կորովն իր սրտի,
 Շտապ ու արագ դէպ՝ գետն է հոսում:

Երէկ դեռ մանուկ մի թոթովախօս,
 Մանուկ մի անհոգ, մանուկ մի անգէտ,
 Այսօր քայլում է դանդաղ ու անխօս
 Կեանքի հոգս ու վիշտ շարժած հոգու մէջ:

Իսկ վա՛ղը, վաղը կ'այրեն ողջ ծառը,
 Կ'այրեն ողջ ծառը, կը դառնայ մոխիր,
 Կը չորնայ գետը եւ հողմն ու քամին
 Զորս կողմ կը ցրեն թողած սիզմն իր:

Իսկ մարդը հասուն՝ տուած ողջ ճիգն իր,
 Իր մայր աշխարհին, հանգիստ կը փակի աչքերն իր յաւէտ,
 Ու կը միանան բոլորը մէկտեղ եւ այն ընթացքին,
 Որ կեանքի ուժը եւ հողը ծնող ունեն իրենց մէջ...

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԻՔԸ

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ



1940-էն ետք, Ֆրէճօյան յեղափոխութիւնը ցնցեց ո՛չ միայն հոգեբանութիւնն ու իմաստասիրութիւնը, այլեւ ընկերային ըմբռումները, արուեստները, նոյնիսկ բժշկութիւնը:

Սիկմընտ Ֆրէճօյտ, աւստրիացի նըշանաւոր հոգեբոյժը, մինչեւ իր օրերը զանազան վարկածներով եղծարտութեան շուրջ խարխափող հոգեբանութեան՝ բերու գիտական առողջ տեսակէտներ եւ հոգեբանութիւնը վերածնց կարելի եղած շահով փորձառական ու առարկայական դիտութեան մը:

Ան՝ փորձով ցոյց տալ ուզեց, թէ մարդկային ամէն ձևուամ հիմնուած է սեռային բնազդին վրայ, որուն գուգահեռ, սակայն, հետազային իր փորձառութեամբ եւ ուսումնասիրութեամբ հաստատեց մահուան բնազդը:

Ֆրէճօյտ սեռային բնազդով կրագործելի բոլոր արարքներուն բազատութիւնները կը գտնէ մարդկային ենթագիտակցութեան մէջ: Ենթագիտակցութիւնը կը հռչակուէր շեմարան մը, ուր փորձառութիւնները, սորված բայց մոռցուած դիտելիքները ամբարուած են եւ որոնք յարմար գրգիռով մը կրնան դիտակցութեան դաշտ ներկայանալ:

Ենթագիտակցութեան ու սեռային բնազդներուն տրուած այս կարեւորութիւնը ճակատագրական եղաւ մարդկային քաղաքակրթութեան մէջ: Ֆրէճօյտ աշակերտները կոկելով, վերամշակելով եւ աւելի լայն ու այլազան ազգութեանց պատկանող մարդոց վրայ կատարելով իրենց փորձերը, հասան այօօրուայ հոգեվերլուծման մեծ դիտութեան:

Ֆրէճօյտի աշակերտներէն Գարլ

Նունկ յատակ կերպով կը սահմանէր ապագայ անձնաւորութիւնը բնորոշող մեր կեանքը, մանկութիւնէն ստացած եւ մեզ կազմող բոլոր ազդակներով կանխորոշուած կեանքը, ժողովրդական իմաստով՝ ճակատագիրը: Ձիւնական առածով կը խօսէր Նունկ. «Մա՛րդ, աստուածնիրու արեշուտով պիտի խաղաս քու դերդ, քազաւորի, մարացկամի թէ ռմրագործի դերդ»:

Այդ աստուածները ուրիշ բան չեն, եթէ ոչ բոլոր այն նախաորամազբող տարրերը, որոնց գումարով կը կազմուի մեր անհատականութիւնը (ամբողջական իմաստով): Իսկ այդ տարրերն են՝ ժառանգական, կենսաքիմիական, գեղձային, Ֆիզիքա-առողջական, ընկերային, ընտանեկան, Հոգեբանական, տնտեսական, մշակութային եւ դաստիարակչական:

Ահա թէ ինչո՞ւ բարդ կառույց մըն է մարդը եւ յիշուած պայմաններուն համեմատական բազմաբույս փոքր մէկ սազած-ին տարրերութեամբ կը ստեղծուին մարդկային տարրերութիւնները:

Երէկ Ֆէնրլու կը զարմանար եւ կը գրէր *Կարմաւորով*. «Դայլը կը յարձակի աշխարհներուն վրայ, առիւծները երբեք չեն պատերազմիր առիւծներու դէմ, իսկ մարդի՞կ, կարելի՞ է յիշել էակ մը ամբողջ Տիեզերքիմ մէջ, որ մարդուն գոնը եղած չլլայ»:

Մարդիկ խեղճ են, որ այսքան կը ոպաւեն: Կը կորսուին քաղաքակրթութիւններ, կը փճանան հանճարներու ժառանգութիւնները, ուրիշ հանճարներու դժոխային դիւտերով:

Երէկ մարդիկ կը մըցէին լաւն ու լաւագոյնը կերտելու. այսօր՝ մըցումը վճռապէս խորտակելու ճիգին մէջ կը կասնայ:

Այս բոլորին մղիչ ուժերը մինչեւ երէկ թաքնուած կը մնային: Անոնք սեռային եւ այլ նախաորամազբոյ տարրերու լուրջայն Հրամայականները կը գոյացընէին մեր ենթագիտակցութեան մէջ: Այսօր, այդ թաքուն գորութիւնները լայնօրէն կ'օգտագործուին արուեստի եւ դի-

տութեան բոլոր մարդերուն մէջ հաւասարապէս:

Հոգեբանական եւ ընկերային նուաճումներու ա՛յս լոյսին տակ պէտք է քըննել բոլոր այն դժգոհ, խաչալական եւ երբեմն լպխրչօրէն ազատական շարժումները, որոնք միջկազային գրականութիւն փորձեցին ըլլալ, բանաստեղծութեան մէջ մտան, իսկ այսօր կը փորձեն մեր անգաստանը մուտք դործել:

Ահա թէ ո՞ր կեցած է արդի գրողը եւ որքան դժուար է անոր համար ընկերային այս Հրժշտկող, դիրար հակասող իրականութիւններուն մէջ գտնել մարդուն ճշմարիտ կերպարը եւ վերծանել զայն արուեստին մէջ: Ո՛չ միայն գրողի կեանքին անմիջական շրջապատը յազեցած է վերոյիշեալ թանձրացեալ մթնոլորով, այլեւ ի՛նքը կը մնայ ենթակայ այդ մրուրը գոյացնող արդի ցնցումներուն, հոլովոյթի՛ն:

Զարմանալի չէ, ուրեմն, երբ վերջին Յոմաեակի մը իմացական աշխարհի ժառանգութեան, խառնափնթոր, հակասական ձգտումներու, ամէն օր ծնող «իզմ»երով ծանրացած քաստի մը առջեւ գտնուինք:

Իրապաշտութիւն, գերիբապաշտութիւն, դոյութեանպաշտութիւն, ոչնչապաշտութիւն... եւ կարելի է երկարել շարքը:

Նոր եղբիւր, նոր ապրումներու, նոր ձեւերու ի գո՛ւր որոնում...:

Ի գո՛ւր, որովհետեւ դեղեցկօրէն բնորոշուած է արգէն. «Եթէ կ'ուզէք դպրութեան մէջ նորը փնտռել, գացէ՛ք հին դասականներուն, իսկ եթէ կ'ուզէք հին մտքերու եւ արժէքներու ծափօքանալ՝ կարդացէ՛ք նորերը»:



Հայ իրականութեան մէջ, մենք իբրեւ սփիւռք եւ իբրեւ հայ, ցարդ կը դիտէինք, կ'ապրէինք եւրոպական մտքի նուաճումները, կը կարգայինք, կը բողոքէինք կամ կը վայրանայինք Հողորդուելով պատերազմներու զարհուրանքը ապ-

րած սերունդներու անտարբե՛ր, շփոցած եւ գժգոճ որդիներուն նոր շունչին, անպայման նորին հետեւելու երբեմն նոյնիսկ արուեստական ճիգին:

Այսօր, Պոլսէն, Թեհրանէն եւ վերջապէս Պէյրութէն կարգ մը դործեր մեր դրականութեան մէջ կ'ուղեն բերել այդ նոր ճիգը:

Ուրախ է երեւոյթը եւ քաջալերանքի արժանի: Ո՛րքան ալ աներկբայ ճշմարտութիւններ տուած ըլլայ մարդկային միտքը, նոր սերունդները դարձեալ չեն բաւարարուիր ու լիանար անոնցմով եւ կու դան իրենց դարու կնիքով ու շունչով աւլ կեանքը, անոր մէջ տեսնելու նո՛ր բաներ: Նորին հետեւելու, նորոգուելու այս ճիգը հոգեբնախօսական է մարդուն մօտ, որ կը հետեւի տիեզերքի ճշմարտութեան ու հորովոյթին: Հինէն ծնիլ նորը:

Եւ տակաւին, առաջին անգամ չէ, որ մեր դրականութիւնը պիտի պատաստուի եւրոպական գրգէն: Առաջին անգամ չէ, որ սերունդները պատրաստուած Գեորգիանոյ, Ֆրանսայի, Պելճիքայի, Անգլիոյ թէ Իտալիոյ մէջ, կը վերադառնան ծառայելու իրենց ժողովուրդին:

Ձիրենք կանխող սերունդներու համար միայն հիացում, պաշտամունքի աստիճան գովարանութիւն կը կարգանք այսօր, ա՛յն սերունդին մօտ, որ արդի երկու աշխարհարարներով մեր դրականութիւնը, մեր լեզուն, մեր արդի մշակոյթի զօրաւոր խորիւնները նետեցին:

Մինչ այսօր, նոր ձեւերու փողահարները խարազանով կ'իջնեն հըրապարակ, քանդելու եւ խորտակելու հաստատուած եւ ընդունուած արժէքները: Հայ մշակոյթը ի՞նչ կը շահի, եթէ մեջակ արժէքները մերժէ, երբ զանոնք փոխարինող լաւեր եւ լաւագոյններ չունի տակաւին:

Ուրա՛խ են բոլոր անոնք, որ կը մերժեն արիւնքահայ արդի բանաստեղծութեան մը գոյութիւնը: Ուրախ պիտի շարունակեն մնալ, եթէ այս անհեթեթ հաստատումէն մեկնելով՝ ընթերցողները

այրեն ցարդ իրենց դնած, կարգացած եւ սիրած գիրքերը: Այրեն, մաքրեն իրենց գրադարանը, չկարդան հայերէն եւ եթէ ծանօթ են օտար լեզուներու, կարգան օտար գրքեր:

Կը կրկնենք. ո՞վ կը շահի. մանաւա՛նդ՝ ի՞նչ կը շահի հայ դրականութիւնը:

Ձէ՞ կարելի ոչնչութեան ու միլակութեան դէմ պայքարիլ, քանդելու փոխարէն՝ շինելով, ամբոխավարական եւ լոյթներու փոխարէն՝ երկնելով, օրինակ հանդիսանալով:

1970ին, մենք առիթը ունեցանք կարգալու դրականութիւնը գորղի մը, որ վեց ամիս առաջ հրապարակու անարգած էր մեր ստեղծագործ ճիգը արիւնքի մէջ: Կարդացինք տնոր չքնաղ ստեղծագործութիւնը... որ նոյնպէս հրապարակ դալու իր իրականութեամբ անարգանք մըն էր մեր դրականութեան սրբութեան դէմ:

Տագանդն է, որ կը յաղթանակէ: Օճառի պղպաղակներու նման կ'ոյթները, ձեւերն ու փոխ առնուած տարազները կը կորսուին: Կը մնայ միջուկը, կը մնայ զբանը: Միթէ հայ բանաստեղծութեան քուրմերէն Դ. Վարուժան նուա՞ղ ասպանդաւոր էր եւ նուա՞ղ լուսաւոր եւրոպական մտքով, զան այսօրուան հերոսները: Նորարար մը չէ՞ր միթէ հայ բանաստեղծութեան սրտքախի երիվարը, Սիամանթօն: Նո՛ր եւ ասպանդաւոր մը չէ՞ր Չարենց: Այո՛, նոյնիսկ հայ բանաստեղծութեան այս ամէնէն շփացած դէմքին զժուար է ներել եւ ընդունիլ նորութեան սիրոյն գրած իր ձևիմ ու Լեփեմը եւ այդ կարգի հասարակ այլ կը տորներ: Նորութիւն չէ՞ միւս կողմէ անոր զես իմ Անուշ Հայաստանիս իւրաքանչիւր տունը:

Կրնա՞ք տալ մեր անմասն Քուլակին Հասասար արժէքով մէկ սնուն, աւելի նոր մտքով ու ազատ արտայայտութեամբ միջազգային բանաստեղծութեան մէջ:

Դ. Վարուժան, Պ. Դուրեան, Միամանթօ, Մեծարենց: Միւս արիւն՝ Տէրեան, Չարենց, Մահարի յաջողեցան եւ-

բուսական լսյով պեղել մեր անցեալի ժառանգութիւնները եւ կերտել հայ նոր գրականութիւն մը, կերտել բանաստեղծութիւն մը, որ իյնալով հանդերձ հայ թէ օտար տաղանդներու ցոլքերուն տակ, մնացին սակայն յազեցած հայկականութեամբ, գրուած իրենց անվիճելի տաղանդին կնիքով: Ո՞վ կրնայ մեզք համարել Դ. Վարուժանի մը, Մեծարենցի մը ժօտ ֆրանսական սէմպոլիզմի ազդեցութիւնը, ո՞վ կրնայ դատապարտել Պ. Գուրեանի «Լնակը», զայն լամարթիւնեան հռչակելով, կամ Սիւմանթոնի մէջ միայն նարեկացին տեսնելով:

Անոնք մեր գրականութեան փառքը կերտեցին:

Իսկ այսօր: Ծի՛ղչէ, այսօր հայ բանաստեղծութիւնը չէ յաջողած ինքզինք պարտադրել եւ ստիկա բաղմոթի պատճառներով: Այս պատճառներուն վերլուծումը մեզ հետունքը կը սանի, բայց ելլել և նորարարութեան անստոյգ արդունքով դատապարտել գոյութիւն ունեցող մեր բանաստեղծական վաստակը, մենք կը գտնենք անհեթեթ եւ դատապարտելի:

Միշտ մեկնելով եւրոպական մտքէն, ընդունելով ոճի, գրելաձևի արտայայտչական ձևերու նորութեան բարեքը, կը յայտնենք, որ այս բոլորը ճախողութեան դատապարտուած են առանց չընորհի, տաղանդի: Մենք է թիւը անոնց, որոնք նո՛ր վէպ, նո՛ր բանաստեղծութիւն, գերբնականութիւն փորձեցին, բայց շատ քիչ է յաջողածներուն թիւը: Քիչեր միայն տեղ հասան եւ այդ քիչերը սօտեալներն էին:

Բաղդատեցէք Արթուր Միւլերի եւ Իփսիւնի թատերական ստեղծագործութիւններուն միջուկը՝ երկու ծայրայեղութիւններ հռչակուած: Հինի ու նորի այս ներկայացուցիչներու պատգամներուն եւ խորքին մէջ նոյն իմաստասիրութիւնը պիտի գտնէք, անհատի՛ արժանիք, ազատութեան եւ հեռանկարային նոյն շնչուն ու մտահոգութիւնները:

Նոյն բաղդատութիւնը ըրէք Մէյ-Բափիթի եւ Իոննիւնայի միջեւ եւ կրկին

անցէք անոնց ոճէն, միջավայրէն զէպի անոնց գործերուն ակունքը, վաստահար պիտի յանդէք ունայնութեան դադարը շնչոտը, մարդկային նոյն սեղմումներուն զուհ, նոյն ցաւին ու պոսթկոմի արտայայտութիւններուն:

Միշտ ընդունելով տաղանդով առաջնորդուած նորարարներու նպատը, սակայն ընթերցողը վերապահութեամբ կ'ընդունի արտառոցութեան ուսումնասիրը հասնող անոնց փորձերը: Նկարչութիւնը վերացական դարոցին մէջ աւելի տարածուած է: Վերջերս միայն, հայ պարբերականի մը մէջ հայ ճեկարիչ մը չքնազ գիւտով մը շամփուրի մը վրայ մեզի հրամցուցած էր կանացի սեռային գործարանները...: Տակաւին նկարչութեան մէջ այս նորարարութիւնը, այս «վերացականութիւնը» չափով մը տանելի է, որովհետեւ աչքերը աւելի լայն հորիզոններու կ'առաջնորդեն մեր միտքը, գոյնի, գիծի, երեք ուղղութեամբ պարզուող տարածութեան մէջ ձևեր, փոքր ճարտարապետութիւններ կերտելով: Բայց նկատի ունեցէք մարդկային դժուարութիւնը գրականութեան, մասնաւոր բանաստեղծութեան պարագային:

Գրականութեան պարագային հազարակցութեան միջոցը լեզուն է միայն եւ բառերը միակ գրգիռը (սքիսմիսիւսը): Միայն ու միայն բառերը կան, բառերով կազմուած ոճը կայ: Անկէ դուրս նոյն զազափարը կազապարուած մտքով ընթերցողին փոխանցելու ճիգին օժանդակներ են կէտերը:

Բայց բոլոր արուեստներու մէջ գրականութիւնը ամենէն երթակայական արուեստներէն մէկն է: Ծի՛ղչէ, որ լեզուն իրար հասկնալու միջոց մըն է, բայց փորձով փաստուած է, որ մենք զիրար աւելի կը կուսենք, քան կը հասկնանք: Ձերար կը հասկնանք մեր փորձառութեամբ, մեր չափանիչներով, արուեստի մեր դնահատումներով: Մենք կ'ընկալենք մեր ընթերցումներուն ընթացքին ոչ թէ այն, որ հեղինակը մեզի կը փոխանցէ, այլ ա՛յն՝ ինչ որ մե՛նք կը քա-

դենք անկէ՝ մեր ենթադրուածական մը-
զումներուն Հսպատակելով:

Ահա թէ ինչո՛ւ լեզուի անհեթեթու-
թիւնը, գրելաձևի նոր շափանիչները,
նոր ու վերացական, առաձգական ձեւե-
րը մեզ կը դնեն Ռարշարի Թէքսի պատ-
կերներուն առջեւ — մեկնաբանել տես-
նըածը եւ մեկնաբանութենէն հանել հն-
թակայի հոգիին զանազան վիճակները:

Այս է դիմաւոր պատճառը, որ ու-
մանք կը թաքնուին այս գրելաձևին հ-
տեւ: Կը թաքնուին, որպէսզի աւելի
խրթին դատնան, իրենց շունչեցածը վա-
րագուրեն նոր օճակաւարներով:

Եթէ արձակը այսքան ճիշդ, փորձա-
ռութիւն ու ճշգրտաստութիւն կը պա-
հանջէ ընթերցողէն, ի՛նչ պէտք է ըսել
բանաստեղծութեան պարտադրին, երբ
աւելի քիչ բառեր, սեղմուած գաղա-
փարներ, պատկերաւոր բացատրութիւն-
ներ մեզի լայն մտքեր կը փոխանցեն:

Կարելի է այստեղ լայն օրինակներ
մէջըրերել, բացատրելու համար վերա-
ցական նկարչութեան կարգ մը ծիծաղելի
դէպքերով մարդոց սնտիլովը:

Տարիներ առաջ «Լը Մոնտըն» առ-
նելով՝ անդուանալի դէպք մը ներկայա-
ցուց «Նայիրի» շարաթաթերթը: Իշու մը
կողմէ դժոգորուած եւ առասպելական
դուժարով ծախուած պատասխի մը պատ-
մութիւնն էր ասիկա:

* *

Պոլտէն, Հայ նոր բանաստեղծու-
թեան ծննդավայրէն հկաւ նաեւ նորա-
բարութեան այս հոգի:

Արդի Հայ լրագրութեան նահապե-
տը՝ Շաւարշ Միսաքեանն էր, որ առա-
ջին անգամ կը բողոքէր այս անհեթե-
թութեան դէմ: Արգարեւ, 1953-ին,
«Լուսադրիւր» պարբերաթերթի Յունիս-
Յուլիս միացեալ թիւին մէջ, նոր շուն-
չով, «Տեղեկագիր», արդիապալա բա-
նաստեղծութիւններու կը հանդիպինք,
իբրեւ ճերմասարդ գրողներու հակադ-

դեցութիւն թոթանպուրայի զրականու-
թեան վրայ:

Ահաւասիկ այդ «հակադեցութիւն-
ներէն» մէկ քանին.

Մէկ աշակերտ առևտրական
Մէկ աշակերտ սեղանաւոր
Քարիւղի թագաւոր
Լեմոնի թագաւոր
Ինժը՝ ամէնուն թագաւոր՝
Անօթութեան թագաւոր:

Երկրորդ նորարարութիւն մը, կըր-
դին նոյն թիւէն.

Կիկոն կամուրջին վրայ,
Շոգեմաւր տիւք կ'ընէ կ'երթայ
Կիկոն բազրիքին յեմած կը նայի
Ամէն շոգեմաւ գալուս Կիկոն
կ'ուրախանայ:
Կամուրջին վրայ է Կիկոն,
Քիթը վեր կը քաշէ
Մարդիկ կու գան, մարդիկ կ'երթան
Կիկոն կամուրջին վրայ է
Շոգեմաւր տիւք կ'ընէ կ'երթայ:

Ինչպէս կարգ մը նամակագիրներէն
կ'ակնկալուի անձամբ ներկայանալ եւ
իրենց անընթեռնելի ձեռագիրը կարգաւ,
կարծէք ի յառաջագունէ նոյն մտահո-
գութիւնը ունեցած է վերի չքնաղ տողե-
րուն երկնիչը եւ բացատրած է զայն մե-
լտարամային ոճով.

Կիկոն կամուրջին վրայ (Կը նշանակէ
առև տեղ շունի)
Շոգեմաւր տիւք կ'ընէ կ'երթայ (Այս
տիւքը շունեւոր տղուն միակ դրօսանքն
է)
Կամուրջին վրայ է Կիկոն (Գործ շունի,
դրամ շունի, ընտանիք շունի, ո՛ւր եր-
թայ)
Քիթը վեր կը քաշէ (Թաշկենակ առևտու
դրամ շունի):

Այս բանաստեղծութիւնները ընդ-
հանրապէս ներշնչման աղբիւր ունին
թուրք նոր բանաստեղծներուն ձափը-
տութիւնը, մասնաւորապէս Մելիք Ճէվ-
տէթի զուսկարանութիւնները, որուն

Հետեւեալ նմոշին շատ կը նմանին վերի գոհարները:

Պիւլիւք պալլիք
Գիւլիւք պալլըզը
Նուքար տէմիշլէր
Պօք եւմիշլէր:

Մէկ փարմաք
Մէկ փարմաք տառա
Սապրնի սօնու սէլամէք:

Մելիփ ձեւ՝ՏԵԹ

Տակաւին կարելի է շարքը երկարել, կարելի է յամենալ թեհրանի մէջ «ար-
ձանագրուած նուանումներու» վրայ, բայց կ'ուզենք Պէյրուքի մէջ մշակուող կարգ մը տողեր եւս մէջըրել այս-
տեղ: Այս անգամ սակայն մեզի հրամար-
ւածը մերտարած մը չէ, այլ սեռային մտասեւեռումի ախտով տառապող հո-
գիի մը «տուայտանքը»:

Օ՞ մայր, բա՛ց արգանդդ,
Օ՞ քայր, բա՛ց գիրկդ,
Օ՞ կի՛ն, բա՛ց սրունքներդ:

Պէտք է ետ լողամ դէպի ակումբը —
Երակներու, գեղներու, անդամներու
մէջէն —
Սերնդագործական օրկաններու եւ
անձաններու միջոցով:
Վարդայիմ կամուրջ մը պէտք է
անցնիմ:

Մարդ ակամայ կը յիշէ հողերանու-
թեան ա՛յն փրօթիսէօրին առղերը, որ
կ'ըսէ. «Սեռայիմ գործին մէջ, գործողը
չի խօսիր իր արարքին մասին, չկարե-
նալ գործելու պարագային անմի իրենց
միջիքարութիւնը խօսքին մէջ կը գըս-
նեն»:

Գժբախտաբար, օրէ օր կ'աճի թիւը
այս զգայրոցին՝ Հեռուող Հերոսներուն:
Այս հերոսները եւս կարելի է բաժնել ե-
րեք խումբի: Պիւսոյ խումբը, որմէ ա-

ռինք «շոգեմարի» եւ «թագաւորի» նը-
մոշները, որ սեռային եւ էոքսիք լպըր-
չութիւններ չունի, ծիծաղելիին մէջ
կը մնայ, բայց այդ խումբէն կ'անջատ-
ւին շնորհալի բանաստեղծներ, որոնցմէ
ապրուած եւ խոր քերթուածներու հան-
դիպած ենք:

Երկրորդ խումբին կը պատկանին
թեհրանի բանաստեղծները, որոնց մօտ
պէտք է խոստովանիլ, որ շնորհի մը
ներկայութիւնը զգալի է: Բայց անոնք
կը դրեն այնպէս՝ ինչպէս կը կարգան ի-
րենց աղբիւրներէն, որոնց կաշկանդէլ
աղղեցութեան տակ կը մնան նոյնիսկ
կալանաւոր՝ արդի մեծերու քերթուած-
ներու խորագիրներուն: Անոնցը, քէլ
բացառութեամբ եղած են կեանքի եւ
մահուան իմացական խորհրդածութիւն-
ներ, չափածոյ:

Երրորդ խումբին կը պատկանի Լի-
բաններ: Այս շարժման կը հետեւին.

1) Ուսանողներ, որոնք նոյնիսկ ուս-
ման ընթացքը աւարտելէ ետք կը մնան
ուսանող, կապուած զրգերու, զիրենք
ներշնչած վարպետներու:

2) Բնական պայմաններու տակ ձա-
խողաններ, որոնք քէլ մը արձակ, քէլ
մը բանաստեղծութիւն փորձելէ յազնած՝
կու գան նորարարութեան մէջ ծաղկե-
լու:

Լիբանանի մէջ յետ եղևունի սերունդ
մը հրատարակ եկաւ: Սերունդ մը, որ
յաջողեցաւ հայ բանաստեղծութեան բե-
րել գաղթական ժողովուրդի մը կարօտ-
ները, ապրումները, վերածննդեան ձգ-
տումները, հեռանկարները: Սերունդ մը,
որ առաջնորդուեցաւ Յ. Օշականի ցուց-
մունքներով, ուսուցիչ ունեցաւ չափով
մը Վ. Թէքէեանը, իրրեւ վերջին մահի-
կանը պոլսահայ բանաստեղծութեան:

Անոնք եւ անոնցմէ հօք եկողները
արեւմտահայ աշխարհաբարին նոր փայլ
մը՝ բերին եւ այսօր, երբ կը կարգանք
երկու սերունդներուն նոյնիսկ միջակ
ստեղծագործութիւնները, ուրախու-
թեամբ կը հաստատենք անուսուղի բծա-
խնդրութիւն մը հայ լեզուի նկատմամբ

և զայն յղկելու, թիւրեղացնելու ճիգ մը:

Վերադառնալով Լիբանանի արդի բանաստեղծներու այս երրորդ խումբին, յայտնենք, որ անոնք ամէն զնով կ'ուզեն աղաղակել, կ'ուզեն Հայ Հանրութեան ուշադրութիւնը իրենց վրայ կեդրոնացրնել: Անոնք՝

1) Կը մաքրադտեն Հայ բանաստեղծութեան Հրապարակը: Վերջի բանաստեղծութիւնը շունինք՝

2) Ապա իրենք կ'իջնեն Հրապարակ եւ կը փորձեն ցոյց տալ, թէ ի՞նչ է բանաստեղծութիւնը: (Վերի օրինակները ցոյց կու տան այդ փորձերը եւ անոնց արդիւնքը): Անոնք կ'որոնեն նոր միջոցներ, միջոցներու մէջ խարութիւն չեն զննը իրենց անունները Հոլովի տալու, ա'յնպէս՝ Ինչպէս կը յամարի տղևը սըրունքներով աղլիկը միմի-միմի Հազարի:

Կը փորձեն ըսինք, այո, այս նոր բանաստեղծութենէն թուղթին կու դան Հայհոյանք, կեանքէ առնուած ամէն տեսակ զարշնիութիւն, ճեմիչներ, փողոցներ: Անոնք արուեստին տաճարը կը փորձեն բերել ա'յն, ինչ որ ամէն օր կը լսենք ու կը տեսնենք փողոցներու մէջ:

Այնտեղ կը տեսնուի սեռային կեանք մը ապրելու պահանջը, ա'յնպէս՝ Ինչպէս բացատրեցինք վերը: Բացատրեցինք, ընդունեցինք, որ այսօր Ֆրէյժտականութիւնը զրօշակ դարձուցած՝ երիտասարդները սեռ կը խաղան:

Ժապաւէններ, Նկարիչներ, Հրատարակչատուներ իրենց մեծ շահերը Հիմնած են սեռայինութեան վրայ: Ոչ միայն սեռայինութեան, որ Հաւանաբար սեռային ներքին եւ ընկերայնօրէն ընդունելի սահմաններու մէջ կատարուած տանելի բնուի, այլ ա լա մօտ դարձած էտթիդ:

Դժբախտաբար սեռային այդ կերքն է, որ Հայ բանաստեղծութեան փոխանցել կը փորձեն այսօր կարգ մը նորեր: Անոնք իրենք իրենց թու կու տան

ստորագրելու էջեր, ուր արուեստը կը նահանջէ կիրքին առջեւ, ուր ընթերցողը բանաստեղծութիւն կարգալէ աւելի՝ ինքզինք կը զգայ պոռնկազրական ցուցահանդէսի մը մէջ կամ նոյն նիւթին ներքուստ ձուխող Վժայիւնի մը ներկայութեան:

Համաձայն ենք, որ զրականութիւնը, մասնաւոր բանաստեղծութիւնը բարոյական դասերու տեղ չէ, բայց զրականութիւնը արտայայտութիւնն է միջավայրի եւ անհատի հոգեկան պահանջներուն եւ պայմաններուն: Գրականութիւնը արտայայտութիւնն է, ենթակայական ըլլալու պարագային, անհատի ներքին, թաքուն տնչիւրու, անբարար պահերու: Այստեղ օգնութեան կու դայ մեզի Հոգեբանութիւնը: Հոգեբանութեան արդի քեթիվիստ, միակ մէկ ժամայ մտերմիկ տեսակցութիւն մը կը բաւէ հոգեբանին՝ թափանցելու համար իր հիւանդին ներքին, ենթազգայական եւ սեռային թաքուն պահանջներուն, դժուարութիւններուն եւ անբնական ընթացքին: Գրականութիւնը այդ Հոգեբանութիւնն է շատ յաճախ, որ ստեղծագործութիւն կոչուած interview-ով կը յայտնաբերէ մեր արարքներու զրգապատճառները, ա'յն բոլորը, զորս պիտի ուզէինք ընել մեր կեանքին մէջ, բայց superego-ի(*) զօրութեան առջեւ խոնարհած՝ յաղեցում կը ստանանք ստեղծագործական ճիգով:

Մեր գրականութեան մէջ շնորալից երկու մեծ պատկերներ են այս ուղղութեամբ Զարենցին ու Վարուժանին ներհակ կեանքն ու զործերը:

Ուրեմն զարմանալի չէ, երբ կ'ըսեն, թէ մարդը կորելի է ճանչնալ իր զօրծէն: Մարդը ո՞ն է:

(*) Ֆրէյժտ մեր անասականութիւնը երեք մասերու կը բաժնու: 1) Jd, որ մեր ընդօրին ժողովրդական է, 2) ego, որ մեր եզրագամական-փիզիկական կազմուածք եւ զարգացող է եւ 3) superego, ընկերային նախալից մեր ետի զգումները նախալից:

••

Տաղանդաւորը կը յաջողի: Այս է միակ թանձրացեալ ճշմարտութիւնը: Աւելի կը յաջողի, եթէ նորութիւն մը միացուցած ըլլալ իր տաղանդին: Ասկէ դուրս քարոզչութեամբ կամ այլ միջոցով ստեղծուած ամէն յաջողութիւն ժամանակաւոր է եւ անցողական:

Ուրեմն յայտնենք, թէ մենք ուշիմութեամբ, ճաշակով եւ տաղանդով օգտադրծուած նորարարութեան զէմ շենք: Կարդացէ՛ք Հայաստանի ամէնէն երիտասարդ բանաստեղծներէն Ռազմիկ Գաւոյեանը, հաստատելու համար մեզի հետ, թէ ինչպէ՛ս կարելի է նոր ձեւերով, ոճերով ու գրելաձևով իսկ ըլլալ ու մնալ բանաստեղծ:

Նորութիւնը միշտ կը միանայ տաղանդին:

Գուրգէն Մահարի, Ջարենցէն ետք Հայաստանի ամէնէն օժտեալ բանաստեղծը՝ նորութիւն մը կը բերէր իր շափածոյ թէ արձակ ամէն էջի մէջ:

Ուիլիամ Մարոյեանի եւ իր զուգին՝ Արամիւն գնահատանքին եւ հիացման արժանացած Մահարիի հետեւեալ տողերը կը գերազանցեն արդիսպաշտ շատ մը բանաստեղծութիւնները:

Մի ջիւղ գիշեր է եղել,
Մի ջիւղ գիշեր,
Մայրս քանի մի եղեգ,
Հայրս՝ ումեղ:

Բարդիմերն եմ երգել
Ջրերի մօտ,
Ամէն ինչ խորն է եղել,
Ամէն ինչ յարդ:

Ու մօրս յուզել է
Բարդիմերի երգը,
Իսկ դաշտերում փիրուզէ
Ծղրիթներն եմ երգել...

Ա՛յ, ծղրիթներ շատախօս՝
Լուսնկայի հետ,
Ծնունդի ձեր պատկառով
Այսպէս պահու...:

Այսքան բաց, բայց այսքան նուրբ քննչութեամբ սեռային պահը երգող տղաները բաղդատեցէ՛ք վերը յիշուած գեներացիութեանց հետ եւ տեսէ՛ք, թէ ո՛ւր կը վերջանայ սպաշնորհ կերպով ցուցադրուած կիրքը եւ ուրի՞նչ կը սկսի արւեստը:

Արդի սփիւռքահայ բանաստեղծութեան սահմանները եթէ բանանք հայկական շունչով եւ ոգիով երկու բանաստեղծներու առջեւ, մեծ հպարտութեամբ պիտի ընկալենք Շարլ Ազնաւուրն ու Ալիսիա Կիրակոսեանը:

Երկու ՄԵՄ ՀԱՅԵՐ, Մեծեր եւ միանգամայն հայեր: Շարլ Ազնաւուրը, արքան նորութիւններու աշխարհին, արքան նոր երգին, որ իր երգերը կառուցանեց հայարոյր եւ հայահոգի բանաստեղծութիւններու վրայ: Եթէ վազը նըւազի հոշակը երգիչ Ազնաւուրին, անպայման պիտի աւելի փողփողի բանաստեղծին աստղը: Ջարմանալի չէ: Աւելի քան 250 տարիներ ետք՝ աւելի փառաւորուեցաւ եւ գնահատուեցաւ մեր գրականութեան մեծագոյն սիրահարն ու մեծագոյն բանաստեղծը՝ Սայաթ-Նուիս:

Իսկ Ալիսիա Կիրակոսեան, տակաւին կը շարունակէ իր կարելիութիւններով միջազգային բանաստեղծութեան մէջ նոր նուաճումներ արձանագրել:

Նորարարութի՛ւն:

Կարդացէ՛ք սպաներէնով դրուած եւ Վ. Դաւթեանի կողմէ յաջողութեամբ թարգմանուած անոր բանաստեղծութիւնները, հաստատելու համար, թէ որքան թաթաւուն են արուեստի յատկանիշներով, նոր շունչով, նոր ռոնով, արդիական խորքի ըմբռնումով գրած անոր տողերը: Հաւանաբար սփիւռքէ հայ բանաստեղծութեան մէջ առաջինն է այս հայ աղջիկը, որ նոյնիսկ զրկուած իր մայրենի լեզուի բարիքէն, ա՛յնքան գեղեցկօրէն կը գգայ, կ՛սպրի ու իր հայրենազուրկի վառ զգացումները կ՛արտայայտէ Հայաստանին ուղղուած բանաստեղծութեան մէջ:

Գաղափար ժը կաղմելու համար՝ կու

տանք հատուածներ «Նամակ առ Հայաստան» *խորագրով այլ գերթուածէն.*

Երկիր Հայաստան
Եւ քեզ գրում եմ
Բունեսու-Այրէս հեռու հազաւից,
Մեր բաժանումից երկու տարի անց:

Եւ յայտով եմ ես,
Որ իմ նամակը
Քո արեւներին
Ու քո լեռներին դու պիտի կարդաս,
Ինձ պատասխանեն պիտի ջրերդ՝
Մտերիմները
Քո արեւանների...
Ինձ պատասխանի պիտի քո ոգին
Եւ պատասխանի իր մէկ ու միակ
Այն ճշմարտութեամբ,
Որ ի՛մն է նաւ:

Երկիր Հայաստան,
Դու կանչում ես ինձ,
Քեզ է պահանջում ու քեզ է կանչում
Նաեւ արիւնս,
Եւ ինձ տանջում է տենդը սպասում:
Ուրիշ, այլ սէրեր
Յուզում են միայն
Ակնթարթները իմ ժամանակի,
Քոնն է, Հայաստան,
Ողջ անձեռնամախ իմ ժամանակը
Եւ ամենայինը
Իմ արտասուէր:

Քամոյի այն ամէնն,
Ինչ որ պատմում է
Մայր հողի մասին
Ու արեան մասին,
Ամպի ու լեռան,

Հացի ու փառքի,
Այլի ու լոյսի,
Երաժշտութեան,
Բանաստեղծութեան,
Արցունքի մասին,
Անդունդի մասին,
Սարսուտի մասին
Ու քարի մասին,

Ինձ քո մասին է պատմում շարունակ:
Զէ՞ որ ես տեսայ,
Թէ Հրազդանը
Քարի ու ջրի յաւերժ բախումով
Ինչ է նկատում,
Եւ ամպերի տակ տեսայ բարախը
Արարատ լեռան:

Այս տողերը արդիւրայր ըլլալով հանդերձ՝ բանաստեղծութիւն են, որովհետեւ տաղանդաւոր գրիչի մը ըստ տեղծագործութիւնն են:

Եզրակացնելով, կարելի է ըսել, որ ամէն գունկութիւն, ամէն արուեստական ձգտում դատապարտուած է կորստեան: Կ'ընդունինք ամէն նորութիւն, եթէ մեզի տայ նոյնիսկ «վրան բաց» գրականութիւնը, վեր մնալ հասարակէն, գունկէն, այնպէս՝ ինչպէս մերկ արձաններն ու նկարները, մերկութենէն առաջ մեզի կը բերեն արուեստը, այնպէս՝ ինչպէս Դ. Վարուժանի «Հեթանոս երգերը» կիներու մարմնի գեղեցկութիւնները կը վերածէ իրա՛ւ բանաստեղծութեան:

Հայ բանաստեղծութեան անզատանը, սփիւռքեան մեր պայմաններուն, կարիք ունի հայ նոր բանաստեղծութիւններու, որոնք մեր հողիները շոյեն, մեր ազգային ու մարդկային զգացումները վառեն նոր կամ նորոգուած կրակով: Այդ կրակին պէտք ունինք այսօր:

ԱՐՄԷՆ ՏՈՆՈՅԵԱՆ



ԱՐԹԻՐ ԱՂԱՍՈՎ

ԲՈՒԺԵԼԻՆ ԵՒ ԱՆԲՈՒԺԵԼԻՆ

ԳՐԵՅ՝

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ

«Փինկ-Փոնկը» կը ներկայացնէ երկու մարդոց կեանքի պատմութիւնը, — բժշկութեան ուսանող մը՝ Վիլքթոր, եւ Արթիւր՝ արուեստի ուսանող մը: Թատերգութեան սկիզբը անոնք իրարու կը Հանդիպին Տիկին Տիրանթիի սրճարանը եւ կը խաղան հոն զետեղուած փիմպոլ մեքենային վրայ: Իրրեւ վաճառականական ձեռնարկ՝ մեքենան կը հրապուրէ զիրենք, որովհետեւ կը նկատեն, թէ ինչպէս ընկերութեան գործակատարը կուզայ անոր մէջ ձգուած դրամները հաւաքելու: Իսկ իրրեւ թեքնիք հարց՝ մեքենան ունի կարգ մը թիրութիւններ, որոնցմէ կարելի է գերծ մնալ, նորոգելով: Նորոգութեան խնդիրը կը դառնայ մինչեւ իսկ հրուէր մը իրենց բանաստեղծական ընդդեմը — մեքենան իր ուրոյն բանաստեղծութիւնը ունի, փայլփրոջ լոյսեր, եւ ձեռով մը արուեստի գործ մըն է: Վիլքթոր եւ Արթիւր կը թելադրեն կարգ մը փոփոխութիւններ մը —

ցրնել անոր մէջ: Կը դիմեն համապատասխան ընկերութեան մը ներկայացուցիչին, որ քննութեան մը կ'ենթարկէ զայն, եւ մեքենան աստիճանաբար կը գտնայ իրենց կեանքին վրայ ազդող դիւրաւոր ազդակը, ղեկավարելով իրենց երազներն ու յուզումները: Այնուհետեւ կը սիրահարուին ընկերութեան գրասենեակին մէջ աշխատող աղջկան: Վէճ կ'ունենան զարձակ նոյն աղջկան ու մեքենային հետ միայն: Կը վախնան միայն ու միայն ընկերութեան անօրէնէն: Ընկերային եւ քաղաքական զարգացումին շուրջ իրենց հետաքրքրութիւնը կապուած է փիմպոլ մեքենաներու եկամուտի վերելքով մտնելուն:

Եւ այս պայմաններուն մէջ է, որ կը ծերանան անոնք: Վերջին տեսարանին մէջ կը տեսնենք գիրենք իրրեւ երկու ծեր մարդիկ, որ փինկ-փոնկ կը խաղան, մանկունակ մըցում մը՝ ա՛յնքան ապարդիւն, որքան իրենց ամբողջ կեանքը, որ

խմաստաւորուած է խաղով մը, Վիքթոր ու ժապարակ կ'ըլլայ ու կը մեռնի: Արթիւր կը մնայ առանձին:

«Փիճկ-Փոնկը», Աշամովի առաջին թատերգութեան՝ «Խնդկատակութեան» պէս, կատուած է բան մը ընելու մարդկային փորձին ազարդելութեան: Բայց մինչ «Խնդկատակութեան» պարզապէս կը հաստատէր, թէ ինչ որ ընես, վախճանդ մաս է, «Փիճկ-Փոնկը» կը հարթաթէ ու զեւորէն զաստուարած փառասրկութիւն մը՝ այդ առաջադրութեան օգտին: Անիկա ցոյց կու տայ նաեւ, թէ ինչպէս եւ ինչո՞ւ մարդկային այսքան լիթիարի ջանք ապարդին կ'ըլլայ: Իրենք զիրենք բանի մը մէջ մոռնալու մէջն է իրենց զօրութիւնը, մեքենայի մը մէջ, որ կը խոստանայ իրենց ուժ, դըրամ, կ'ազդէ իրենց ցանկացած կընով վրայ, այնպէս որ՝ այս հարցերուն առնչութեամբ՝ Վիքթորն ու Արթիւրը շուքբու այս ապարդին հաւանանքին մէջ կը վատնեն իրենց կեանքը: Մեքենայ մը հնարելով, անոնք կը թերազնահատին իրենց կեանքի բոլոր այն միւս արժէքները, որոնք իրենք իրենց մէջ անկնդծ ելքեր են: Այսինքն՝ իրենց ըստեղծագործ բնագրը սրելու կարողութիւնը եւ ընկերութեան մաս կազմելու զգայնութիւնը: «Փիճկ-Փոնկը» կու տայ մարդու առանձնացման ուժեղ պատկեր մը, աստուածացումը մեքենայի մը, փառասիրութեան մը կամ վարդապետութեան մը:

«Փիճկ-Փոնկը» թատերախոյուն մէջ փիճկալ մեքենան աւելի քան մեքենայ մըն է: Մասնորոշութեան ամբողջ դրութեան մը զլիսուոր առանցքն է անիկա: Այն վայրկեանին, երբ նպատակը — փիճկալ մեքենային բարեփոխումը — իր տէլ մը կը դառնայ իրենց, մեքենան ինքնին կը վերածուի կազմակերպութեան մը՝ իր սեփական ուժով, քաղաքական իր սեփական Էնթրիքներով, սեփական թեքներէնովն ու ռազմավարութիւններով: Ուրիշ խօսքով, անիկա կը դառնայ կեանքի եւ մահուան հարց մը բոլոր անոնց համար, որոնք կը ծառայեն այդ իտէյային:

Թատերգութեան մէջ քանի մը տիպարներ կը փնտրուին կազմակերպութեան ծառայութեան մէջ, կամ անոր ներքոյակ ուժի պայքարին մէջ: Այս բոլորը տեղի կ'ունենան գերագոյն տենդով, լրջութեամբ ու խտութեամբ: Եւ յանուն ինչ բանի այս ամէնը: Մանկական խաղի մը, փիճկալ մեքենային, — ոչնչութեան: Իրական կեանքին մէջ, սակայն, մարդիկ իրենց կեանքին նպատակը կը տեսնեն վաճառականութեան, քաղաքականութեան, արուեստի եւ մտաւորական աշխատանքին մէջ — էսպէս տարբեր Վիքթորն ու Արթիւրը գերող մղձաւանջէն: Ատիկա «Փիճկ-Փոնկ»-ի ուժն ու գեղեցկութիւնն է, որ շատ պատկերաւոր ձևով մը կը յուզէ բուն հարցը: Արդամով կը յաղոյի փիճկալ մեքենան մարդկային նպատակներու եւ ձեռնարկներու համոզիչ պատկերի մը բարձրացնելու դժուարին ճարտարութեան մէջ: Ատիկա կ'ընէ բանաստեղծական խորութեամբ մը, որով ան կ'օժտէ իր տիպարները, երբ անոնք կը խօսին ամէնէն անհեթեթ երեւոյթին, այդ անհեթեթ գործիքին մասին այնպիսի մղձաւանջային համոզումով եւ կեղբոնացումով մը, որ բոլորովին ճիշդ կը հնչէ:

Թատերգութիւնը կը բովանդակէ հասարակապէս իրական եւ ցնորական տարբեր. ժամանակն ու տեղը բաւականաչափ իրաւ են համոզում գոյացնելու համար, սակայն մթնոլորտը, ուր գործողութիւնը տեղի կ'ունենայ, ճշմարտի մը պէս հետու է ամէն ինչէ, բացի տիպարներու աշխարհէն: Այս հանգամանքը թատերագրին իրապաշտութեան պակասէն չի դար, այլ կու դայ ուղղակի՝ տիպարներու մղձաւանջէն, որ ազդու ձևով մը կը սահմանափակէ զիրենք իրական աշխարհի նեղ մասին մէջ եւ մենք մեքենայի աշխարհը կը տեսնենք իրենց սեսուաղաչտի սահմանափակ անկիւնէն:

«Փիճկ-Փոնկ»-ի տիպարները ամբողջականորէն իրազորուած անհատներ են: Անոնք այլեւս իրենց կամէնքն դուրս ուժերով չեն ղեկավարուիր, կամ զիշուրալիքներու պէս չեն շարժիր, անոնք

իրենց կեանքին ձեռք որոշող ազատութեան տարբ մը ունին — եւ իրապէս մենք կը տեսնենք փիմպոլ մեքենային իրենք զիրենք նուիրելու Վիքթորի եւ Արթուրի բուռն տենչը: Եւ թէեւ Վիքթորը երկուքէն աւելի գործնականն է, եւ Արթուրը՝ բանաստեղծ մը, այսուհանդերձ ա՛նոնք այլեւս պարզապէս զիրար ամբողջացնող տիպարներ չեն:

Ինչ որ թերեւս ամէնէն ինքնատիպ երեւոյթը կը հանդիսանայ «Փիմկ-Փոնկ»-ի մէջ, այն է՝ որով ներքին հակասութիւն մը, տիպեֆտիք կապ մը կը հաստատուի գործողութեան եւ երկաթասութեան միջեւ: Անիկա թատերգութիւն մըն է, որ իբրեւ սոսկական ընթերցում բոլորովին կրնայ անիմաստ նկատուի: Փիմպոլ մեքենային բարենորոգումներուն շուրջ եղած խօսակցութիւնները կրնան բացայայտորէն շատ հասարակ թուիլ: Թատերգութիւնը ճշմարտապէս իր իմաստը կը դրսեւորէ ճիշդ այն պահուն, երբ դերասանին կողմէ մեքենային մասին եղած խօսակցութիւնները կ'արտասանուին ա'յն խոր համոզումով, որ արժանի է բանաստեղծական բարձր թուշբէ: «Փիմկ-Փոնկը» թատերգութիւն մըն է, որ պէտք է խաղցուի, աւելի շուտ հակառակ բնաչրին, քան բնաչրին աստացիորէն հաւատարիմ մնայու գասական կերպին: Ասիկա անուղղակի տիպալիին նմանող թեքնիք մըն է, զոր Արամով կը կարծէր հնարած ըլլալ «Ներխուժում»-ին համար եւ զոր, աւելի ուշ, դուռն էր Չեխովի մէջ: Բայց այս թեքնիքը տարբեր աստիճանի մը կը բարձրանայ հոս: Չեխով անուղղակի տիպալը կը գործածէր այն վիճակներուն մէջ, ուր տիպարները շատ ամօթխած էին՝ իրենց իրական մտածումները արտայայտելու համար եւ կը ծածկէին զանոնք՝ անիմաստ նիւթերու շուրջ խօսելով, մինչ հոս, տիպարները այնպիսի խորութեամբ մը կը հաւատան անհեթեթ հաստատումներու, որոնց մասին, իրենց կարգին, կը խօսին մարդարէական տեսիլքի մը առթած մոլեռանգութեամբ: Չեխովի մօտ իրական զգացումները կը

պահուին անիմաստ կենցաղավարութիւններու ետին, մինչ «Փիմկ-Փոնկ»-ի մէջ անհեթեթ պաշարները կը դրսեւորուին այնպէս, իբրեւ թէ անոնք յաւիտենական ճշմարտութիւններ ըլլային: Արամով տուած է հետաքրքրական մանրամասնութիւն մը «Փիմկ-Փոնկ»-ի ծննդոցի մասին: Նախ քան թատերախաղին մնացեալ մասերուն նիւթը ճշդելու, ան սկսած է վերջին տեսարանով, ուր երկու ծերեր փինկ-փոնկ կը խաղան: Իր ամբողջ դիտցածը այն էր, որ անգամ մը եւս կ'ուզէր ցոյց տալ, թէ ինչպէս, ի վերջոյ, մարդկային բոլոր ձեռնարկները կը յանգին նոյն ապարդիւնութեան: Այսինքն՝ Ֆիդիքական եւ հողեկան ա'յն տկարութեան, երբ մարդ արարածը կը տարուբերի մահուան նախօրեակին, նախ քան մահը հաստատէ ամէն ինչի վերջնական անհեթեթութիւնը: Սակայն Արամով կ'ըսէ. «Աշխատելու այս ձեւը, թէեւ բաւականօրէն փարատօքայլ կը թուի, փրկեց զիս: Ժամանակիմ վստահ էի, թէ սովորականիմ պէս պիտի կարեւանի ցոյց տալ նոյնաքիւնը մարդկային մակատագրիմ... Ինքզինեմ ազատ գզգցի տիպարները գործողութեան մղելու եւ կացութիւններ ստեղծելու...»: Անգամ մը կ'որոշէ փիմպոլ մեքենայ մը զետեղել գործողութեան մէջտեղը. աւելին՝ ստիպուած կ'ըլլայ ճշդել ժամանակը (ներկան) եւ տեղը (Փարիզի շատ նմանող քաղաք մը) գործողութեան:

Այսուհանդերձ, «Փիմկ-Փոնկը» կը պատկանի անհեթեթի թատերոյնի շարքին. անիկա ցոյց կու տայ մարդուն անհրապտակ պարտագրանքով մը կլանուած ըլլալը, ապարդիւն ջրագրութեամբ կատարուած գործողութեան մը մէջ, որ պիտի վերջանայ հողեկան եւ ֆիդիքական քայքայումով, մահով: Փիմպոլ մեքենան ունի խորհրդանշիչ մը ապշեցուցիչ անորոշութիւնը: Անիկա կրնայ խորհրդանշել գրոմատիքութիւնը եւ առեւտրական մեծ ձեռնարկները, բայց հաստատապէս կրնայ եւ խորհրդանշել կրօնական եւ քաղաքական վարդապետութիւն մը, որ դադարի կը պահէ իր կազ-

մակերպչական ուրոյն դիմագիծը եւ ուժը եւ որ իր անդամներէն նուիրում եւ հաւատարմութիւն կը պահանջէ :

Սակայն, «Փիւնկ-Փռնկ»-ի վրայ աշխատած միջոցին, Ազամով կը հետանար թատրոնի այն գաղափարէն, որ կը յաւորէր մարդկային ընդհանուր հարցեր: Ան «Փիւնկ-Փռնկ» քննադատած է երկու պատճառներով — վերջին տեսարանը, որ թատերգութեան մնացեալ մասերէն առաջ դրի առնուած է ու իր այդ ձեւին մէջ նախասահմանած է վախճանը եւ կողացուցած է ոճը, եւ երկրորդ՝ ընկերութեան ծրարուած ըլլալու բնոյթը, որ

«Անկատար ձեւով կ'անջատուի այլաբանութենէն: Իրականութեան մէջ ընկերային գարգացումը, որ տարիներու ընթացքին կը փոխէ տուեալ ընկերութեան ներքին կառուցը, բաւարար չափով ցոյց տրուած չէ, այնպէս որ՝ համադիստեսը չի կրնար գգալ ընկերութեան դրութիւնը եւ միւս կողմէ՝ ժամանակին անցքը: Եթէ այնքան մը հեռու երթայի յազօր «մետաղեայ դրամով աշխատող մեքենան», այն աստեղ պէտք է բնէն ընկերութեան մեծ մեքենային թմրանքը այն միւսեան ամբողջութեամբ, որ բնմենցի փինկու մեքենային հարուածող սրլաճները: Այս է բնութիւնը, որ ես առաջ կը տանիմ նոր քատերգութեան մէջ, նոյնիսկ աւելի յստակօրէն հաստատուած մասնաւոր ժամանակի եւ մասնաւոր տեղի մը մէջ, քան «Փիւնկ-Փռնկ»:

Այս թատերախաղը, որ պիտի կառուցուէր թատերական վերոյիշեալ աշխարհահայացքով, եղաւ «Փաօլօ Փաօլի»-ն, որուն վրայ սկսաւ աշխատիլ 1955-ի սկիզբները եւ զոր ամբողջացուց յաջորդ տարին: Անիկա բեմադրուեցաւ Րոժէ Փլանչոնի երիտասարդ եւ փայլուն խումբին կողմէ՝ Լիոնի մէջ, 1957-ին: Անիկա կը նշէ Ազամովի Անհեթեթի թատրոնը լեկու փաստը եւ յարումը որբի մը, Պրեթիթեան ռիւսագնորդական քատրոններին, որ հաւատարապէս նշանակալից է արդէ բեմին համար: Ան այլ-

եւս Պրեթիթը կը նկատէ ժամանակակից մեծագոյն թատերադերը եւ դայն կը դասէ Շէյքսպիրէն ու Պիտովէն անմիջապէս ետք, եւ համալխարհային վարկ ունեցող թատերադերներուն մէջ ամէնէն աւելի կը սքանչանայ Պիլիպէրի վրայ: Ենթդիւք աղատագրելէ ետք ներքին տաղանակներէն ու մղձաւանջներէն, ան այլեւս ինքզինք աղատ կը զգար իր սեփական փորձառութիւններէն դուրս տիպարներ ստեղծելու (նախապէս թարգմանած ու պատշաճեցուցած էր Պիլիպէրի եւ Պիտովի գործերը):

«Փաօլօ Փաօլի»-ն դիւցազնեղական թատերախաղ մըն է, որ կը պատկերացնէ ընկերային եւ քաղաքական այն շարժառիթները, որոնք պատճառ եղան համալխարհային առաջին պատերազմի պարթումին: Նաեւ կը քննէ շահու վրայ հիմնուած ընկերութեան եւ անոր ծնունդ տուած քանդիչ ուժերուն միջեւ զոյլութիւն ունեցող կապը: Թատերգութիւնը կ'ընդգրկէ 1900-1914-ի ժամանակաշրջանը: Տասներկու տեսարաններէն իւրաքանչիւրէն առաջ կը ներկայացուի տուեալ շրջանի ընկերային ենթահողը — պատատարին վրայ կը տիրուին այդ շրջանի թերթերէն քաղուած մէջբերումներ, որոնք կ'ընկերանան ժողովրդական ժամանակակից եղանակներ:

Տիպարները ընտրուած են մեծ ճարտարութեամբ, ներկայացնելով ամբողջ մանրաշխարհը քաղաքական, կրօնական, ազգային եւ ընկերային ուժերու, որոնք զիւր ունեցան համալխարհային առաջին պատերազմի ծագման մէջ: Ազամովի թատերական առանձնայատկութիւնը հոս կը դրսևորուի այնպիսի ապշեցնիչ ճարտարութեամբ մը, որով ան կը խտացնէ այս ամէնքը — խիտ համոզիչ ձեւով մը — ընդամէնը եօթը տիրարներու ընդմէջէն պատկերացնելով ընդարձակ շրջանի մը բարդ իրադրութիւնը:

Փաօլօ Փաօլին հազուադիւրս թիթեռնիկներու վաճառորդ մըն է. Յլոքանն Հիւլօ-Վասսէօր, որ հաղապարհութիւններէն իրաւաբանութեան հաւաքածոյ կազմող

մըն է եւ Փաօլոյի մէկ յաճախորդը, նոյն ատեն ջայլամի փետուրներ ներածող եւ հայթայթող անձ մըն է: Ան կը դառնայ նաեւ սիրահարը Փաօլոյի դերմանուհի կնոջ՝ Սթելլայի: Թատերախաղին մէջ վարդապետ մը եւ հարիւրապետի մը կիսնը յաջորդաբար կը ներկայացնեն կրօնական եւ ազգայնական մոլեռանդութիւնը: Իսկ առեւտրական միութեան մը անշամ եւ գործաւոր Ռոպերթ Մարփօ եւ իր երիտասարդ կիներ՝ Ռոզ՝ կ'ամբողջացնեն գործող անձերու ցանկը:

«Փիճկ-Փոնկլ»-ի մէջ ա'յն դերը, որ փիլիսոփայ մեքենան կը խաղայ, «Փաօլօ Փաօլի»-ի մէջ փոխարինուած է ոչ նըւազ անհեթեթ առեւտրական սպրանքներով — թիթեռնիկներով եւ ջայլամի փետուրներով: Սակայն առեւտրական այս սպրանքները շատ աւելի մեծ իրականութիւն մը կը ներկայացնեն հոս: Օրինակ, առաջին տեսարանէն առաջ՝ թերթի մը տուած մէկ յայտարարութենէն ի յայտ կու գայ, թէ ջայլամի փետուրները եւ անոնցմով պատրաստուած սպրանքները կը դառնեն 1900-ին Պրանսայի արտածած սպրանքներուն մէջ չորրորդ տեղը: Աղամով փայլուն ձեւով մը ցոյց կու տայ ընկերային եւ քաղաքական ճիւղատարածները եւ անոնց հետաւոր անդրադարձները անհեթեթ այս առարկաներու վաճառականութեան վրայ: Փաօլոյի առեւտրական ձեռնարկները յաջողութեամբ կը պոսկուին անո'ր համար, որ իր հայրը քորսիքացի քաղաքային մանր պաշտօնեայ մըն է, ծառայած՝ Սատանայի կղզիին վրայ, ընկերային գործերու քաժանմունքին մէջ: Ասիկա առիթ կու տայ երիտասարդին որոշ ժամ մը թիթեռնիկներ որսալու աշխատանքը կազմակերպելու, սակայն զէշ վարձատրելով իր մօտ աշխատողները: Մարփօ՝ երիտասարդ գործաւորը, որ պզտիկ գործութեան մը համար դատապարտուած էր, խոյս տուած է վենեզուէլլայի ճահիճներէն եւ իր սպրուտը հայթայթելու համար, այժմ բոլորովին կախում ունի Փաօլոյի դուրքէն, որուն հաշտոյն թիթեռնիկներ կ'որոսայ: Երբ ներքին սագ-

նագները կը պայթին Ձինաստանի մէջ, թիթեռնիկներու որսորդութիւնը կը դըժլարանայ հոն եւ թիթեռնիկներու չինական տեսակին գինը մեծապէս կը բարձրանայ: Վարդապետը, որուն եղբայրը մասնաւոր առաքելութեամբ մը դացած էր Ձինաստան, ի վիճակի կ'ըլլայ Փաօլոյին հայթայթել այս հազուադէպ սպրանքները: Այսպէս, քանի մը արագ տեսարաններով՝ Աղամով ցոյց տուած է առեւտրական այս անհեթեթ առարկային, Քրանսական պատճական օրէնքին, օտար քաղաքականութեան եւ եկեղեցւոյ գործերուն միջեւ եղած կապերը: Եոյնը ճիւղ է նաեւ Հիւլօ-Վասսէօրի ջայլամի փետուրներուն պարագային, Պոէր պատերազմին յարաբերաբար: Այս բոլորը, զէպքերուն զարգացումը, աշխատավարձին եւ առեւտրական միութեան միջեւ առաջացած տաղանպները եւ առեւտրական այդ միութեան պայքարը գերմանական մրցակցութեան դէմ՝ դարձած են համոզիչ ու բացայայտ, եօթը տիպարներէ բաղկացած այդ թատերգութեան մէջ:

Ինչպէս «Փիճկ-Փոնկլ»-ի մէջ տիպարները ամբողջական ձեւով մը կ'առնուած են դրամի եւ ուժի յաճախանքերէն ու ներկայացուած իրենց Հետ կապ ունեցող սպրանքներուն առնթեր՝ նոյնպէս եւ Փաօլոն կը հարստանայ դոնէ ժամանակի մը համար, դառնալով թիթեռնիկներու թեւերէն շինուած արդուգործի մանր սպրանքներ տրտադրող մը, ինչպէս եւ մոխրամաններ, ախէններ, նոյնիսկ կրօնական պատկերներ, որոնց սպառումը կը բարձրանայ կրօնական ազդեցութեան դօրացման հետ եւ կը նուազի նոյն համեմատութեամբ: Նուազումը զգալի կը դառնայ յատկապէս ա'յն ատեն, երբ դերմանական մրցակցութիւնը կը ցցէ իր աղտոտ գլուխը: Փաօլոն դիտարկալաճառ կը նշանակէ իր կիներ եւ ճիւղ այդ պատճառով ան կը կորսուի իրեն համար, դառնալով Հիւլօ-Վասսէօրի հոմանունէն: Գէպքերը այսպէս կը դասաւորուին անո'ր համար, որ Փաօլոյի կիներ պէտք կ'ունենայ ջայլամի փետուրներ արտա-

դրեալ մենաշնորհը ունեցող Վաստօրին ու կենթորդուի անոր քմայքներուն: Մթեւա, ծնունդով դերմանացի, ինքեա կը խորհրդանշէ եւրոպական ազգայնականութեան անհեթեթիւներ: Երբ Մարտի զէմ հակադերմանական զգացումները կը հասնին իրենց գագաթնակէտին, երբ կը նկատէ, թէ մարտիկ կ'ատեն զինք իբրեւ գերմանացի՝ կը մեկնի Ճրանսայէն եւ սակայն, ի վերջոյ, առաջին համաշխարհային պատերազմի սկիզբին դարձեալ կը վերադառնայ Փրանսա, անոր համար, որ իր գերման հայրենակիցները ատելութեամբ կը վարուէին հետը՝ Ֆրանսացիի մը կիներ ըլլալուն պատճառով:

Միակ տիպարները, որոնք զերծ են մղձաւանջէն՝ Մարտի եւ իր կիներ՝ Ռոզն են (թէեւ Ռոզ մամանակի մը համար կը դառնայ Փաօլոյի հոմանունին): Երբ Մարտիոն ապօրինի ձեռով կը վերադառնայ Վենետիկէն, Փաօլոն կը թելադրէ անոր Մարտե երթալ (ուր, նոյնպէ՛ս, քաղաքական վերիվարումներու հեռանկարով թիթեռնիկներու գինը բարձրացած է)՝ թիթեռնիկներ որսալու, մինչեւ որ ներսում շնորհուի իրեն: Անշուշտ, Մարտը շատ վտանգաւոր դարձած էր եւ Ֆրանսացիները կոխի բռնուած էին բընիկներուն հետ: Եւ հոս կը կայանայ թատերգութեան բարոյականութիւնը — ապրանքը, որ կը թուի շահազրգած ըլլալ վաճառականութիւնը՝ անհեթեթ է, պարզ թիթեռնիկներ, բայց վաճառականութեան իրական ապրանքը մա՛րդն է, որ պէ՛տք է մսխէ իր առողջութիւնն ու ապահովութիւնը թիթեռնիկներ հալածելու համար: Առեւտուրի բացարձակ առարկան մարդն է, որ ինքին կը դառնայ ապրանք մը: (Այս նոյն նպատակը կ'ուզէ ընդգծել Ադամով, երբ թատերգութեան կը վերածէ Կոկոլի Վիտամ հոգիները): Աւելին, ապրանքները կը գրտնդին ու կը ծախուին մահացու անկեղծութեամբ մը: Վաճառականութիւնը կ'առաջնորդէ պատերազմին:

Մարտի, զոհը ընկերային դրութեան մը, կը գիտակցի, թէ ինչ է գրաւը: Իր

ներումը ստանալէ ետք (այն ատեն, երբ Մարտիի համար Ճրանսայի եւ Գերմանիոյ միջեւ պատերազմը անխուսափելի կը դառնայ եւ կամաւորներուն կը շնորհուի ընդհանուր ներքով), Մարտի կը վերադառնայ Փարիզ եւ կը միանայ Ընկերավարականներուն: Աշխատելով Հիւլո-Վաստօրի գործարանին մէջ, ան կ'ընդդիմանայ վարդապետին կազմած «դեղին» կաթոլիկներու կազմակերպութեան եւ կը սկսի խաղաղութեան ի նշուպատ թռուցիկներ ցրուել զօրանոցներուն մէջ: Վարդապետը ձերբազատուելու համար անկէ, հրապարակաւ զէմ կ'արտայայտուի անոր, իբրեւ կառուց ուժերուն ուշադրութիւնը շեղող եւ կամքը թուլցնող մարդ: Երբ առաջին պարբերակները պատերազմի համար ճամբայ կ'ընեն, Ռոզ կ'իմացնէ Փաօլոյին, թէ Մարտի բանտարկուած է, եւ ասիկա պատճառ կը դառնայ, որ անհամոզիչ փոփոխութեան մը ենթարկուի Փաօլոյի սիրտը: Թատերգութեան հուսկ բանքի իր ճառին մէջ ան կ'երգուի, որ իր դրամը պիտի յատկացնէ այլեւս անթիթեռնիկներուն եւ չքաւորներուն, փոխանակ փոխանակութեան անվերջ շրջանակներէն ներս շրջապայութեան մէջ գրուելու, անպէտք ապրանքներու առեւտարի հաւատին:

«Փաօլօ Փաօլի»-ն քաղաքական թատերգութիւն մըն է, իբրեւ տրամ կառուցուած փայլուն ձեռով մը, թէեւ ձախող է անեկա քաղաքական թեզի մը իբրեւ պաշտպանութիւն: (Փաօլոյի վերջին ճառը, նոյնիսկ մարքսիստ տեսնութեան անկեւնէն դիտուած, որոշապէս քիչ արժէք ունի, որովհետեւ Ալիսի գիտնական պատճառած գոհերուն համար ծախուած դրամը յաջողապէս երբեք դուրս չէ բերուած դրամատիրական փոխառութեան շրջանակներէն): Այսուհանդերձ, իբրեւ անկարելին իրականացնող գործ՝ թատերգութիւնը ցոյց կու տայ իր նիւթը նուաճող Ադամովի հեղինակութիւն, որ գործին թիման օժտած է հնարքի, կառոյցի եւ խտութեան յատկանշական ուժերով:

Սակայն հարց կը ծագի — զօրաւոր կառուցումը օժտուած այս ձգտումնաւոր թատերգութիւնը կրնա՞յ արդեօք համազօր համարուիլ սարսափազդու յաճախանքներով, երազանման բանաստեղծութեամբ, այլ սակայն նուազ ճարտարութեամբ կառուցուած Աղամովի նախորդ թատերգութիւններուն, ինչպէ՞ս՝ «եկեղկատակութիւնը», «Մեծ եւ պզտիկ ազգամարտիկներ» կամ «Փրօֆեսէօր թարանը»: Արդեօք «Փաօյօ Փաօյի»-ին արուեստագէտի ճարտարութեամբ գըրուած ըլլալը, կամ ընկերային բացայայտ շրջանակ մը ունենալու անոր հանդամանքը, կամ իր համոզչականութիւնը խորութեամբ հաւատա՞ր է մշուշապատ, աւելի ընդհանուր եւ բոլոր երեւոյթները ընդգրկող «Փիմիլ-Փոնկի»-ին:

Կասկած չի կրնար ըլլալ, որ «եկեղկատակութիւնը» թատերախաղէն մինչեւ «Փաօյօ Փաօյի»-ն, Աղամով արուեստագէտի իր ստեղծագործ ուժին շնորհիւ կը ներկայացնէ աստիճանական ձերբարդատում մը իր մղձուկանային ջրազարութենէն եւ անհատական խոր առաջադիմանքներէն: Ամբողջ գրականութեան պատմութեան մէջ՝ դժուար պիտի ըլլայ գըրնել իր անհատական տառապանքները գըրական ուժի վերածող յաղթական աւելի մեծ օրինակ մը, քան Աղամովի հայթայթած օրինակը: Հետաքրքրական է դիտել աստիճանական նահանջը ա՛յն արգելիքներուն, որոնք կ'արգիլէին այս գըրողին հեռանալ իրական աշխարհէն, դիտել զինք, թէ ինչպէ՞ս կը գտնէ իր ինքնազատութիւնը, որուն այնքան պէտք ունի, իր վրայ իշխող մղձուկանները վերածելու համար արուեստի թեմաներու, նուաճելու համար այդ թեմաները: Իր առաջին թատերգութիւնները իր ենթագիտակցութեան գրեւորումներն են, բեմին վրայ գետեղուած իր սարսափազդու երազները հատուտող հաւատարիմ օրինակներ: «Փաօյօ Փաօյի»-ն կանխորոշուած ու ծրարեալ գործ է, սակայն կարելի է վիճել, թէ սրամարանականութեան տարրին վերազարժը եւ գիտակից զեկազարութիւնը կը ներկայացնեն հա-

մակրելի կատարութեան մը կորուստը, ջրազարութեան յաճախանքին ուժը, որ իր առաջին թատերգութիւններուն կուտար մազնխական եւ բանաստեղծական խտութիւն: Դեռ աւելին, կեղրոնացներով իր յարձակումները քաղաքական եւ ընկերային երեւոյթներուն վրայ, Աղամով կը սահմանափակէ ի'ր տեսադաշտը:

Եթէ «Մեծ եւ պզտիկ ազգամարտիկներ» թատերախաղին մէջ յեղափոխականներուն ապարդիւն պայքարը կը ներկայացնէր փոքր ազգամարտութիւնը, եւ մարդկային անհեթեթ կացութեան ամբողջութիւնը պարփակող ընկերային պայքարը կը ներկայացնէր մեծ ազգամարտութիւնը, «Փաօյօ Փաօյի»-ի մէջ, ընդհակառակն, փոքր սոցիալարտութիւնը կը վերածուի մեծի եւ կը նահանջէ, վերածուելով հագիւ տեսանելի ենթահողի մը: «Բոլորս գիտեմք, — կ'ըսէ յեղափոխական առաջնորդը Աղամովի առաջին թատերախաղերէն մէկուն մէջ, — թէ մանր կը շրջապատէ մեզ: Բայց եթէ քաղութիւնը չաւնեմանք գմեզ անջատելու այդ գաղափարէն, տեղի պիտի տանք մեր ապագայի պահանջներուն առջեւ եւ ապարդիւն պիտի ըլլան ցարդ կատարած մեր բոլոր գոնողութիւնները»: Փաօյօ Փաօյին այդ հարցն է, որ կը ներկայացնէ: Իր առաջին թատերգութիւններուն մէջ՝ Աղամով տուած է իր կծու եւ հեզնական մեկնաբանութիւնը այս հարցին առնչութեամբ: Նիշը այն պահուն, երբ յեղափոխական առաջնորդը կ'արտասանէր այս յանդուգն խօսքերը, ձայնը կը նուաղի, բառերը կը տարտաման իր շրթներուն ե կ'իյնայ վար:

Աղամով շատ հատու մտածող մըն է եւ չի կրնար անգիտակից ըլլալ իր հին ու նոր կեցուածքներուն կապուած հետեւանքներուն: Իր սկզբնական փուլին մէջ ինքզինք մարդկային կացութեան անհեթեթութեան վրայ կեղրոնացնելէ ետք, այժմ ան կը հաստատէ, թէ «Փատրանը պիտի է ցոյց տայ, միաժամանակ, քայց լաւ գանգաւուած, թէ՛ բուժելի եւ թէ՛ անբուժելի երեսները իրերուն: Անբու-

ծելի քրեւոյքը ամէնքս գիտնմք, ան-
խուսափելիմ է, մա՛քը, իսկ բուժելիմ՝
ընկերային քրեւոյքն է»:

Ատիկա ճի՛շդ անոր համար, որ Ա-
դամով կը յաջողի ստեղծել մարդկային
կացութեան բուժելի եւ անբուժելի երեւ-
ւոյթներուն միջեւ ա՛յն ծայրադոյն հա-
ւասարակշռութիւնը, որով «Փինկ-Փոն-
կը» պիտի նկատուի այս հեղինակին նշա-
նակելի նուաճումներէն մէկը: Փինպոլ
մեքենան, ներթափանցելի վարդապետ-
կան առումով, կը կենայ խարճական բո-
ւր իրերուն տեղը, որոնց հետապնդու-
մը փառամտութիւն առաջ կը բերէ, կը
բերէ եւս փնտրուող եւ մարդկային այլ
էականներու վրայ իշխելու հարկադիր փա-
ռատնչութիւն: Պայման չէ զո՛հ երթալ
այդպիսի պատրուական դադափարներու,
այնպէս որ՝ կարելի է կոտորել, որ թա-
տերախաղին մէջ կայ ընկերային դաս
մը: Եւ սակայն, մահուան առջեւ մարդ-
կային ջանքերու անհեթեթութիւնը եր-
բեք շեն մտնուի, եւ ի վերջոյ մեր աշ-
քերուն առջեւ կը դուրս թելադրական եւ
հարկադրական պատկեր մը: Մինչ, միւս
կողմէ՝ «Փաօլօ Փաօլի»-ն ո՛չ միայն
ընդմիջուած է անստեղծ եւ ընկերա-
յին հարցերով, այլեւ, ամէն բանէ վեր,
ունի բոլորովին դրական հիմքերու վրայ
դրուած նախաբան մը, եւ աւելի քան
նուազ մարդկային նկարագիր մը: Մար-
փօն, եւ նոյնիսկ նուազ համոզիչ փոփո-
խութիւնը բացասական տիպարին՝ Փաօ-
լոյին, հասնելու համար թատերական
գործողութեան մը զազաթնակտին եւ
յանգելու լուծումի մը: Այս արդիւն նկա-
րագիրը եւ վե՛հ գործողութիւնը յոտակ-
օրէն արդիւնքն են բուժելի երեւոյթնե-
րուն համար ըրած հեղինակին մասնա-
ւոր ազդեցանքին, որ կ'առաջնորդէ
մարդկային կացութեան անբուժելի կող-
մը ներկայացնող նմախօսակի մը: Մար-
փոյի ճիւղերը ա՛յնքան ապարդիւն են
վերջաւորութեան, որքան ապարդիւն են
«Լոնդոնական լուսարկային» ներկայացուցած
գործակատարին ջանքերը: Ան կը ձեռ-
բուխալուի եւ պատերազմը կը պայթի հա-
կատակ իր կամքին: Սակայն հեղինակը

պէտք է վերածէ այս պարագան ազնւ-
ական ճարտարութեան մը, համաձայն ըն-
կերային ու անհատական թշնամիներու
վատութեան, կամ ընկերային կացու-
թիւններու՝ պատմական տուեալ շրջանի
մը մէջ: Եւ հոս կը կայանայ բուն հար-
ցը, ուր յուզիչ պատրանքը կը մտնէ զա-
դաքականօրէն կողմնակալ թատրոնի մը
մէջ: Պրելիթ, որ խիստ զիտակից էր այս
վտանգին, խուսափեցաւ նման ծուղակի
մը մէջ իյնալէ, իր կարգ մը թատերգու-
թիւններու («Մայր քաղաքիւն», «Կա-
լիէօ») մէջ հարեանցիօրէն անցնելով
դրական տիպարներու մօտէն: Այդպէս է
որ դրական պատգամ մը կը դրսեւորուի
ուսիլ եւնիթաթիւններու միջոցաւ,
քան յատակ տուեալներու — քայքայ ար-
դիւնքով մը, որուն ազդեցութիւնը հա-
զիտականներուն վրայ կ'ըլլայ բացասա-
կան եւ որ կը կեղբոնանայ իրերու ան-
բուժելի կողմերուն վրայ:

Կարգ մը կողմերով, «Փաօլօ Փաօ-
լի»-ն կը բովանդակէ կարեւոր խոստում
մը — անկապ ցոյց կու տայ ճամբան, ո-
րով անհեթեթի թատրոնին կարգ մը
սարքերը կրնան խառնուիլ դասական
թատրոնին, տալով երկու տարբեր ա-
ւանդութիւններու արդիւնաւոր միաձու-
լում մը: Իր կառոյցի պարզութիւնը,
տիպարներ ստեղծելու իր յանգչեութիւ-
նը, իրերէ խորհրդանիշներ օգտագործած
թիթեռնիկներու եւ ջայլամի փետուրնե-
րը կատարելապէս ի դօրու կը դարձնեն
«Փաօլօ Փաօլի»-ն, ներկայացնելու հա-
մար անստեղծ աշխարհի իրականու-
թիւնները: «Փաօլօ Փաօլի»-ն կրնայ
նոյնպէս պարունակել օգտակար երեսներ
ապաղայ թատրոնի զարգացման օգտին,
միացնելով տարբեր ձգտումներու թատ-
րոնի ոճէն, ինչպէս նաեւ անհեթեթի
թատրոնի տւանդներէն:

Անիրապաշտ ոճը մերժելու Ազատ-
իլի գառաձուր մտրոջական չէ, ինչպէս
կը թուի ըլլալ առաջին հայեացքով: Մե-
ծապէս նշանակալից է ա՛յն պարագան,
որ 1958-ի աշնան, երբ ինքզինք կանչը-
ւած զրաց գործօն մաս մը վերցնելու Տը
Կոլի նոր սահմանադրութեան դէմ, Ա-

դաժով այլաբանական միջոցներու դիմե-
լու ոճը աւելի դիւրին ու նպատակայար-
մար գտաւ, քան իր տեսակէտները ճշդ-
տունանաւոր թատրոնին համաձայն դըր-
սեւորելու կերպը: Երեք կարճ թատեր-
գութիւններէն, որոնցմով ան կը մաս-
նակցէր «Ընկերութեան քարտուզ» հա-
տորին, երկուքը այլաբանական են, մէ-
կը՝ իրապաշտ, որուն ձախողութիւնը
խոստովանեցաւ ինք:

Այս երեք թատերգութիւններէն ամէ-
նէն խոստումնախիցին՝ «Մտնըմուքիւն»
անունով խորագրուած խաղին մէջ՝ ան կը
գործածէ հաւաքական դադափարներ անձ-
նաւորող ոճը, ա՛յն՝ որուն յաճախ կը
հանդիպինք միջին դարու խորհրդաւոր
թատերգութիւններու մէջ — Տը Կոլ
ժողովանկարուած է իբրև Մարմնաւոր-
ած Հարց, Ընկերվարականները՝ իբրև
Հարցին նուաստ ծառայողներ եւ սարը-
կամիտ յախճան, ալճերիացի հազարա-
պետներուն երիտասարդ տաքարիւնները,
իբրև ամբարտաւան սրկիւններու հա-
տընտիր դասակարգ մը: Մարմնաւոր-
ած Հարցը կը պաշտպանուի երկու ջը-
ղուտ ու բիրտ պահապաններով, որոնք
կը կոչուին Հարցին Հետեւանքները:
Կարճ կապերով «Օրիճաղիլիմ օզըր» ա-
նուն թատերախաղին մենախօսութիւնը,
հեղանքին անձնաւորումը կը յայտնա-
կերպէ ա՛յն սխուր իրականութիւնը,
ըստ որում՝ կորսնցուցած կը թուի ըլլալ
սպաննելու ուժը, որ կը թագաւորէր
Ֆրանսայի մէջ աւելի ուրախ ժամանակ-
ներու: Այս զոյգ թատերակները, թէեւ
յստակորէն պարագայովս թատերակ-
ներ են ու վաղանցուկ, յաջող են իբրև
սուր երգիծանք: Երբորչը, որ կը
կոչուի «Են Ֆրանսացի չեմ», ձախող է
մինչև իսկ իբրև երգիծանք. անիկա
ցոյց կու տայ միջոցը, որով Ալճերիոյ
մէջ, Ֆրանսացի անկարգեւորներ ստի-
պած են իսլամ բնակչութիւնը, որ Ֆը-
րանսայի դէմ ցոյցի ելլէ 1958-ի Մայի-
սին, բայց թատերակը կը մնայ ոչ հա-
մողիչ, հակառակ իր վաւերագրական
թեքիւթիւն: Այն չափով, որ քաղաքական
նպատակը յստակ է, այն չափով, որ նիւ-

թը իրապաշտօրէն ներկայացուած է,
ճիշդ նոյն չափով ալ յստակ ու մեկին կը
թուի իբրև իրական ազդեցութիւնը կոր-
սընցնելու փաստը:

Իրապաշտական եւ երեւակայական
տարբեր խառնուած են նաև իբրև ուս-
տիօ-թատերախաղ գրուած «Ձիակառքով»
խորագրեալ գործին մէջ, որ պատմա-
կանօրէն վաւերացուած դէպքէ մը առ-
նւած է, ուր տիպարները խելագարուած
են.— երեք պատաններ, որոնք կորսնցնե-
լէ ետք իրենց բնական տունը, դիշերը
կ'անցընեն ձիակառքի մը վրայ, զոր վար-
ձած են դեղերեւու հին Փարիզի փողոց-
ներուն մէջ: Դէպքը արձանագրուած է
Հոգեբանի մը տետրակին մէջ եւ որ իրա-
պէս պատահած է 1902 Փետրուարին: Ա-
տիկա կրնար թելագրուած ըլլալ Ադա-
մովի գրած առաջին թատերգութիւննե-
րու երազային աշխարհէն: Երեք քոյրե-
րէն մէկը կը մեռնի կառքէն իյնալէ ետք:
Կրնա՞յ արդեօք միւս երկուքին կողմէ
վար նետուած ըլլալ ան: Եւ ինչո՞ւ այս
երեք պատանները անտուն պիտի թափա-
ռէին փողոցներուն մէջ: Այնպէս կը
թուի, թէ իրենց հօրը մահէն ետք միայն
կը դիտան, որ տունը, ուր անոնք կ'ապ-
րէին, քաղաքի կեդրոնական հանրատու-
ներէն մէկն է: Կայ ուրիշ կարելիութիւն
մը եւս, այն՝ որ մեռած քոյրը, ամենա-
երիտասարդը երեքէն, կրնար գաղտնօ-
րէն գործ ունեցած ըլլալ այդ հանրա-
տուններէն մէկուն մէջ: Կառքէն վար չը-
պըրտուելու իր պատճառներէն մէկը
սիրահար մը ունեցած ըլլալու իրողու-
թիւնը կրնար ըլլալ, կամ կատապանե-
րուն գրամ շտալելու ընթացիկ սովորու-
թիւնը: Այսուհանդերձ, բոլոր այն ենթա-
դրութիւնները կրնան ապուշ պատանե-
րու երեւակայութեան ծնունդը ըլլալ:
«Ձիակառքով» անուն թատերախաղը
խիստ վաւերագրական գործ մըն է, սա-
կայն հոգեբանի մը նօթատետրէն առնը-
ւած դէպք մը գիտական օսանմաններէն
զուրս չի կրնար գալ, շատ բան չի կըր-
նար բացատրել անիկա, այլ պարզապէս
կը նօթագրէ իրեն տեղեկագրուած ման-
րամասնութիւնները, անտեսելով դրդա-

պատճառները վարժունքի մը, որ այն-
քան անբացատրելի է, որքան լուծումը։
Մինչ դարձանումը բնապաշտական է,
թեման՝ խենթութիւնն է, երեսակայու-
թիւնը, երպէսզէն, անտրամաբանական
վախերը եւ նախանձները։ Տակաւին կան
զիշերուան ընթացքին Փարիզի փողոցնե-
րը, ուր ջղազարութեան զոհերը ենթա-
կայ են կառապաններու արհամարհան-
քին։ Այս ամէնը կը ներկայացնեն աշ-
խարհ մը, որ շատ հեռու չէ շնորհալի-
նութեան» մթնոլորտէն։

«71-ի Գարունը», ընդարձակ պատ-
տար Փարիզի Կոմունային, տրուած՝
26 տեսարաններով, իննը ընդմիջումնե-
րով և վերջաբանով մը, թատերախաղ մըն
է, ուր Ազամով ինքզինքը կը նետէ պատ-
մական իրողութեան մը ճիւղաւորումնե-
րը ներկայացնելու գործին մէջ։ Փարի-
զի յեղափոխական կառավարութեան ող-
բերականօրէն եւ մղուիլը ցոյց կը տըր-
ւի բարդ պատարի մը վրայ՝ մանրա-
մասնօրէն գծագրուած տեսարաններով,
որոնք իբրև գործող անձինք ունին երկ-
վեցեակ մը տիպարներ։ Ազամով նոյն-
իսկ հոս ի գործ կը դնէ խիստ ալլարա-
նական տարրեր։ Իննը ընդմիջումները,
զորն ինք կը կոչէ խամաճիկներու խա-
ղեր, ցոյց կու տան զործողութեան բա-
րոյականութիւնը՝ պատմական մեծ ոս-
տումներու եւ ալլարանական անձնաւոր-
ութիւններու միջոցաւ։ Այդ պատմա-
կան անձնաւորութիւնները կը կոչուին
Պիղմարք, Քիէրս, Կոմունան Ինքը, Ինքն
իր մէջ ամփոփուած Ֆրանսայի Դրամա-
տունը, Ազգային Ռորհուրդը, չուլպայ
հիւսով ջնացած ծեր կին մը, եւայլն։
Ասոնք կը նմանին Տոմիէի կազմած ծաղ-
րանկարներուն, որոնք կեանքի կոչուած
են, մինչ իրապաշտ գործողութիւնը
ինքնին ապաւորի է, թէ՛ եւ ծանծաղ կը
թուի։ Այլարանական այս ծաղրանկարա-
յին տեսարանները ճշգրիտ են, ճկուն, եւ
իրենք զիրենք կը գրսեւորեն ապշեցու-
ցիչ ուժով մը։

Ազամովի վերջին եւ զլիար թա-
տերգութիւնը՝ 1966-ին դրուած «Սարք
Եւրոպան» է, քաղաքական ընդարձակ

ծաղրանկար մը, ուր Շարլ տը Կոլ կը
վերածուի Շարլմայն կայսեր։ Անկեկ
փորձ մըն է քաղաքական իրապաշտու-
թիւնը զուգորդելու քաղաքական մղձա-
ւանջի երազային աշխարհին։ Այսուհան-
դերձ ես, անձնապէս, կը կասկածիմ, թէ
իրրիւ թատերգութիւն յաղոյած է անի-
կա։

Երկու Ազամովները — երազի, ջը-
ղազարութեան, ապարդիւնութեան թա-
տերապի Ազամովը եւ Պրիթիան զիւ-
ցազնեղակ իրապաշտութեան Ազամովը
— կրնան այնքան հեռու չլլալ իրար-
մէ, որքան կը թուի։ Շատ դիւրին է հաս-
կընալ, թէ ինչու Ազամով պիտի մերժէր
իր սկզբնական թատերախաղերը։ Անոնք
արտայայտութիւններն են անցեալի մը,
զոր դիւմ անցած է։ Աւերակուած եսին
մնացորդներով լեցուն անցեալի մը, զոր
ետեւ ձգած ըլլալուն համար ուրախ է։
Եւ սակայն վերոյիշեալ պատճառով ինք
վերջինը պիտի ըլլար անջատ-անջատ
քննադատութիւններ ընել թատերական
իր ներկու դիմագիծներուն մասին։
Քաճքա, որուն մղձաւանջները ի-
րենց շատ մը կողմերով կը նմանին Ազա-
մովի մղձաւանջներուն, կը հաւատար,
թէ իր մղձաւանջներէն բխած գրու-
թիւնները պահուելու արժանի չէին։ Ե-
թէ ինք իր սեփական ճամբան ունեցած
էր, ուրեմն իր զործերը պէտք է փճաց-
ւէին, այդպէս ըլլալու պարագային, սա-
կայն, աշխարհը պիտի կորսնցնէր այն
հարստութիւնը, որ թէ՛ անկասկածելի-
օրէն արժէքուոր մարդկային տեղեկու-
թիւններ կը բովանդակէր եւ թէ՛ մեծ էր
իրրիւ արուեստի գործ։

«Խնկատախիթիւնը» թատերախա-
ղէն մինչեւ «Վերագոմեաւածները», Ա-
զամով իր գործերը կը նկատէ իրրիւ շատ
ծրտադրուած, նախնական եւ ընկերային
անարդարութեան դիմաց յեղափոխական
բարենորոգիչ տարրի պակասով տառա-
պող գործեր։ Սակայն այս քննադատու-
թիւնը կը չեզի իր նպատակէն — այս
թատերախաղերը իրական են եւ ունին
զօրաւոր խտութիւն մը, որովհետեւ ա-
նոնք անկեղծ խոստովանութիւններն են

տառապած հոգիի մը, որ ինքզինք ձերբազատած է այդ տառապանքէն եւ իր անցեալի յուսահատութիւնները անխուսափելիօրէն շափաղանցուած կը թուին: Այսուհանդերձ այդ փորձատուութիւնները իրական էին, երբ կ'ապրուէին — եւ ատիկա կը մնայ թափանցումի խոր միջոց մը մարդկային մտքի գործունէութեան մէջ եւ կը պահէ իր ուժականութիւնը խորապէս զգացուած բանաստեղծական հաստատումներու հաշտոյն: Եւ վերջապէս, Արամովը ինքն էր, որ կը մատնանչէր, թէ Ղազարութիւնը կը սրէ զգայնութիւնները եւ կ'օժտէ տառապողները թափանցելու հոգիին խորերը ա՛յնպիսի գորութեամբ մը, որ սովորական մահկանացուներուն իմանալի չէ: Գործերը, որոնք ներշնչուած են Արամովի Ղազարութեանն աւելի խոր են, քան անոնք, որոնք կու գան իրական աշխարհէն: Այսուհանդերձ, ան չէ Հրատարած իրական աշխարհի հիմերը փոխելու իր վճռակամութենէն:

Շատ մը ձեւերու մէջ, Արամովի զարգացումը կը նմանի Պրեխթի առաջգիծութեան, որ ինքզինք կը զգացնէր ամէնուրեք, անիշխանական բանաստեղծի յուսահատութեանն ժնչեւ ընկերային շինարարութեան օգտին ըրած քննադատութիւնը: Սակայն Պրեխթ երբեք չկրցաւ ջնջել իր մէջ եղած յոռետես անիշխանականութիւնը: Եւ իր երկու եսերուն միջեւ եղած բախումէն է, որ առաջ կու գայ իր բանաստեղծական եւ թատերական աւելին: Արամով, որ Պրեխթէն շատ աւելի ուշ թատերագիր եղաւ եւ որուն յուսահատութիւնը շատ աւելի խոր, աւելի խիտ եւ աւելի բացայայտ էր, դէժ յանդիման պիտի դար նման բախումի մը, եւ ինքզինք պիտի զգար մարդկային գոյութեան բուժելի եւ անբուժելի կողմերուն միջեւ հաւատարակչութեան գրաստ

նելու նման անհրաժեշտութեան մը առջեւ: Ատիկա մեծ մարտահրաւէր մըն է, բայց Արամով կրցած է դիմակալել այս մեծ գործը եւ նուաճել զայն:

Արամով արդէն կրնայ հտ նայի՝ իրբեւ տպաւորիչ նուաճումներ կատարած թատերագիր: Մտաւորական մեծ պատրաստութեամբ՝ ան ինքզինք հաստատած է իրբեւ գրականութեան մարդ: Թարգմանած է գործեր Եռնիկէն, Բլէրիէն, Տաօթայիվսիէն («ՈՌԻՐ ԵՒ ԱՄՍԻԹ»), Սթրինպերկէն («ՀԱՅՍՈՐ»), Կոկոլէն, Պիւտնէրէն, Կորգիէն եւ Չիխովէն: Գրած է սքանչելի կարճ դրամատիկական մը Սթրինպերկի մասին, մէկտեղած է Փարիզի Կամուսայի վերաբերող նիւթերու ամբողջութիւնը եւ հեղինակն է շափաղանց բիրտ, անկեղծ եւ խիստ արժէքաւոր ինքնակենսագրութեան մը: Ան կը կենայ ճշդ մէջեղը իրար բախող տարբերու, իր սեփական անձին ու սեփական գործին մէջ, ընդգրկելով երկու հիմնական ու հակադիր ձգտումներ:

Թեթեւ, մութ, թափանցող ու զննող աչքեր՝ մշուշապատ դէմքի մը վրայ, Արամով այլեւս Փարիզի խեղճութեան մէջ թափառող թշուառ մը չէ, այլ գարձած է դիւաւոր բանբերը Պրոնսայի քաղաքական ձգտումաւոր թատրոնին: Նոյն ատեն ան կը նկատուի ոչ-ձգտումաւոր, հակաքաղաքական ու գերազանցապէս ներքին տուայտանքները բեմ հանած վարպետներէն մէկը: Իր ստեղծած թատերական տիպարներէն մէկուն պէս՝ ան իր մէջ կը խտացնէ երկու հակադիր ու իրար հակասող ձգտումներ:

Ապագայ սերունդն է, որ ի վիճակի պիտի ըլլայ ըսելու, թէ ո՛ր մէկն է այս երկուքէն արժէքաւորը եւ որ մէկը պիտի ունենայ տեւելու մնայուն բախտ մը:

(Շար. 3 եւ վերջ)

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ

Ա Ր Մ Ա Ն Տ

(ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ)



Հողեկան փոփոխւոյից ու բարդ կեանքը լրիւ ու ճիշդ արտայայտելու համար անհրաժեշտ է, որ մարդս օժտուած լինի աստուածային բացառիկ շնորհքով, որ ամէն մարդու տրուած չէ. այդ աստուածային պարգեւին արժանացած են միայն ճշմարիտ արուեստագէտները՝ գրողները, բանաստեղծները, երաժիշտները, դերասանները եւ առհասարակ գեղեցիկ արուեստին նուիրուած մարդիկ:

Հողեկան ապրումները դրսևորելու միջոցներից մէկը բանաստեղծութիւնն է, որի ստեղծողը կոչուում է բանաստեղծ. եւ այսօր մեր խօսքը իրաւ բանաստեղծ Արմանտի մասին է:

Արմանտը, բուն անունով Արամ Անտոնեան, ծնուել է 1915 թուին, Թեհրանում: Նախնական կրթութիւնը ստացել է ամերիկեան զարոյում եւ աւարտել է Թեհրանի ամերիկեան գոլէ՛ը: Սկսել է գրել 1941ից: Իր առաջին բանաստեղծութիւնը լոյս է տեսել Թեհրանի «Ալիք» օրաթերթում: Աշխատակցել է «Ալիք», «Հայրենիք», «Հայս», «Արփի», «Արմենուհի», «Արարատ» եւ «Բագին» պարբերականներին: Գործ է անել նաև «Միտրա» ծածկանունը: Թարգմանչական աշխատանքներ է կատարել անգլիացի եւ ֆրանսիացի գրողների հատընտիր չափածոյ եւ արձակ ստեղծագործութիւններից: Մի առժամանակ եղել է «Արմենուհի» ամսագրի խմբագրական կազմի անդամ: Անդամ է Իրանահայ Գրողների Միութեան:

Բացի գրական աշխատանքներից՝ նուիրուած է նաև ազգային-հասարակական գործերի, անդամակցելով զանազան ազգային-հասարակական մարմինների:

Արմանտը իր գրական գործունէութեան հենց սկզբի տարիներից, էր առաջին բանաստեղծութիւններով մեր միջավայրում ընթերցասէր հասարակ-

կութեան եւ ժամանակի իրանահայ մտաւորականութեան մէջ ուշադրութեան արժանացաւ: Այդ օրերին իսկ ակնյայտ էր, որ Արմանաբ օժտուած էր դրական տաղանդով եւ երկրաօտարդ սկսնակի համար նախատեսուած էին մեծ յաջողութիւններ: Ուրախ եմ ասելու այստեղ, որ Արմանաբ ո՛չ միայն յուսախաբ չարեց իր բարեկամներին, այլ արուեստի ասպարէզում քայլէջ միշտ ուշիմ ու խոռուն, զգոյշ ու բծախնդիր, իր սւսերին առած համեստութեան գեղեցկացնող ու հրապուրիչ քոյլը:

Այսօր երեսուն տարուայ իր ստեղծագործական վստասկով ներկայանում է նա մեզ ո՛չ միայն իրրեւ իրանահայ բանաստեղծ, այլեւ մեր տղայային դպրութեան անդասասնի բուրաւէտ ծաղիկներով զարդարուած ծառերից մէկը:

Դժբախտարար իր բանաստեղծական հարստութիւնը ցրուած է երեսուն տարիների ընթացքում հրատարակուած պարբերականների մէջ, շունի առանձին հատորի մէջ հաւաքած իր լրիւ գործը. եւ մենք այս աշխատանքը կատարելու համար հնարաւորութիւն ունեցանք օգտուելու միայն մեր ձեռքում ունեցած մի շարք պարբերականներից, որոնք շատ անբաւարար էին մեր ասելիքն ասելի լրիւ զարմնելու համար:

Հետեւաբար այս առիթով մի անգամ եւս յանձնարարուած ենք Արմանտին, որ անուպարի առանձին հատորով մեզ ներկայացնելու իր ստեղծագործութիւնների լրիւ ժողովածուն:

Բազմալար ու բազմահնչիւն է Արմանտի քնարը: Նա երգել է սէր, հայրենիք, բնութիւն, կեանք ու մահ, արդարութիւն ու ճշմարտութիւն: Իր բոլոր երգերի մէջ լսելի է իր անկեղծ ու յորդ գգացումներով լեցուն սրաի բարախումբը: Իր յոյզերի շեճուկի մէջ մուլուած են իր մտքի իմաստութիւնները՝ պարուրուած քնքոյշ թախիծով:

Հաւատարիմ մեր դասական բանաստեղծական ձեւերին, իր մէջ նորարարութեան ձգտումը կայ. սակայն զուսպ, զգոյշ եւ չափաւոր. եւ այդ յաճախ յաջողում է իրեն: Հետու է արտասուցութիւններից ու յաւակնութիւններից. մի ցաւ, որով այսօր շատերն են տառապում ու տառապեցնում ուրիշներին:

Հաւատարիմ քնարերգական բանաստեղծութեան օրէնքներին, Արմանտի ստեղծագործութիւնները համապատասխանում են ներշնչման պահերի տեւողութեան. կարճ են, պատկերաւոր, իմաստալի, գգացումներով ցողուած ու երաժշտական: Յաճախ դանց է առնում հարկադրաբար յանգարանութիւնը, որ երբեք չի վնասում իր զրուածքի գեղեցկութեանը. ընդհակառակն, նման դէպքում օգնում է, որպէսզի բանաստեղծութիւնը ռտանաւոր չդառնայ:

Արմանտ, իր քնքոյշ գգացմունքներով, հանդէպ արուեստն ունեցած իր ազնիւ խառնուածքով, բանաստեղծ է, որի ստեղծագործութիւններից շատերը մնայուն արժէք ունեն մեր գրականութեան համար: Իր գրական խառնուածքի մէջ զգալի է չափի եւ ինքնաստղութեան ներկայութիւնը:

Շատերն են երգել ու այժմ էլ երգում են հայրենիքի սէրը մեծ ոգեւորութեամբ եւ մեծ ազմկով գրսեւորում են բնութիւնից մարդուն տրուած այդ սրբազան գգացումը:

Արմանտն էլ չէր կարող իրրեւ գգայուն հայ բանաստեղծ զուրկ լինել այդ նուիրական գգացումից, եւ նրա բանաստեղծութիւնների մէջ շատ են հայրենիքին ու իր ժողովրդին նուիրած դուրբիկ ու խորունկ ու անկեղծ գգացմունքներով գրուած երգերը:

Սակայն Արմանտի Հայրենասիրական բանաստեղծութիւնները աղմբ-կարար չեն: Այստեղ եւս բանաստեղծը Հաւատարիմ իր ասելու ձեւին, խորունկ ու փրկիսօրայօրէն է արասայալուում համամարդկային այդ զգացումի՝ Հայրենիքի սիրոյ մասին.

Կազմուչ արմատն եմ կրում սրտիս մէջ,
Որ մխրճուել է սիրոյ ջիւղ ակի խորքերը մինչեւ...
Դու աչքիս մէջն ես,
Հենց բիրս ես կարծես.
Թէ հաննն նրան՝
Կը խրուես խո՛րը, խորը ակելի
Ուզեզիս անքիւ քջիջնեքի մէջ:

Հայրենասիրութիւնը Արմանտի էութեան մէջ անբաժանելի մի տարր է, արիւն ու ոսկոր է, որը չի կարելի անջատել իր ամբողջութիւնէն.

— Կարե՞ն քեզ ինձնից...
Կարո՞գ եմ հատիկ մարզում իրենից:
Ով կորցրել է քեզ՝
Թող բռնի սիրոյ սունահետքերը,
Որ պարուսմ եմ Հաւատքի ժայռի շուրջն ու գալիս՝
Ճիշդ իմ սրտի մէջ —
Դու մի՛շտ այնտեղ ես,
Ես քեզ շնչում եմ
Ու մոնչում եմ՝
— Ես սիրում եմ քեզ...

Այս բանաստեղծութիւնը, որ գրեթէ ամբողջութեամբ մէջբերեցինք այստեղ, խորագրուած է «Ես քեզ շնչում եմ»: Ամբողջ քերթուածի մէջ երբեք «հայրենիք» բառին չհանդիպեցինք, չհանդիպեցինք, որովհետեւ ամբողջութեան մէջ այդ բառը չկայ: Սակայն այս բանաստեղծութիւնը մենք համարեցինք Հայրենասիրական, ինչո՞ւ, ինչի՞ց ենթադրելով: Այդ մենք կուահեցինք առնելով քերթուածից ակնգործիկ կերպով ասուած մէկ տողից.

— Կազմուչ արմատն եմ կրում սրտիս մէջ :

Ահա ասելու, արտայայտուելու այն վարպետ ձեւը, որը պիտի հարկադրի ընթերցողին բանաստեղծութիւնը կարդալիս թէլ մտածել, խորանալ եւ գտնել բանաստեղծական տքնութեան մէջ թաքնուած բուն իմաստը, խօսքի նպատակը:

Նման խորք ունեցող մի բանաստեղծութիւն է նաեւ Արմանտի «Երբ դու կաս» կտորը, թէեւ տարբեր մասիւի կը պատկանի:
Կարգում ես քերթուածը, առաջին պահ շես հասկանում, թէ ո՞ւմ է ուղղած երգը. ո՞ւմ է ասում — «Երբ դու կաս...» սակայն երբ արժամապրում ես խորանալու, նո՛ր ըմբռնում ես, որ բանաստեղծութիւնը նուրբւած է իր գաւակին:

Անդեկ կեանքիս լաստը
Գտել է զեկ ու թիակ,
Երբ դու միակ
Լիմելուս, տեղուս փաստը՝
Կա՛ս ու կանչիս կը գաս:

Թերեւս ճիշդ չէ մեր կուսումը առաջ բերած զոյգ բանաստեղծութիւնների մասին, թերեւս մի այլ իմաստ, մի այլ խորհուրդ կայ պահուած նրանց մէջ: Գուցէ մի ուրիշ ընթերցող, կամ ընթերցողներ տարբեր մտանցումով եւ բժրունումով կը վերլուծեն այդ գեղեցիկ ու արուեստով պրած բանաստեղծութիւնները: Թերեւս: Բայց այդ դէպքում տուեալ քերթուածները աւելի կ'արժէքաւորուեն: Սակայն ոտաջիւղի վերաբերմամբ գոնէ, մենք վըստահ ենք մեր կարծիքի վրայ՝ փաստ ունենալով Արմանտի մի այլ Հայրենասիրական բանաստեղծութիւնը, որ կոչուում է «Սրկիր իմ» եւ ուր ասուած է.

Գիտեմ այլեւս երազ չես անհաս.
Ի՛մն ես, կէսս ես.
Դու կաս, կը մնաս:

Սակայն, ինչպէս ողջ սփիւռքահայութեան, այնպէս էլ Արմանտի Համար Հայրենի երկիրը, նրա կապոյտ երկիրնքն ու ջրերը, լեռներն ու դաշտերը անսնելու, ապրելու, Հայրենակարօտին յազուրդ տալու Համար՝ միայն «երազի թեւերով» պիտի այնտեղ Հասնել.

Երազի թեւով՝ նստած ստուերում՝
Հայրում է հոգիս հեռո՛ւ մի աշխարհ.
Հեռու մի աշխարհ՝ շատ մօտ իմ հոգուն,
Որ ինչքան մօտ է, այնքան՝ ինձ օտա՛ր:

Ու ես տեսնում եմ խիտ մագերով շէկ,
Արեւի պէս տաք, թույս հայի տղան,
Փռել է շուկնը մեր աշխարհով մէկ՝
Մեր արեգնափայլ դաշտում՝ Նայիրեան:

Մի քանի տող յետոյ՝

Ո՛չ մի տեղ չկայ ժպիտն ազգկայ,
Անուշ թախիծով այնքա՛ն թաթաւուն,
Ու վիշտը՝ խոշոր աչքերում նրա,
Օ՛, այնքա՛ն խօսում, ու այնպէս անհուն:
Օտար երկնի շապկ՝ նստած ստուերում,
Հոգուս մէջ բանտած խշշոցը հասկի,
Սառած աչքերս թարթում եմ թարթում,
Ու փշրում է երա՛զն այդ ռսկի:

Ազնիւ է Արմանտի Հայրենասիրութիւնը, որը արտայայտել է նա ուրիշ այլ բանաստեղծութիւններով՝ քնքոյլ ու մեղմիկ նուագներով, Նոյնքան գեղեցիկ պատկերաւորումով է նա երգել Հոգին ալեկոծող,

Վայրկենական հանդիպումից առաջացած սիրոյ դողը՝ եւ իրօ՛ք, ո՞վ էր կեանքում մէկ, կամ մի քանի անգամ իր սրտի եւ հոգու մէջ չէր զգացել վայրկենական այդ հարուածը, որ յետոյ փոխուել է երկարատեւ առաջատանքի եւ հոգին այրող կրակի: Արժանաւոր եւս ապրել է այդ վայրկեանը՝ քաղցրահնչիւն մի ձայնից.

Այնքան անուշ շշշնչաց
էութարացիմ սիւքը մով,
Որ գարթնեց լինը քնած՝
Փշափաղուած ողջ մարմնով:

Ասեղնոտուեց ու դողաց
Լինը հոգուս ցինջ ու խոր
Ու կրկին սառած մնաց
Արբշըրսնեփով հեշտօրօր:

Այնքան անուշ շշշնչաց
Ձայնդ, ձայնդ մեղմօրօր:

Եւ ահա հոգու ստացած այդ դողը դառնում է հրճուանք ու երջանկութիւն, հոգեկան վայելք. իտէ ալիւն մաքուր սէր՝ պահուած իր սրտի թաքստոցում

Պիտի պարուրեմ քեզ հոգուս շղարշի մէջ ոսկեման,

Սրտիս փակով արծաթեայ՝ փակեմ իբրեւ անբաւ գամձ,
Ու պիտի ցոյց տամ ինձ գծրախտ, մինչ պատկերդ անմամձ.
Աչքերիս մէջ՝ պիտ՝ շրջեմ երջանկութեամբ մի անանց:

Գոհ ու երջանիկ է բանաստեղծը իր սիրածով, որովհետեւ ինքը հենց նրան էր փնտռում, որին դուր է.

Այս աշխարհի պարտիզում կան
Մաղիկներ շա՛տ
Ու գոյնզգոյն,
Բայց չգիտես, որ իմ աչքին
Փուշ են նրանք,
Դու՝ Նուռուփար:
Ես մտն եկայ, մտիցն անցայ
Ինչ որ շատ էր,
Ու ինչ որ կար,
Մի անգամ է ըստը ժպտում,
Ու գտայ ես
Այն, որ չկար:

Ահա այստեղ է այդ սիրոյ իրական վայելքը.

Ու հրա՛ջք... ծագկալիթիք այս գարնան
Փազում եմ ողկոյզները բացկլտուն,
Ողկոյզներ, որ հալում են բուրեան,
Բերնիս մէջ՝ խննքօրէն խլրտուն
Ու յեցնում սափարն իմ հոգու՝
Մեզրով քաղցրահա՛մ, քաղցրահա՛մ...

*Այս բանաստեղծութիւնն իր ամբողջութեամբ Արմանտի լուսագոյն գո-
հարներէց է, վերնադրուած «Այգեկութեան»:*

*Մեր խօսքի սկզբում մենք ծանրացանք առհասարակ բանաստեղծի հո-
գին փոթորկող կեանքի այն երեւոյթներէ մասին, որոնք իրենց ամբողջու-
թեամբ խորապէս ազդում են նրա մաքին ու զգացմունքներին եւ իր ներաշ-
խարհում ստեղծում են տեւական վիշտ ու խնդութիւն, ձգտում ու տա-
ռապանք:*

*Բանաստեղծ Արմանտի աչքում Աստծոյ ստեղծած աշխարհն ու կեան-
քը աւելի պայծառ, աւելի շքեղ ու լրիւ պիտի լինէր, եթէ այնտեղ ապրող
մարդը լինէր արդարամիտ, գեղապաշտ, ազնիւ ու ճշմարտասէր: Ուրիշ խօս-
քով՝ մարդը մարդ լինէր, աստուածային սահմանումով, եւ ոչ լոկ ասուն:
Այսինքն բոլոր մարդկանց երջանկութեան, բարօրութեան, ապահովութեան եւ
իրաւունքի պաշտպանութեան համար մարդը մոռանար իր ճեւճը եւ ձուլուէր
ու կապուէր հանրութեան շահին. հարկ եղած դէպքում նոյնիսկ ժպիտը դէմ-
քին մեռնէր հանուր մարդկութեան բախտաւորութեան համար:*

*Մարդու պարտականութիւնն է այս աշխարհում պահել, պաշտպանել,
երկրպագել բոլոր գեղեցկութիւնները եւ իր հերթին ստեղծել գեղեցկութիւն-
թիւններ, որպէսզի աշխարհը իր հրապոյրը չկորցնի, որպէսզի կեանքը դա-
ժան ու ծանձրալի չդառնայ եւ մահը սարսափելի:*

*Աշխարհի եւ մարդու զոյատեւման միակ հիմքն ու խորհուրդը օրն է,
ասում է Սոկրատէսի բերանով Արմանտը, միթէ նոյնը չի՞ ստել Մեծ Նա-
զովրեցիին եւս՝ «սիրեցէ՛ք զՄիմեանս»: Մակայն Սոկրատի 24 դար եւ Գրիս-
տոսի 20 դար առաջ տուած այս սրբադան պատգամը մարդը մինչեւ այսօր էլ
յուզեց լսել: Կամ լսեց ու մոռացաւ եւ այսօր աշխարհը փլուզումի վտանգի
առաջ է կանգնած, վշտացնելով բոլոր ազնիւ ու հումանիտար սրտերն ու հո-
գիները:*

*Ազնիւ եւ Արմանտի հետապնդած դադափարները եւ զգացմունքները
բիւրեղ:*

*Լինելով մի տանջուած ու անիրաւուած ժողովրդի գաւազ, նա իր ժողո-
վըրդի կրած զրկանքների ու լիկումների համար արիւն ու վրէժ չի պահան-
ջում. նա իր ազգային վիշտը կրող սրտի մէջ մեծ տեղ է տալիս նաեւ համա-
մարգկային վշտին. նրա կարծիքով ամէն ազգ, ամէն ժողովուրդ, ամէն դա-
ռակարգ կը հասնի իր արդար իրաւունքներին, եթէ աշխարհում արդարու-
թիւնն ու ճշմարտութիւնը իշխեն, որոնք, սակայն՝*

Օ՛, աւա՛ղ, աւա՛ղ,
Մնացի՛մ որպէս մեռեալներ անթաղ,
Եւ որպէս լոկ խօսի՛
Որք սէրք անիրք,

Գեղեցկութիւնը մերկ,
Ճշմարտութիւնը վեհ, —
Սառուցի վրայ գրուած միայն խօսք:

Մեր դարու Նեւթը, ոսկին իբրև մի զպիղծ վճուկը իբ շոր մասների տակ կործանում ու այլանդակում է ամէն գեղեցկութիւն, ամէն առաքինութիւն եւ կենսաբարձր դարձնում հոտած մի լէշ, որի շուրջ ապրող մարդք ազտաների պէս կուտում ու քղկտում է այն:

Մահայն մարդու եւ աշխարհի այս վիճակը, մարդկութեանը կեղեքող ու շահագործող պիղծ վիռկը, կայսերապաշտական եւ գերակայութեան հասնելու նպատակով անմեղ բազմութիւններ ջնջող կործանարար պատերազմները չեն յուսահատեցնում բանաստեղծին, նա հաւատում է, որ վերջի վերջոյ արդարութիւնն ու առաքինութիւնը պիտի յաղթանակեն կեանքում եւ աշխարհը պիտի աւելի պայծառանայ, քանի որ աշխարհում դեռ շատ-շատերը կան, որոնք իրենց մեղքի, մաքի եւ հոգու ստեղծած գեղեցկութիւնները, իրենց ամբողջ կեանքի տեւողութեամբ, տալիս են մարդուն եւ աշխարհքին եւ իրենք սիրով ու երգով են հեռանում աշխարհից, նրանք լաւ են ըմբռնում կեանքի իմաստը, դրա համար էլ պարելով են մահանում. ահա մի դո՛ւրս:

Հեռու լեռներից հավը վազեց ցած
Ու սուլեց մի երգ մերկութեան մասին.
Թեքեցին իրենց գլուխները թաց
Ծառերն՝ ունկնդիր երգին այդ շատ հին,
Որ ունէր իր մէջ խորհուրդ մի դեղին՝
Լաւ կանչը հոգի...
Եւ օրօրուեցին ծառերն դաշմօրէն՝
Հասունութեան այդ երգին ունկնդիր,
Մինչ տերեւները՝ կարմիր ու դեղին՝
Վե՛ր էլան օդում ու պար բանեցին,
Եւ ապա իբան ցուրտ կրծքին հոգի՝
Դանդաղ, անդադրում:
— Օ՛ր, տերեւները, տելեւները խեղճ՝
Պարելով են միշտ նրանք մահանում...
Ահա նոյնիմաստ երկրորդ դո՛ւրսը, որ առաջինի հետ միասին է սըպուսել ճիւղերի մէջ:

Ահա նոյնիմաստ երկրորդ դո՛ւրսը, որ առաջինի հետ միասին է սըպուսել ճիւղերի մէջ:

Թէ չմանաչես, չես կարող ասել
Թխկեմի՞ է նա, թէ ծառ խնձօրի.
Մերկացել է, տե՛ս, նա մանկամ նման,
Ասես թէ մօրից նոր ծնուած լինի:

Դեռ երէկ էր օր՝
Ծաղկել էր նա նոր
Մի հարսի նման,
Ո՞վ իլեց քոզը նրա կաթնաթոյր,
Մաքրեց սնգոյրը
Այտերից վառման...
digitised by A.R.A.R.®

— Նա գուգուել է արդ
 Շքե՛ղ մերկութեամբ,
 Իր սիրտը տերեւ՝ տուել է հովիւն,
 Թեւերը պարզել արեւի շողիւն,
 Կայտուել է ծամին նրա քակեթել,
 Հայցում է քիչ էլ յամենայ, մնայ,
 Որ պազ մատները մի քիչ տա՛տանայ...
 — Նա գուգուել է արդ
 Անրիծ մերկութեամբ,
 Մրգերը կրծքի պակել է մէկ-մէկ
 Ու մուխել է անցնող աղջկան...

Իր կոչումին հաւատարիմ բանաստեղծը իր մտածումներէ, իր ճարտանքներէ, իր սիրազեղ գգացմունքներէ հեղեղի ճամբին զգում է, որ շրջապատը միանգամայն այն չէ, որին իր հոգին է ձգտում թեւատարած, չկայ ոչինչ պայծառ ու անկեղծ, յառաջադիմութիւն, նորոգուելու ո՛չ մէկ շարժում իրեն շրջապատող միջավայրում, ոչ մէկ հետաքրքրութիւն հանդէպ լուսաւոր խօսքի, կենարար բանի. կայ միայն անօրեայի կաղկանձը ելն: Ահա այդ միջավայրի պատկերը, որ այնքան խօսուն է եւ կատարեալ միանգամայն իր ամբողջութեան մէջ:

ԶԱՆՁՐՈՅԹ

Ահա հացի պատառը նոյն,
 Նոյն սեղանը եւ նոյն մարդիկ,
 Նոյն հոգսերը, նոյն խօսքերը,
 Պառտ ու սին, փուչ ու ձանձր,
 Ժպիտները՝ կեղծ ու դեղին,
 Խնդուփները՝ ստապատիւր,
 Անօրեայի կաղկանձը ելն,
 Հոգեմաշ ու ջղազրգիւ...
 Նոյն հագիւնը՝ յօրանջում,
 Նոյն հոգիները յօրանջում,
 Նոյն սեղանը, նրա վրայ՝
 Սիրտն ու հագիւն այս ողջակէզ.
 Նոյն գէմփերը, եւ նոյն մարդիկ,
 Մարդիկ, մարդիկ՝ պնակալէզ,
 Ահա՛ հացի պատառը նոյն,
 Որ կ'աւտէ՛ ինձ, որ կ'աւտէ՛ քեզ:

Որքան՝ գեղեցիկ է ասուած, եւ որքան հարազատ է պատկերը մեր միջավայրի:

Եզրակացնելուց առաջ ասենք, որ մենք մեր այս ամփոփ խօսքը Արմանաի բանաստեղծութիւնների մասին հիւսել ենք՝ «Արդի իրամասնայ գրողներ»-ի, «Բագիւն»-ի եւ մի քանի տարեգրքերի եւ այլ ժողովածուների մէջ

տղագրուած կտորներէ ընթերցումով: Նրա 30 տարուայ զբաղանքներէն է-
ջերում անշուշտ կարող են լինել թոյլ ու զանցառելի կտորներ, սակայն ա՛յն,
ինչ որ մենք մեր տրամադրութեան տակ ունեցանք, բոլորն էլ գողտրիկ էին
ևւ զբաղան տեսակէտից անթերի: Մենք յոյս ունենք, որ իր ժողովածուն
կազմելիս մենք բժանդարութեամբ կը կատարէ իր ընտրութիւնները:

Այժմ որպէս եղբակացութիւն տանք, որ Արմանալ տաղանդաւոր է-
րապաշտ բանաստեղծ է. իր ստեղծագործութիւններէ մէջ իմաստն ու զգաց-
մունքը տեղ են գտել հաւասարապէս եւ ձուլուել են իրարու մէջ զեղեցիկ
պատկերաւորութեամբ, փոխաբերութիւններով ու փոխակերպութիւններով:
Իր երգերը հողորդական են եւ նրանցից շատերը համամարդկային արժէք
ունեն, մասնաւորապէս «Սոկրատեսի մահը» բալլադը:

Իր լեզուն հարուստ է, սահուն եւ պարզ ու յստակ միանգամայն:

Ունի ինքնատիպ ու զեղեցիկ ոճ, որով այնպէս սիրուն տարազաւո-
րում է իր մտքերն ու յոյզերը:

Արմանալը իր տաղանդի հասունութեան շրջանն է ապրում. այդ են
ցոյց տալիս իր վերջին շրջանում գրուած բանաստեղծութիւնները:

Մենք շատ սպասելիքներ ունենք մեր սիրելի բանաստեղծից:

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ





«...Առանկ կամ մուգ ընկերվա-
րակամ երկիրներու, ինչպէս մաքւ գը-
րամատիքական երկիրներու մէջ, գու-
վարանուրեան մեծ Լեւինը եւ ուրիշ
մեծեր, որոնք, իրականութեան մէջ,
կէս դարու ընթացքին ո՛չ միայն չկըր-
ցան իրականացնել ընկերվարութիւնը,
այլեւ յարգեցան իրականացնել պատ-
մութեան ամենէն գարնորելի բնա-
տիրութիւնը»:

ՓՐԱԿԱՅԻ ԳԱՐՆԱՆ ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԵԼԻՅՑ

Ընթացիկ ամսոյն 21ը ոսւս եւ վարչախոյ սխաթ սնդամ երկիրներու բանակե-
րուն կողմէ Չեխոսլովաքիա կատարած ներխուժման տարեդարձն էր, «Փրակայի գարնան»
երկրորդ տարեկիցը, որ աշխարհի ազատ մտաւորականութեան կողմէ նշուեցաւ դարձեալ,
նէշխուժումն ու անոր հետեւածքները մեկնարանող լայն արձագանգներով:

Երկու տարի անցած է շարադիս այդ դէպքին վրայէն, բայց հարուածը չէ ուղի-
ցած ու աշխարհի մտաւորականութեան խիղճը դեռ կը շարունակէ տանջուար մնալ: Փրա-
կայի դարունը գարնանային յոյս մըն էր համայնաւոր սահմաններուն մէջ սահմանափակ
պատուութեանը ազդող ժողովուրդներուն եւ անոնց հակասազբող շահաբոյր մարդոց հա-
մար, բայց չորդրոված ամբողջովին խամրեցաւ կարճիկ կայսերապաշտութեան կրօնկեն-
քուն տակ, միանգամայն մթազնելով Ստալինեան մուսլին լաշերող համեմատական հեռա-
նկարները:

Կարճիկ ներխուժումը համահարակի մը պէս կազմաւունեց ողջ Չեխոսլովաքիան,
մեկուսացուեցաւ համայնաւորութեան ժողովային դիմադրի մը տալու հրամայականը ազ-
րող շեկովար տարըը, հալածուեցան կամ երկրէն իտոյս տուին հայրենիքին բովանդակու-
թիւն տուող մաքի ներկայացուցիչները, տհաքիկ եղաւ երիտասարդութիւնը, ամէն ինչ հար-
ւածուեցաւ, բայց հարուածողը բան մը չլահեցաւ նաեւ ինք, ընդհակառակն, նոյնքան մեծ
եղաւ իր կորուստը, կորսնցուց ճիւնհալցի տարիներուն շահած իր վարիչը, իր մտաւ-
րականութեան երէտատարը խաւին նպատար, արտասահմանի իր ընկերներուն վտանգութիւնը
ու համարումը բազմաթիւ մեծանուն մտաւորականներու, որոնք հակառակ իրենց ծախա-
կողմեան հակումներուն, սեխնայրէն կը ձայլէին այսօր Չեխոսլովաքիան բնադարաւող իր-
րովորանները:

Օրինակ մը տալու համար՝ յիշենք Փան Փոլ Սարթրը, որ չեխ գրող Ամթոնէն Լիէ-
մի Վերնէ սերունդն անուն հատորին «Ընկերվարութիւնը, որ կաւ զայ ցարտուն» խորագըր-
ւած յառաջաբան մը գրեց եւ հատորին մէջ կատարուած արտահանադուժները իւրացնելով
ընթերցողին ուշադրութեան յանձնեց այն, որ ճեմնում իրապաշտութեան՝ կ'արգիլեն մեզի
իրականութիւնը մկարագրել, յանում երիտասարդութեան՝ կ'արգիլեն երիտասարդ ըլլալ եւ
յանում ընկերվարական արախութեան՝ կը մզնն մոյնիմէն արայտութիւնը:

Համախարհային հռչակ վաշխող Քատերապիը Իոնեսքոյի կողմէ ստորագրուած հե-
տադայ գրութիւնը՝ առեւի՛ր ամբողջական զաղափար մը կու տայ Չեխոսլովաքիոյ դէպքին ա-
ռիթով ապրուած ընդհանրական վրդովմունքին մասին:

Ձ Ե Խ Ո Ս Լ Ո Վ Ա Ք Ի Ա ՞ Ն Ե Ի Բ Ո Պ Ա Յ Ի Մ Ի Ա Կ Ե Բ Կ Ի Բ Ը, ՈՐ ԱՐԺԱՆԻ Է ԻՐ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ




Մտաւորապէս տարի մը եւ մէկ ամիս առաջ, ամբողջ աշխարհի օրաթերթերը, շաբաթաթերթերը, հանդէսները, ձայնասփիւռի եւ հեռատեսիլի կայանները կը տօնէին ռուսական յեղափոխութեան յիսնամեակը: Կը տօնէին ճորհրդալիկ Միութիւնը: Ի՞նչ յօդուածներ, ի՞նչ ուսումնասիրութիւններ, ի՞նչ խանդավառ ու շողոմ գովարանութիւններ:

Գովեստներու համանուագ մը կամ աղմկարար ժխոր մը: Մարքսիստ եւ ոչ-մարքսիստներ, խմբաչիրներ, գրողներ, արուեստագէտներ, քաղաքագէտներ եւ վերջապէս ամէն ոք Ֆրանսայի, Ամերիկայի, Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ, Պրազիլիոյ եւ Քուպայի մէջ, առաւել կամ նուազ ընկերավարական երկիրներու, ինչպէս նաեւ զբամաստիական երկիրներու մէջ, զօղաբանութեան առարկայ էր մե՛ծ Լենինը եւ ուրիշ մեծեր, որոնք, իրականութեան մէջ, կէս դարու ընթացքին ո՛չ միայն շիրջան իրականացնել ընկերավարութիւնը, այլև յաշոյրեցան իրականացնել պատմութեան ամէնէն զարհուրելի բռնաստիութիւնը: Յիսուն տարուան ընթացքին, պատերազմներ, ջարպեր, ճշտումներ եւ բանտեր, կեդրոնացման ջամբարներ եւ աշխարհակալութեան պատրաստութիւններ: Հազիւ թէ քանի մը տուլ զբաժնեմ՝ յայտնելու համար իրարանցումս աշխարհի կուրացումին առջեւ եւ քսելու համար իրականութիւնը, ինչպէս պղտիկ մը, որ կը համարձակի պոռալ: «Թագաւորը մերկ է»:



Բայց իրապէս ի՞նչ կրնայի ընել, ո՞վ կրնար հաւատալ ինծի կամ ո՞վ կ'ուզէր հաւատալ: Ի՞նչ կրնանք ընել պարտադիր կուրացումին դէմ, կամաւոր կուրացումին դէմ:

Եւ սակայն, կարգ մը արեւելեան երկիրներէ կու գային մարդիկ՝ դըրողներ, գիտուններ եւ արուեստագէտներ, որոնք կը փորձէին ըսել արեւմտեան մտաւորականներուն, որ իրենք կ'ապրին սարսափի, արտաոց սուտերու եւ զօրախտութեան երկրի մը մէջ: Աւա՛ղ, անոնք կը բախին ձախակողմեան բոլոր մտաւորականութեան յամառ անհասկացողութեան, այսինքն՝ արեւմտեան աշխարհի գրականութիւն մշակող բոլոր աններուն: Վկաները, որոնց կը մերժենք հաւատալ եւ որոնք թերեւս պիտի ուղէին որ միայն հաւատանք իրենց, կը վերադառնային յուսահատ կամ չէին վերադառնար: Բայց արեւմտեան երկիրներու մէջ, ուր իշխանութիւնները՝ հակառակ ամէն բանի՝ կողմնակից ընակութեան արտօնութիւն, անոնք չէին համարձակեր շատ երեւիլ, ոչ քչ շատ խօսիլ, որովհետեւ մարդիկ զիրենք կը համարէին դուռնականներ: Ձո՛հ զբազմութեան կամ վարչակարգի բռնութեան՝ հո՛ր, արեւոյ



մուտքի մէջ, անոնք կ'ըլլային զոհերը ընդգիմադրութեան շատսխտաներուն եւ միւսներուն կողմէ կ'արժանանային միայն կասկածոտ չկողքութեան մը:


«Կ'ապրի՛ք ընկերվարական երկրի մը մէջ եւ տակաւին գոն չէ՛ք: Ուզածնիդ ի՞նչ է տակաւին, — կ'ըսէին իրենց, — կը կարծէ՞ք, թէ դրամատիրական վարչակարգը աւելի լաւ է: Հոս ալ, մեծ գերծ չեմք գրաքննութեմն եւ քննութեմն»:

Եւ արեւելքէն եկող այս մարդիկը, որոնք դիտէին, թէ ինչ կը նշանակէր բռնութիւնն ու ճնշող վարչապետութիւնը, չէին յաջողեր ըմբռնել, թէ իրապէս բռնատիրութիւն գոյութիւն ունի իրենց այցելած կամ բնակութիւն շատատաած երկիրներուն մէջ: Իսոյց այդ բռները ըսելու չէին համարձակեր այլեւս:

Ո՛չ անոնք, որոնք իրենց կեանքին զնով կը ցատկէին Պերլինի պատէն, ո՛չ համայնաժար պաշտօնեաները, որոնք վերադառնալու տեղ անձնասպան կ'ըլլային, ո՛չ իսկ զիրքերը, վաւերաթուղթերը, ո՛չ Ստալինի աղջկան, Էօֆէնիա Կինդպուրկի եւ ուրիշներու բողոքները, ոչ ալ բանտարկուած ուսուցողները հաշուի չէին առնուեր: Պերլինի գործաւորներուն դէմ ուսուցողական յարձակումը, Հունգարիոյ հարցը եւ բազմաթիւ այլ հարցեր մտցըած էին: Իրականութեան մէջ, արեւմուտքի քաղցնիները իրարու մէջ մաքրելիք հաշիւներ ունէին, փոխադարձաբար կ'ատէին զիրար եւ զիրար ատելու այս կիրքը շատ մեծ էր, շատ կարեւոր, շատ ժամանակ առնող, ա՛յնքան, որ մենք ուշադրութիւն չէինք ընել իսոյց իրական դժբախտութեան: Ես լսեցի այդ ուրիշներուն վկայութիւնը, փորձեցի փոխանցել զայն շուրջիներուս — խենթերը կարծեցին, թէ ե՛ս եմ խենթը:

Մական մարդիկ յատկօրէն տեսած էին այս բոլորը, հրէշայնութեան դէմ ձայներ բարձրացած էին, մեծ միտքեր՝ ինչպէս Անտրէ Պրեթոն, կամ Անտրէ Ժիտ, Մունիէ, կամ Փանայիթ Սթրաթի փորձեցին լուսարանել մարդիկը: Ասոնց կարգին նոյնը ըրին եւ ուրիշները:

Իսոյց այն չափով, որ դժոխքը կը տեղաւորուէր, այն չափով, որ դժոխքին ուժը աւելի կը մեծնար, այնքան աւելի ահուկի կը դառնար անիկա եւ միտքերը այնքան տեղի կու տային: Աղէտը կը դառնար պատմական անժրեօտելի իրողութիւն մը, որ կը շարադիւթէր: Պէտք էր քայլ պահել ժամանակին հետ, պատմական առումով, կարծէք յեղափոխականները իրենք սկզբնա-



կան շրջանին պատմութեան ընթացքին դէմ չէին քալած: Դաւիճները կը գառնային բարերարներ, այսինքն՝ վախը կը վերածուէր սքանչացումի: Անկէ ի վեր, Գրաւչենքո կամ Քէօսիչք եւ կարգ մը ուրիշներ, որոնք մասնաւորապէս կ'ընչած էին համայնապարտութիւնը, շոշորթներու, կոյրերու, տկարամիտներու, ամբողջ աշխարհի ձախակողմեան վատ մտաւորականներուն եւ գրական սպասաւորներուն կողմէ յորջորջուեցան շոշորթներ: Ուրիշներ, ինչպէս Ալպէր Քամիւ, որուն անկեղծութիւնը չենք կրնար կասկածի տակ առնել, համարուած էին միջակութիւններ, կոյրեր՝ կոյրերու կողմէ: Ալպէր Քամիւն, իրականութեան մէջ, պայծառատես միտք մըն էր: Ուղղափառ միտքը, այնպէս՝ ինչպէս նկարագրած է զայն Ժան Կրլընիէ: Այսպէս՝ մտաւորական համակերպումը կը շահէր ամբողջ գեոգրիը:

Անշուշտ, սկսան յարձակիլ Ստալինի վրայ, բայց միայն ա՛յն ատեն, երբ ուռւ գեկափարնները արտօնեցին, որ յարձակումի ենթարկուի բռնակալը: Այս մտաւորականներէն ո՛չ ոք պիտի յանդիմանէ ըսել թառ մը, ասանց այս արտօնութեան:

Այսօր, կը թուի, թէ Չեխոսլովաքիոյ մէջ կատարուած ուռւական ներխուժումէն ի վեր, չարդարացած եւ չարդարացող ներխուժում մը, արեւմտեան երկրամասէն մաս մը՝ կը թօթափէ իր թմբիլը առաւել կամ նուազ չափով: Թերեւս աւելի նուազ չափով: Արդարեւ, Գերմանիոյ նեղմիտ ուսանողները յանդիմանեցան ըսել, թէ ուռւերը կը պաշտպանուէին միայն եւ թէ լաւ բրած էին գրաւելով երկիր մը, որ կը քաղցրենիանար: Կը մտածեմ նոյնպէս այն ընդդիմադիր ուսանողին մասին, որ ամբողջ Մալիս ամիսը բողոքելէ ետք, Անգլիա կ'երթայ՝ արձակուրդի, բնականաբար հօրը դրամով, եւ հոն լաւ չի հետեւիր զէպերուն: Վերագարծին, հայրը տեղեակ կը պահէ դինք Չեխոսլովաքիոյ ղէպերուն մասին: Երիտասարդը չի դարմանար, այլ իրաւունք կու տայ ուռւերուն:

Ուրիշ երիտասարդ մը, որ կը բնակի Փարիզի ամէնէն կոկիկ թաղամասերէն մէկուն մէջ, գեղեցիկ յարկաբաժին մը, ուր սենի Գէվարայի, գէնքով մարդուն եւ պատմութեան շարագործներուն՝ Մարքսի, Լենինի եւ այլոց նկարներով զարդարուն սեփական սենեակ մը, մարդիկ, որոնք զազազած

թշնամիներն են սպառող գասակարգին, հակառակ ասոր, այդ երիտասարդը կ'երթայ Սէնթ Քրոփէշ, իր անձնական ինքնաշարժով եւ շատ վառելիքով՝ սպառելով: Փարիզ վերադարձին, կը յայտարարէ, թէ չեխոսելովաքեան հարցը դինք չի հետաքրքրեր: Կարճամարտէ չեխերն ու Ձեխոսելովաքեան, որ վստահարար, իմ կարծիքով, Եւրոպայի միակ երկիրն է, որ արժանի է իր անկախութեան: Բայց երիտասարդ պարոնը փորի ուրիշ ցաւ ունի, ուրիշ մարդիկ՝ նախատելու համար:

Կայ անշուշտ հակազդեցութիւնը գրողներու եւ խմբագիրներու, որոնք քիչ մը ամէն տեղ, կը բողոքեն եւ յայտարարութիւններ կ'ընեն՝ զարմանք պատճառելով ինծի. ա'նոնք, որոնք անցեալ տարի կ'երդէին գովքը սովետական բռնութեան եւ սովետ կայսերապաշտութեան կէս դար տեւող ջարդերուն:

Ամէն պարագայի, բողոքները շատ ուշ կը հասնին: Մեզի կը յայտնէին, թէ Ռուսիան պաշարուած է անո՛վ, զոր կը կոչենք ամերիկեան կայսերապաշտ ուժ: Ռուսիան էր, որ պոռոց պաշարուժը եւ մեզի ուրիշ ջան չէր մնար անշուշտ, եթէ ոչ հաւատալ:

Հիմա ուսեհրն են, որ կը պաշարեն մեզ: Անոնք Սկանդինավիոյ հիւսիսն են, Անգլիոյ բացերը, Հնդկական ովկիանոսին մէջ, Ալեքսերիոյ մէջ, Միջերկրականի մէջ, Գերմանիոյ մէջ, Գերմանիոյ սահմաններուն վրայ են եւ լաւ գիտուած: Հակազդեցութեան համար շատ ուշ է այլ:

Ձեխոսելովաքիոյ տիւր պարագան պիտի մոռցուի, ներուի, արդարացուի, գովարանուի, սքանչացումի առարկայ դառնայ:

Ռուսիոյ մը առջեւ, որ կը փաստէ իր լրբութիւնը, իր հսկայ ուժը, այսօրուան առարկողները պիտի խոնարհին, պիտի համամիտ գտնուին, եւ վաղը՝ պիտի պաշտամունքի գան:

Շատ ուշ է հակազդելու համար: Մինչ մեր մօտ երիտասարդ եւ նուազ երիտասարդ քաղցրեհիները կը զուարճանան յեղափոխութիւն խաղալով, Ռուսիան իրենց համար կը պատրաստէ ապագան:

Ես կը մերժեմ, թերեւ, շատ բան այն բոլորէն, զորս ընդգիծագիրները կը մերժեն, բայց ես կը մերժեմ մանաւանդ ընդգիծագիրները, ընդգիծագիրներուն ետախրութիւնը, անդամութիւնը, մարդկային միասնականութեան պակասը, բռնափրութեան իրենց գիտակից կամ անգիտակից ճաշակը, քանի որ իրենք կը պատրաստեն զայն. ճնշումը պիտի զայ, զանգուածօրէն եւ գուրսէն:

Եթէ ո՛չ մէկ յարգանք ունիմ արեւմուտքի գրականութիւն մշակողներուն հանդէպ, ունիմ սակայն տխրութեամբ եւ անձկութեամբ լիցուն շատ մեծ յարգանք մը ինչոտանի, Ձեխոսելովաքիոյ գրողներուն, արուեստագէտներուն, բողոքողներուն հանդէպ, հանդէպ ա՛յն հերոսներուն կամ մարտիրոսներուն: որոնք բանտարկուած են Ռուսիոյ մէջ յանուն սիրոյ, հաւատարմութեան, իրաւ արդարութեան, եւ ես կը մերժեմ արեւմուտքին տալ ասոնց անունները:

Շատ ուշ:
 Թերեւս ոչ: Բայց պէտք է սպասել ուստ նոր սերունդի մը. պէտք է սպասել, որ իրենց ինձախայթն ու ամօթը դան ապագայու սովետական վարչակարգն ու իր բռնակալները:

ԷՊՏԷՆ ԻՈՆԵՍՊՕ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

ԱՆԾԱՆՕԹ ԿՈԳԻՆԵՐ

(Պատմումաժ քննիչ)

380 էջ, ընտիր բուլք, մաշուր տպագրութիւն,
գին՝ 7 լ. ոսկի, Ամերիկա՝ 5 տոլար:

ՍՏԱՆԱԼԻ ԶԱՄԱՐ ԴԻՄԵՆՆԻ

«ԲԱԿՈՆՏԻ ԽՃՔԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՎ ՀԵՂԻՆՈՒԿԻՆ՝
JACK KARAPETIAN
10608 Margate Road
Silver Spring, Maryland 20901
U. S. A.

ՇՆՈՐԶԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ, Երաստրակաւքիւն ձեպէլ-Մուսա-
յի Հայրեմակցական Միութեան, Պէյրութ, 1970

ՅԻՇԱՏԱԿԻ ԵՎԼԻԿՆԵՐ (Բանաստեղծութիւն), Արտաշէս Իսրայէլ-
եան, Պէյրութ, 1970

Տպարան ԶԱՄԱՐԵԿՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՒԵՆԳԻՆ

ԼԻՅԱՆԱՆ	22 Լ. ՌՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	8 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2 Լ. ՌՍԿԻ



Վարչութեան հասցէ--
G. SASSOUNI
Rue Sélim Boustani,
Beyrouth - Liban